Տըր դատ էր որ դի խոս բով թա գա ւո բին․ եր բոր հայ րը ըս պան վէ ցաւ՝ փա խաւ հըռոմ․ ուր մե ծա մեծ քա ջու թեամբ պը սակ վէ ցաւ թա գա ւոր, ու դը նայ տի բեց հայ ոց․ եր բոր նա հա տա կեց հը ռի փի սի մէ կոյ սը, պա տու հա սե ցաւ խո զա դէմ կեր պա րան քով․ բայց քոյ րը խոս րո վի դուխտ տե սիլ քով հա նել տը վաւ խոր վի րա պէն լու սա ւո րիչն ու մը կըր տե ցան ա մէն քը ան թիւ բազ մու թեամբ, մին չեւ ե րեւ ցաւ լու սե ղէն խաչ․ իսկ տըր դատ յո հան նէս կոչ վե ցաւ ու լու սա ւոր չայ գոր ծա կից ե ղաւ զար մա նա լի ո̃ւծ պաշ տու թեամբ․ եր բոր ծե րա ցաւ ա ռանձ նա ցաւ սե պուհ լե ռը կը ճըր գնէր․ իսկ իշ խան նե րը բե րել տը վին ղինքն որ նո րէն նըս տի․ եր բոր չի կե ցաւ՝ թու նով մե ռու ցին ։

Տըրդատ կասէ թէ՝ շատ բաներ տեսայ ,
չնորհօքն աստուծոյ՝ լուսաւորեցայ ․
զանցաւոր թագս իմ՝ ձգեցի ելայ ,
երկնաւոր թագին՝ վերջապէս հասայ ։

### Ր․ ր․ ւ․

Րու սի նոս կամ ռու սի նոս էր հայ ոս տան ցի կը րօ նա ւոր, որ ջեր մե ռան դու-

թեամբ և ա՛ծ պաշ տու թեամբ կը ծա-
ռայ էր եղ բարց , և այն չափ խո նարհ ու
հո գե սէր էր , որ յայտ նեց աս տուած ա-
նոր սըր բու թիւ նը մի ա բան նե րուն .
ուս ա ի եր բոր ըս կը սան զին քը փա ռա-
ւո րել . ո րո շեց որ փախ չի եր թայ ծա-
ծուկ ա՛ծ պաշ տու թիւնն ա նէ . ի մա ցան
ըն կեր նե րը վան քին դը ռը նե րը փա կե-
ցին . սա կայն բու սի նոս խա չա կըն քա-
ծին պէս մէ կէն դը ռը նե րը բաց վե ցան .
ու գը նաց սըր բու թեամբ ծա ռայ եց ա՛յ
ա ռանձ նու թեան մէջ ։

Բուսինոս փախաւ՝ մարդկային փառաց,
խոնարհ յիսուսի՛ նը Ճամբան գնաց .
դուն ինչո՞ւ հպարտ՝ գեշ Ճամբայ կերթաս,
որ քիչ ատենէն՝ հող պիտի դառնաս ։

## Ց · ց · դ ·

Ցը րու մըն աղ գաց ե ղաւ , եր բոր մար-
դիկ շատ ցան հայ աս տան և ե լան գը նա-
ցին պաղ տա տու քով մեծ աշ տա րա կը շի-
նել ու զե ցին . բայց ա՛ծ բար կա նա լով
յան կարծ մէկ փո փո խու թիւն մը ե ղաւ ,
ու ա մե նուն ալ լե զուն փոխ վե ցաւ . ա-
նանկ որ ի րա րու խօսք չի մա նա լով ցըր-
վե ցան այլ և այլ եր կիր ներ ու զա նա զան
ազգ ե ղան , որ օ րի նակ էր յո՛ի ա շա կերտ-
նե րուն . ո րոնք վեր նա տան մէջ հոգ ւով
սըր բով լեց վան , ու մէ կէն ա մէն լե զու
ըս կը սան խօ սիլ . և ան կէ ե լան ա մէն

աշ խարհ ցըր վե ցան ու քը րիս տո նէ ու-
թիւ նը հաս տա տե ցին ։

Ցրվեցան մարդիկ՝ մեծ աշտարակէն,
խառնեցաւ պատժով հնամեղ լեզուներն .
Ջանամ որ գործես՝ ըստ կամաց փրկչին,
ոչ աջ խոտորիս ոչ ահեակ կողմն ։

## Ւ. ւ. —.

Ւիւ սի քոս կամ հիւ սի քի ոս էր ան ուա-
նի զին ուոր մաք սի մի ա նո սի · որ քը րիս-
տո նէ ու թեան հա մար ձը գեց զին քը
պա տու ւէն , ու ա նարգ հա գուս տով ա ղա-
խին նե րուն կար գը դը րաւ , որ ծա ռա-
նե րուն հետ աշ խա տի · յե տոյ կան չեց
առ ջին ու ե րե սը տը վաւ այն նա խա տին-
քը և առ ջի պա տի ւը · խոս տա ցաւ հիւ-
սի քո սի նո րէն պատ ւե լու , թէ որ եր-
կըր պա գէ կը ռոց · բայց սուր բը ար հա-
մար հեց չի հա ւա նե ցաւ կայ սեր · ուս-
տի բար կա նա լով վի զը քար կա պել տը-
վաւ՝ գե տը ձը գեց ։

Ւիւսիքոս ասէ՝ խմէ խըրատ մը ,
հոգուդ ճրագը՝ աղէկ պահէ վառ .
ինչ տեղ որ ըլլաս՝ ա̄ծ մի մոռնար ,
յիսուսի խաչը համբերութ̄բ տար ։

## Փ. փ. ։.

Փի լի պոս ա ւե տա րա նիչ ա շա կերտ
ըլ լա լով, էր ըն կեր ըս տե փան նո սի
ե օ թը սար կա ւագ նե րուն մէ կը · որ քա-

րո ղեց հը րէ աս տան և սա մա րի ա . նա
և մը կըր տեց է թօղ պա ցի ներ քի նին .
յե տոյ շըր ջե լով ա սխա քա րո ղեց և լու-
սա ւո րու թիւն ա րաւ . մին չև ե պիս կո-
պոս ձեռ նադ րե ցաւ տը րա ղաց ւոց . ուր
շատ չար չա րանք նե րով նա հա տա կե-
ցաւ . որ ու նէր չորս աղ ջիկ կոյս մար գա-
րէ . ինչ պէս մէկն էր եր մո նէ կոյ սը շը-
նոր հա լից ։

Փիլիպպոս ասէ՝ թէ մի ծուլանար ,
վասն արքայութեն՝ ջանա՛ անդադար .
իրիկուն առտու՝ ժամէ մի մնար ,
որ ըլլաս հոգւով աստուծոյ տաճար ։

Ք . Ք . Ժ .

Քա ռա սուն ման կունք են ին քաջ զօ րա-
կանք հայ աս տան ցիք . որ զօ րա ցան հը-
րաշ քնե րով , և յաղ թե ցին թըշ նա մի-
նե րուն . եր բոր է ին սե բաս տի ա՝ դա տա-
ւո րը զի րենք տան ջեց ու բան տը դը րաւ .
ուր ե րև ցաւ ի րենց քը րիս տոս ու քա-
ջա լե րեց . ա պա հը րա ման ե ղաւ որ զի-
րենք ձը գեն սե բաս տի այ ի լը ճին մէջ
սաս տիկ ցըր տին ա տե նը . ի րենց մէ մէ-
կը չի համ բե րե լով ե լաւ լը ճէն գը նաց
բաղ նի քը մը տաւ , որ շի նէր է ին հոն .
եր բոր ըն կեր նե րը լա լով կա զօ թէ ին ,
որ զօ րա նան , զի շե րը եր կին քէն լոյս
ծա գե լով տաք ցուց ջու րը և ի րենց վը-
րա քառ սուն պը սակ ե րե ցաւ . եր բոր

տե սաւ պա հա պա նը ա ղա ղա կե լով
լի ճ՛ն ըն կաւ , թէ ես ալ քը րիս տո նեայ
եմ . միւս օ րը հա նե ցին լը ճէն ու ոս կոր-
նե րը ջար դե ցին , և այ րե ցին ։

Քառասուն մանկունք՝ քեզ խրատ կուտան,
հետևէ՛ սիրով՝ ձայնի փրկչական .
ձգէ՛ այս աշխարհ՝ ձգէ՛ ամէն բան ,
որ հասնիս փառաց՝ ՚մը արքայութեան ։

Եւ. Ե. Ւ.

Եւս տա թէ ոս էր ըստ րա տե լատ այր
բա րե սէր , որ որս գը նա լով տե սաւ եղ-
նիկ մի . եղ ջիւր նե րուն մէջ կար յի սու-
սի խաչ՛ն ու պատ կեր քը լու սա փայլ . որ
ղար հու րե լով եր կըր պա գեց . և ա պա
բո լոր տը նով քը րիս տո նեայ ե ղաւ . որ
յե տոյ շատ մեծ նե ղու թեան մէջ ըն կաւ .
բայց վար մա նա լի համ բե րու թեամբ նա-
րէն վո րա ցաւ , և փա ռա ւո րե ցաւ . մին-
չև ի մա ցաւ թա գա ւո րը ա նոր քը րիս տո-
նէ ու թիւնն ու նա հա տա կեց բո լոր տը-
նով մը ։

Եւստաթէոս մեծ՝ ազնիւ բարեսէր ,
ասէ՛ յաղթեցի՝ դիւաց և կայսեր .
յիսուսի խաչը՝ առի ինձ սուսեր ,
և համբերութեամբ՝ եղայ երկնից տէր ։

Օ. օ. օ.

Օք սեն տի ոս , կա մաւք սեն տը էր սըր-
բա կաց քա հա նայ ըն կեր եւստ րա տի ոս

վը կա յին . ա սոնք է ին հինգ , որ շատ չար-
չա րանք նե րը քա շե ցին կը ռա պաշտ նե-
րէն . բայց ա մե նէն ա ռաջ սուրբ օք սեն-
տի ոս նա հա տակ ե ղաւ սը րով . և եր բոր
գը լու խը կըտ րե ցին՝ մե կէն ա նե րև ոյթ
ե ղաւ . յե տոյ գը տան ծա ռին վը րա . որ
յայտ նե ցաւ ագ ռա ւին ձայ նէն ։

Օքսենտիոս քաջ՝ տուաւ իւր մարմին ,
հոգին ազատեց՝ վերացաւ յերկին .
Թէ հոգիդ Թողուս՝ մարմնոյդ հետևիս ,
հոգւոյդ և մարմնոյդ ես զիւրաց բաժին ։

## Փ. Փ. փ.

Փո տի նա կամ փո տի նէ , այս ինքն լու-
սե ղէն . եր կի նըն սա մա րա ցի , որ սի-
քար քա ղա քին ջըր հո րին քով խօ սե ցաւ
յի սու սի հետ , ու հա ւա տաց . մին չև ե-
ղաւ պատ ճառ քըր իս տո նէ ու Թե ան սա-
մա րա ցոց . որ համ բարձ մա նէն ե տև մը-
կըր տե ցաւ պետ րոս ա ռա քե ա լէն . և
ա նոր հը րա մա նաւ գը նաց Թու նու զի
եր կի րը քա րո զեց քը . եր բոր դար ձաւ
ե րու սա ղէմ՝ հը րէ ա նե րէն հա լած ւե-
լով գը նաց հը ռոմ . ուր նե րոն Թա գա-
ւո րը շատ տան ջեց զինքն ու բան տը դը-
րաւ . որ ու նէր շը նոր հք բը ժըշ կու Թեան
ա չաց . շատ հը րաշ քը նե րէն ե տև մե ռաւ
բան տին մէջ . նոյն ա տե նը նա հա տա կե-
ցան ի րեն եր կու որ դին՝ յով սէ և վիկ-
տոր ։

Փօտինա՛ որ կին՝ կասէ՛ որ տարէ,
յիսուսին սէրը՝ սրտիդ մէջ վառէ.
ամէն հալածանք՝ նոյն սիրով քաշէ,
անճառ փառքերով՝ միշտ փառաւորէ։

# Լ. ԴԱՍ

## ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԵԱՑ

### Ա. ա. ա.

Այբն է առաջին գիր հայոց, որ իրեք սիւնով մը օրինակ է սուրբ երրորդութեան. առջի սիւնն է օրինակ հօր աստուծոյ. երկրորդ սիւնն է օրինակ որդւոյն աստուծոյ. իսկ երրորդ սիւնն է օրինակ հոգւոյն սրբոյ. և ինչպէս որ իրեքը մէկ տեղ մէկ այբ է՝ այսպէս ալ իրեք անձը հայր՝ որդի՝ հոգի՛ն որ մէկ ա̃ծ է։ Ահա այս օրինակը մեզի կը սորվեցընէ, թէ անուամբ սուրբ երրորդութեան մըկըրտած ըլլալով սըրտով պաշտենք և երկիրպագանենք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Այրն առաջ քեզ՝ խրատ կուտայ ,
սորվիս չըլլաս՝ անգէտ տըղայ .
իրեք սիւներն՝ իմաց կուտան ,
Թէ հաւատա՛ երրորդութեան ։

## Բ․ բ․ բ․

Բա նա կան կաս վըն ա նո՛նք , որ բան և միտք ու նին . ինչ պէս են հը րեշ տակք և մար դիկ . բայց հը րեշ տակ նե րը պարզ հո գի ու միտք են . իսկ մար դիկ բա նա- կան հոգ ւով և մարմ նով ե ղած են . հո- գին ո չըն չէ ըս տեղծ ված է ան մահ՝ ա- զատ՝ և ի մա ցող . ա նոր հա մար կը կոչ- վի պատ կեր աս տու ծոյ ։ Ահա այս պատ- ճա ռաւ պար տա կան ե ղաւ մարդ որ բա- նա կան վար վի քա ղա քա վար պար կեշտ խո հեմ և մի ա բան , չէ թէ ան կիրթ , ան ու սում , և ան պար կեշտ ան բա նի նը ման ։

Բենըրն կասէ՝ բանական ես ,
չըլլաս անուս՝ անբանի պէս .
բարի գործոց՝ թէ հետևիս ,
բարեպաշտօն՝ գիտուն լինիս ։

## Գ․ գ․ գ․

Գիրն է գիծ նը շա նա կող ձայ նի , որ ի բա րու հետ կայ պե լով կամ հե գե լով կը յայ տնէ մըտ քին մէ ջի բա նը . և այս- պէս խօ սե լա ցի մար դիկ ի րենց մըտ քին ի- մաս տը դը րի տակ առ նե լով կըր նայ

գիրք ․ և հե ռու են ի րա րու գը րե լով
կըլ լայ թըղ թա գրու թիւն ։ Իսկ թէ որ
բա ռե րուն որ պի տու թիւ նը և կա նո-
նով ի րա րու քով շար վի լը գըր վի՝ կըլ-
լայ քե րա կա նու թիւն ․ և ե թէ գե ղե-
ցիկ բա ռե րը վար պետ ձև ով և կա նո-
նով շար վին ու գըր վին՝ կըլ լայ ճար տա-
սա նու թիւն և բա նաս տեղ ծու թիւն ․
իսկ թէ որ ու սում նա կան բա նե րու վը-
րա պատ ճառ նե րով շա րադ րու թիւն
ըլ լայ՝ կըլ լայ գի տու թիւն , և ի մաս-
տու թիւն ։ Հին ա տե նը չի սոր ված մար-
դը մարդ չէ ին սե պեր , այլ ա նա սուն կը
հա մա րէ ին ։

Պէ՛մ գրոց՝ աշակերտիս ,
գիշեր ցորեկ՝ ասէ սերտիս ․
գիտութեան համ՝ թէ քեզ բերիս ,
գերազանց մարդ՝ պիտի սեպվիս ։

Պ․ Դ․ Տ․

Պը րախ ման էր զար մա նա լի գե ղե ցիկ
պար տէզ մի հայ աս տա նու մէջ էր ղը րու-
մայ կող մը ․ ուս կից կել լէն դը րախ տին
չորս գե տե րը ․ հոն ոչ հի ւան դու թիւն
կար և ոչ մահ ․ ոչ ցաւ , ոչ նե ղու թիւն ․
էր բոր մարդ ծե րա նար՝ կե նաց ծա ռին
պը տուղն ու տե լով կը նո րոգ վէր ․ ա-
դամ և ե ւա ա սանկ եր ջան կու թեան մէջ
է ին ․ մենք ալ ա նոնց նը ման պի տի ըլ-
լայ ինք , թէ որ աս տու ծոյ պատ ւի րա նը

չի կո խէ լին ու ար գե լած պը տու ղէն չու-տէ լին ։ Այս պէս եր բոր պատ ուի րան նե-րը լաւ պա հենք իբր թէ դը րախ տին մէջ եր ջա նիկ կըլ լանք շը նոր հօքն ա̃յ ։

Պան խրատէ՝ թէ լաւ ըլլաս ,
դրախտին մէջ՝ ապրած կըլլաս .
որպէս ադամ՝ հօն ցաւ չունէր ,
ամէն բարեաւ՝ երջանիկ էր ։

## Ե. Ե. Ե.

Եր բոր դու թեան խոր հուր դը թէ պէտ մըտ քէ վեր է ու խել քը չի հաս նիր . բայց ի մաս տուն նե րը ա րե գա կը օ րի նակ կը բե րեն . ինչ պէս որ ա րե գա կը մէկ է , և ու նի լոյս ու տա քու թիւն ան բա ժա-նե լի ի րեն մէ . այս պէս աս տու ա ծայ ին է ու թիւ նը մէկ է , և ան ձե րը ի րեք . զի հայր ա̃ծ իբր ա րե գա կը ու նի բան կամ ճա ռա գայթ . որ է որ դին ա̃ծ . հայր և որ դի ու նին սէր իբր տա քու թիւն ա-րե գա կան , որ է հո գին ս̃բ . ո րով կը մը-կըր տինք և կը դա ւա նինք . ինչ պէս որ կը դա ւա նի ս̃բ ե կե ղե ցին . ո րուն հը-նա զանդ պի տի ըլ լանք աս տուած պաշ-տու թեամբ , և պատ ուի րա նա պա հու-թեամբ ։

Ինչն ասէ ս̃բ՝ եկեղեցւոյն ,
հնազանդ եղի՛ր՝ որդի՛ սիրուն .
հինգ պատուիրանն՝ աղէկ պահէ՛ ,
երեք անձանց՝ երկըրպագէ՛ ։

Զ. Գ. Ղ.

Զըղ ջումն է սաս տիկ ցաւ սըր տի, որ խոս տո վա նո ղը պի տի ցա ւի մե ծա պէս, որ աս տու ծոյ դէմ մե ղան չեր է և պա տու ւի րան նե րը խոր տա կեր է: Քա նի ան գամ որ պա կա սու թեան մէջ կի յ նինք, պի տի զըղ ջանք, և ցա ւինք ու ա ռա ջադ րե լով խոս տա նանք, որ ու րիշ ան գամ չի սը խա լինք: Ա պա ո՛վ որ կու զէ մեղ քէ թե թև նալ և ար դա րա նալ՝ նախ պէտք է ցա ւիլ զըղ ջալ աս տու ծոյ սի րուն հա մար, և ա պա խոս տո վա նիլ Ճըշ մա րիտ ա պաշ խա րու թեամբ:

Զան խըրատէ՝ թէ զօրացիր,
զղջմամբ սրտի՝ զգաստացիր․
զարդուն հոգիդ՝ արդար պահէ,
զարդարելով՝ շնորհօք փայլէ:

Ա. Է. Է.

Աս տու ծոյ ան Ճա ռե լի ա նունն է. Եր բոր մով սէս մար գա րէն ի մա նալ ու զեց ա̃յ ա նու նը, պա տաս խան ե կաւ ամ պէն. Ես եմ որ էն, կամ որ է. Ա հա մեր լե զուին մէջ այս խօս քըս հա մա ռօ տե լով է գի րը դըր վե ցաւ ան Ճա ռե լի ա նու նը յայտ նե լու հա մար. որ է գիր, վանկ, և բառ: Այս ա նու նը ա ւե լի վա յել չա կան է ա̃յ. իսկ մէ կալ ան բաւ ա նուն ներն են նը մա նա կան. սա կայն ա̃յ

յա տուկ ա նուն չի տըր վիր . զի իւր ա-
նուա նը միայն ին քը գի տէ . իսկ եր բոր ա-
դամ ըս տեղծ վե լով Ճանչ ցաւ ա̃ծ՝ ա մէն
բա նէն ա ռաջ ըս տեղ ծո ղին ա նուա նը տը-
վաւ . ո րուն ան Ճա ռե լի ան ւան եր կըր-
պա գե լով պա րապ տե ղը չըլ լայ որ յի-
շէնք ։

Ան ասէ թէ՝ ես եմ աստուած ,
պարգեւատու՝ առաքինեաց .
բարի գործքով՝ թէ աստ ջանաս ,
անդ իմ փառաց՝ տեսող կըլլաս ։

## Ը . ը . ւ .

Ըն կեր սի րու թիւնն է յա տուկ մար-
դուս . ո րով հե տեւ մար դըս ըն կե րա կան
ըս տեղծ վե ցաւ , պէտք է որ ի րար սի րե-
լով , եւ ի րա րու օգ նե լով ըն կեր սի րու-
թեան օ րէն քը կա տա րէ . ա պա ի րար
ա տել , չի մի ա բա նիլ , եւ ի րա րու ա ղէ-
կու թիւն չու զե նալ է գա զա նի բը նու-
թիւն ։ Եր բոր մար դիկ վայ րե նի է ին ի-
րար բըռ նէ ին մոր թէ ին կու տէ ին . բայց
եր բոր քա ղա քա կան եւ մի ա բան ե ղան
ըն կեր սի րու թեամբ , ի րա րու հետ սէր
եւ մի ա բա նու թիւն ու նե ցան . ուս տի
ան ա տե նը մար դը մարդ ըս վե ցաւ , ու
գա զա նայ ին բը նու թիւ նը կո րուց ։

Ըթն ասէ թէ՝ ընդ ընկերաց ,
անոյշ վարվէ՝ հանց հըրեշտակաց .

մի նախանձիր այլոց բարեաց ,
դուն ալ ջանա՛ շատ կունենաս ։

Մ. Թ. Բ.

Մա գա ւո րու թիւ նը ըս կը սաւ Ջըր-
հե ղե ղէն ե տեւ . նախ բէլ ե ղաւ թա գա-
ւոր ա սո րի նե րուն վը րա . որ հը պար-
տա նա լով ու զեց որ գլխ քը պաշ տեն . ա-
նոր հա մար քաջն հայկ հայ ոց նա հա պե-
տը զար կաւ գլխքն ըս պան նեց ։ Ան կէ ե-
տեւ սո վո րու թիւն ե ղաւ որ ա մէն ազգ
ի րեն դը լուխ կամ թա գա ւոր դը նէ .
ո րոնք թա գով պը սակ վե լուն հա մար
մեր լե զու ին մէջ թա գա ւոր աս վե ցան .
սա կայն գի տուն ներն ա սին որ բուն մար-
դուս թա գա ւո րու թիւնն է ի րեն բը-
նու թեան վը րա տէր ըլլալ , ու գի տու-
թեան և ա ռա քի նու թեան թա գով պը-
սակ վիլ ։

Մոն խրատ տայ՝ քեզ թագ կապել ,
իմաստութիւն՝ պսակ դնել .
զի մարդուս թագն՝ է գիտութիւն ,
ոչ ունայն թագ՝ իշխաններուն ։

Վ. Ժ. Ծ.

Վա մա նակն այն կէ տին ըս կը սաւ եր-
բոր առ ջի օրն ա՛ծ ըս տեղ ծեց աշ խար-
հըս ու եր կինքն ըս կը սաւ ման գալ քը սա-
նը չորս ժա մը . իսկ չոր րորդ օրն ա ռա-
ւել կար գա ւո րե լով աստ ղե րը՝ յայտ նի

է զու ժա մը , օ րը , շա բա թը , ա մի սը , և տա րին . բայց ա̃ծ ա նոր հա մար ժա- մա նակն ո րո շեց , որ մար դիկ ի րենց ա- մէն բա նը ժա մա նա կով տես նեն , ու ժա- մա նա կը պա րապ չան ցը նեն . նա և ժա- մա նա կա ւոր բա րե գոր ծու թեամբ ան- ան ցա նե լի բա րի քը ժա ռան գեն ։ Հին ա տե նը ժա մա նա կը մէկ թև ա ւոր ծեր կը ձև ա ցը նէ ին . որ միշտ կը դառ նայ ։

Ք՝էն խրատ տայ՝ ժամանակի ,
Թէ անցանէ՝ նման հովի .
Մի խաբվիր թէ՝ հոս կը մնայ ,
կանցնիս կերթաս՝ հանց ստուերի ։

## Ի . ի . է .

Ի մաս տու թիւնն է բարձ րա գոյն գի- տու թիւն . որ խո րունկ պատ ճառ նե րով այն պէս կը լու սա ւո րէ միտքն որ հը րեշ- տա կի նը ման բա րակ գի տու թեանց և աս տուա ծա բա նա կան ուս մանց հա սու կըլ լայ . ա նոր հա մար ի մաս տուն մար- դը հը րեշ տա կի նը ման է . և պիւ թա- գո րաս փի լի սո փան ա սաց որ ի մաս տուն ա նու նը մի այն աս տու ծոյ կը վա յե լէ . իսկ մար դուս կը վայ լէ ի մաս տա սէր ա- նու նը . որ է ըլ լալ սի րող ի մաս տու թեան . սա կայն բուն ի մաս տու թիւնն է խո հեմ պար կեշտ և ա ռա քի նի ըլ լալ ա մէն բա- նի մէջ ։

Ոնին կասէ՝ չէր իմաստուն ,
խոհեմ գործքով՝ մտօք արթուն .
Ինչ որ գործես՝ վերջն խորհէ ,
իմաստութեան՝ միշտ հետևէ ։

## Լ. Ը. Ը.

Լոյս մը կը պատ ճա ռի ա րե գա կին շա-ւա ւի ղէն , որ ցո լա նա լով կը լու սա ւո-րէ օդն ու ա մէն ա ռար կա նե րը . և ա-սով մեր աչ քը ա մէն բան տես նող կըլ լայ ։ Նոյն պէս ա՟ծ այ ին լոյս մը կը կոչ վի լոյս փա ռաց . որ է իբր հայ լի . է րա նեալ հո-գիք ա նով կը տես նեն աս տուած , և աս-տուա ծայ ին փառ քե րը . ա պա ո՛վ որ ա-ւե լի ա՟ծ սի րու թիւն ու նի՝ ա ւե լի պայ-ծառ կը տես նէ ա՟ծ . նա և ա նով ա մէն բաղ ձա լի բա նե րը կը տես նէ և կը վայ-ե լէ եր ջան կու թեամբ ա նանկ որ է րա-նեալ հո գիք բը նաւ կա րօ տու թիւն չու-նին ար քայ ու թեան մէջ ։

Լուսըն խրատէ՝ թէ միտքըդ բաց ,
տեսող եղիր՝ լուսոյն փառաց .
չի կուրանաս՝ ըստ տգիտաց ,
չի զըրկըվիս՝ անբաւ բարեաց ։

## Խ. խ. ե.

Խոս տո վա նու թիւնն է խոր հուրդ ե-կե ղեց ւոյ , որ ք՟ս հաս տա տեց քրիս տո-նէ ից փըր կու թեա նը հա մար . ինչ պէս որ մը կըր տու թեամբ հո գին կը սըր բէ

ու քըլխ տո սի ան դամ՝ կըլ լայ , ա սանկ մե ղա ւոր հո գին ճըշ մա րիտ զըղջ մամբ և հաս տատ ա ռա ջադ րու թեամբ մեղ- քե րը կը խոս տո վա նի քա հա նայ ին ու ար ձակ վե լով թո ղու թիւն կառ նու , նո- րէն կար դա րա նայ և քըլխ տո սի ան դամ՝ կըլ լայ . ա նոր հա մար մը կըր տու թիւնն ու ա պաշ խա րու թիւ նը կաս վին խոր- հուրդ մե ռե լոց . իսկ մէ կալ հինգ խոր- հուրդ նե րը կաս վին խոր հուրդ կեն դա- նեաց . զի որ դա րա ցած նե րուն կը տըր- վին ։

Իսէն խորհուրդ տայ՝ խոստովանէ ,
մէկիկ մէկիկ՝ մեղքըդ ասէ .
Ճշմարտութեամբ՝ առաջադրէ ,
որ սըրբըվիս՝ ամէն մեղքէ ։

Ո՝ . ծ . ֆ .

Ո՝ա գումն ա րև ու կըլ լայ եր բոր ա- րե գա կը աշ խար հիս տա կէն անց նե լով կու գայ հո րի զո նէն վեր կել լէ . ան կէ բարձ րա նա լով եր բոր նո րէն կը հաս նի հո րի զո նը՝ կաս վի մու տա րև ու . և ո- րով հե տև ա րե ւը ա մէն օր մէյ մէկ սա- տի ճամ է տև քա լե լով միշտ իր տե ղը կը փո խէ , հո րի զո նին ծագ ման կէտն ալ միշտ կը փո փո խի . ա պա դէկ տեմ բե րէն ե տև ա մէն օր ա րե ւը բարձ րա նա լով օ րը կեր կըն նայ , և դի շե րը կը կար ճը- նայ . մին չև յու նիս . ան կէ ե տև կըս կը-

սի օ րը կար ձը նալ, և դի չե րն եր կըն-
նալ մին չև դեկ տեմ բեր ։ Ա պա ա մէն
մարդ պար տա կան է որ ա րև ու ծաղ-
ման ժա մա նա կը ել լէ փառք տայ ա՟յ և
ու րա խու թեամբ վայ ե լէ ա՟յ լոյ սն ու
բա րի քը ։

Ոսան սաէ թէ՝ զքեզ ծանի՛ր ,
ծերոց խօսքէն՝ դուրս մի՛ ելլի՛ր .
լուսով շնորհաց՝ պայծառացի՛ր ,
կենաց ծառով՝ անմահ եղի՛ր ։

## Ա . Կ . Է .

Ամէն է իշ խան մարդ կայ ին բը նու-
թեան . իսկ հո գին է թա գա ւոր անձն իշ-
խան և ան մահ . ո րուն գըլ խա ւոր զօ-
րու թիւնն է միտքն ու կամ քը . միտ քը
կըմ բըռ նէ և կը ճանչ նայ ճըշ մար տու-
թիւ նը . իսկ կամ քը հե տև է լով նոյն ճըշ-
մար տու թեան կը կա մի ա զա տօ րէն բա-
րին , և կը փախ չի չա րէն՝ թէ որ խաբ ված
չըլ լայ ։ Ա պա ա մէն մարդ պար տա կան
ե ղած է . որ եր բոր միտ քով ճըշ մար տու-
թիւ նը ճանչ ցաւ՝ պէ տք է ա զատ կամ-
քով հե տե ւի ու գոր ծէ բա րին , և հե-
ռա նայ չա րէն . որ պէս զի ան ցա ւոր
կեան քէս ե տև ա նանց կե նաց հաս նի ։

Աենըն կասէ՝ լաւ մտածէ՛ ,
անանց կենաց՝ սիրտդ վառէ՛ .
սուտ կենցաղոյս՝ դուռն է կըկին ,
մտար կելլես՝ մերկ աշխարհէ ։

## Հ. հ. կ.

Հա ղոր դու թեան ՚ը խոր հուր դը ա-
նոր հա մար դը րաւ ք՟ս ա ւագ հինգ շաբ-
թի օրն որ քը րիս տո նեայ է զօ ղը խոս-
տո վա նու թեամբ և ա պաշ խա րու թեամբ
մաք րե լով խիղ ճը ճա շա կէ քը րիս տո սի
սուրբ մար մինն ու հա ղորդ ըլ լայ ա՟ծ ու-
թեան . ի բըր թէ սըր բը վէ րով կապ վի
րս տեղ ծո ղին հետ այս կեան քիս մէջ և
մեռ նե լէն ե տև միշտ հա ղորդ ըլ լայ յա-
ւի տե նա կան ան ճա ռե լի փա ռաց ա-
րար չին ։ Ա պա ռով որ զատ կէ զա տիկ և
մեծ տօ նե րուն չի հա ղորդ վի՝ յի սու սի
հետ հա ղոր դու թիւն չու նե նար , ու կը-
կոր սը վի ։

Հոն խորանէն՝ հնազանդ ըլլաս ,
խիղճըդ մաքուր՝ սիրտըդ սրբած ,
հաղորդութեան՝ սուրբ խորհըրդին ,
փափաքելով միշտ մօտենաս ։

## Ձ. ձ. ջ.

Ձայ նը կը պատ ճա ռի եր բոր օ դը կը-
ցըն ցը վի . նոյն պէս կըլ լայ եր բոր մար-
դուս բեր նէն օ դը դուրս կել լէ ու դըր սի
օ դին հետ կը հա ղոր դի ձայն կել լէ , և
պըռ կունքնե րով ու լեզ ւով խօսք կը կազ-
մը վի ։ Սա կայն վեր ջի դա տաս տա նին օ րը
այս ա մէն ձայն պի տի խա փա նի . ու մի-
այն գաբ րի էլ եան փո ղին ա հեղ ձայ նը

պի տի լըս վի . որ հը րա մա նաւ այ եր-
կինք և բո լոր աշ խարհ կը սա սա նի . մե-
ռել ներն յա րու թիւն կառ նուն, կել լեն
ի րենց գե րեզ մա նէն դա տաս տան կեր-
թան . ար դար քը նո րէն կը պը սա կին
հոգ ւով և մարմ նով . իսկ դա տա պար-
տեալ նե րը յա՛ւի տեան կը կոր սը վին ։

Ձան ձայն տայ քեզ՝ արթուն կեցիր,
սուտ բաներով մի՛ զբաղիր ·
երբ ձայն լսես՝ ՚նը փեսային,
երթաս բազմիս՝ հարսնարանին ։

## Ղ. ղ. ղ.

Ղե կը օ րի նակ է խո հե մու թեան . որ մարդըս կը կա ռա վա րէ և կա տա րե-
լու թեան կը հաս ցը նէ . և ինչ պէս որ ա-
մէն նաւ ղե կով կը կա ռա վար վի ու ա-
ռանց ղե կի կը մո լո րի . այս պէս ա մէն
մարդ խո հե մու թեամբ պէտք է կա ռա-
վար վի . զի ա ռանց խո հե մու թեան և ա-
ռանց մը տա ծու թեան ինչ որ գոր ծէ կը
մո լո րի , և մե ծա մեծ վը նաս նե րու պատ-
ճառ կըլ լայ . իսկ խո հեմ շար ժե լով ա-
մէն բա նի մէջ կե րև նայ բա րի գի տուն
և շնոր հա լի ։

Ղատըն խրատէ՝ ղեկով շարժէ,
ամէն բանըդ՝ կարգով գործէ .
որ հոգուդ նաւն՝ անցնի ծովէն ,
ազատ մնայ՝ փորձութենէ ։

## Ճ. ճ. ճ.

Ճըշ մար տու Թիւնն է մի ան փո փոխ
և յա ւի տե նա կան . և մէկ բան մի կա֊
րող չէ զայն յաղ Թե լու . միշտ յաղ Թօղ
է ա մէն բա նի . ա նոր հա մար ա սաց քն̄ .
Ես եմ ճա նա պարհ , ճըշ մար տու Թիւն ,
և կեանք ։ Ա. պա ճըշ մար տա սէր մար դը
քն̄ի է . ոչ սուտ կը սի րէ , ո՛չ խա բէ ու֊
Թիւն , և ո՛չ կեղ ծա ւո րու Թիւն , զի այս֊
պի սի մար դը սա տա նայ յին է . որն որ սու֊
տին հայրն է . իսկ ճըշ մար տու Թիւ նը կը
խայ տա ռա կէ զայն պի սին , ու կը փա֊
ռա ւո րէ ճըշ մար տա սէ րը . ա նանկ որ
ճըշ մար տու Թեան ճամ բայ էն դուրս չել֊
լեր , ա ղէկ բան կը սի րէ , ու հո գև որ և
ի մաս տուն ան ձանց հետ կը տես նը վի֊
միշտ ։

Ճ՛էն ճանապարհ՝ քեզ ցուցանէ ,
չի հեռանալ՝ ճշմարիտէ .
ոչ սուտ խօսիլ՝ ոչ երդուըննալ ,
զի ճշմարիտն՝ աստուծոյ է ։

## Մ. մ. մ.

Մ՝արդն է փոք րիկ աշ խարհ ա մէն կա֊
տա րե լու Թեամբ զար դա րած բա նա֊
կան հոգ ւով և մըտ քով լու սա ւո րած .
որ է ի րեն ա րե գա կը , և ա նով կաս վի
պատ կեր այ̄ . իսկ մար մինն ու նի ջուր ,
բոյս , կեն դա նի ։ Ա. պա ա մէն մարդ նախ

պիտի մըտածէ թէ մարդ եմ, անմահ հոգի ունիմ. երկրորդ պիտի մըտածէ թէ քրիստոնեայ եմ, և մըկրտութեամբ ադամայ ըսկըզբնական մեղքէն ազատած եմ, ու քսի անուամբ դըրոշմած եմ և անդամ եղած եմ յսի. երրորդ մահկայ պիտի մեռնիմ, և այ պիտի համարտամ. եթէ բարի է գործքըս երանի՞ է ինձ. եթէ չար՝ վա՜յ ինձ։

Մ՝ենըն մտքիդ՝ իմաց կուտայ,
մահուան վըրա՝ միշտ մըտմըտամ.
մեղաց բաներ՝ միտքըդ չի գայ,
մարդ ես մարդու՝ վայլածն արա՛։

## Յ· յ· ն·

Յոյսն է ածաբանական առաքինութիւն, որ առաջ կու գայ կենդանի հաւատքէն. որովհետև ով որ ճըշմարտութեամբ կը հաւատայ աստուծոյ, պէտք է որ բոլոր սըրտով յոյս ունենայ անոր ողորմութեանը, և հաստատ յուսով ապաւինի ողորմած ըստեղծողին, որ զինքը չի պիտի կորսընցընէ. զի բարեգործաց համար արքայութիւն խոստացեր է. ահա այսպէս սէրըն ալ կը բորբոքի. անանկ որ միշտ կը փափաքի որ երթայ միանայ ըստեղծողին հետ յաւիտենական սիրով. ուստի հաւատ յոյս սէր միշտ կապւած են իրարու հետ։

Ցին յոյս տայ քեզ՝ յա̄ծ յուսա ;
մի կտրեր յոյսդ՝ երբ ցաւ մի գայ ·
եթէ յաջող՝ եթէ ձախորդ ,
ամէն մէկ բանն՝ ա̄ծ կուտայ ։

## Ն. Ն. Ն.

Նա խանձն է գէշ մո լու թիւն , որ կը- րա կի նը ման կայ րէ նա խան ձոտ մար դը ու րի շին բար եա ցը վը րան · ա մե նե ւին այ լոց ա ղէ կու թիւ նը չու զեր · կը տըրտ- մի թէ որ մէ կը ին ա նու նը կամ բա նը գո- վեն · թէ որ ձեռ քէն գար՝ ա ղէ կու թիւ- նը աշ խար հէս կը վեր ցը նէր որ մար դու չըլ լայ · որ է դի ւա կան բը նու թիւն ։ Ա- պա ա մէն քրիս տո նեայ պէտք է որ այս մո լու թե նէ հե ռու փախ չի ու բա րի նա- խանձ ու նե նայ · եր բոր այ լոց վը րա ա- ղէկ բան տես նէ՝ ինքն ալ հե տե ւի որ ու- նե նայ , և բա րի ա նուն ա̄ծ ա պաշտ ըլ- լայ աշ խար հիս վը րա ։

Նուն նախանձին՝ համար կասէ ,
թէ կրակի՝ շատ նման է ·
նախ ունեցողն՝ այրէ խանձէ ,
ապա այլոց՝ սիրտը կերէ ։

## Շ. Հ. Հ.

Շը նորհքն է ձը րի պար գև ա̄յ · որ կու- տայ քրիս տո նէ ից · որ պէս զի բա րի ըլ- լա լով փըր կու թեան հաս նին , ու քո̄ի չար- չա րա նա ցը պը տուղ նե րը վայ ե լեն · ա-

պա ա մէն մար դու հար կա ւոր է շը նորհք . զի ա ռանց շը նոր հաց մարդ մի չի կար նար ար դա րա նալ, ու մեղ քէ սըր բը վիլ ար-քայ ու Թեան որ դի ըլ լալ ։ Ուս տի պէտք է միշտ շը նորհք խըն դըրել ա րար չէն , ու ան շը նորհք չի մը նալ . զի ան շը նորհք մար դը սա տա նայ ի օրս կըլ լայ կը կոր-սը վի յա ւի տեան ։

Ջան շնորհազարդ՝ ասէ եղէր ,
ունայն մարմնոյդ՝ մի հետեւիր .
շնորհօք փրկչին՝ կարնաս միայն ,
վեր ելլելու՝ երկնից խորան ։

Ո . ո . ռ .

Ու սումն է տե ղե կու Թիւն ա մէն հար-կա ւոր բա նե րու և գի տու Թեանց ո րով մար դը սոր ված և լու սա ւո րած կըլ լայ . խոկ ան ուս չի սոր ված մար դը ան բա նի նը ման կապ րի ու Թէ մարդ կայ լին ըն կե-րու Թեան , և Թէ բո լոր աշ խար հի ծաղ-րու Թիւն կըլ լայ . ուս տի հար կա ւոր է որ որ չափ կապ րինք՝ ա ղէկ բան սոր վե լու ջա նանք . ա պա ով որ փուճ բա նե րու ե-տե է ըլ լա լով չու զեր բան սոր վիլ՝ կոյր կը մը նայ , և մար դու սի րե լի չի կար նար ըլ լա լու . ա նանկ որ ա մէ նը իր մէ կը փախ չին , և մարդ ե րե սը չի նայ իր ։

Ոն հետեւէ՝ կասէ ուսմանն ,
և մի ըլլար՝ անուս անբան .

քանզի ուսմամբ՝ և հանճարով,
մարդը միայն՝ մարդ կը ճանչնան ։

## Չ·Է·Ն·

Չար չա րանքն յի սու սի ե ղաւ քո լոր աշ խար հիս հա մար . ո րով բաց վե ցաւ ար քայ ու թեան դու ռը ա մէն հա ւա տա- ցե լոց . և ա մէն քրիս տո նեայ պար տա- կան ե ղաւ որ բա րի ըլ լայ ու ար քայ ու- թեան հաս նի . նա և միշտ յի սու սի խաչն ու ցա ւը միտ քը բե րէ և համ բե րէ ինչ- ցաւ որ ու նե նայ . ոչ հը պար տա նայ , և ոչ բար կա նայ այ լոց վը րան . ա մէն նե- ղու թեանց զին քը ար ժա նի հա մա րէ . որ- պէս զի հան դեր ձեա լը նոյն 'որ չար չա րա- նաց շը նոր հօ քը պը սակ վի . ո րով հե տև ինչ պէս որ ոս կին կը րա կին մէջ չա պա- կա նիր , այլ ա ւե լի կը մաք րի , այս պէս համ բե րող հո գին խաչ քա շե լով ա ւե լի կը լու սա ւո րի և ա̃յ հա ճոյ կըլ լայ ։

Չան խրատ տայ՝ հոս չարչարվէ ,
համբերութիւն՝ թող համբերէ .
այլոց չարեաց՝ թէ դուն տանիս ,
նման փրկչին՝ մարդ կը շահիս ։

## Պ·պ·դ·

Պատ ուի րանն է ճը րա գի նը ման , որ չի թող ճամ բան ցոյց կու տայ մար դուս . ա նոր հա մար ա̃ծ ա դա̃մն ըս տեղ ծա ծին- պէս պատ ուի րան մը վաւ որ չի սը խա լի .

իսկ մով սէս մար գա րէ ին ձեռ քով տը ւա-
տա սը պատ ուի րան օ րի նաց ըն ու ըր եր կու-
քա րէ տախ տակ նե րու վը րա , որ հաս-
տա տա պա հեն ու չի մո լո րին ։ Այս պատ-
ուի րան նե րը հը րա մայ եր են , որ աս-
տուծ մէ 'ի զատ ու րիշ բան չի պաշ տեն .
ա̃յ ա նու նը պա րապ տեղ չի յի շեն . կի-
րա կի տօն օր չի բա նին . ծը նող քը պատ-
ուեն . մարդ չըս պան նեն , չի շը նան , չի
գող նան , սուտ չի վը կայ են , բա նի չի նա-
խան ձին ու չի ցան կան ։ Ա. հա ա սոնք ա-
մէն մարդ պար տա կան է պա հե լու ։

Պէն պա̇տուիրանն՝ ա̃ծային ,
պահէ ասէ՝ զերթ գանձ անգին .
որ անմոլար՝ երթաս ուղին ,
արքայութեան՝ ճանապարհին ։

Ջ. Ջ. Ջ.

Ջ̀ եր մե ռան դու թիւնն է ա̃ծ սի րու-
թիւն . որ բա րի հո գին վա ռած ջերմ՝ սի-
րով կա ղօ թէ ա̃յ . ու կը բաղ ձայ մի ա նալ
ըս տեղ ծո ղին հետ . ա հա ա սանկ ջեր մե-
ռանդ հո գին նը ման է հը րեշ տա կի . որ
մեղ քէ և աշ խար հէ թե թև նա լով կը
վե րա նայ հոգ ւով , ու ա̃ծ ա փայլ և րա-
նե լի կըլ լայ ։ Ուս տի ջեր մե ռանդ մար-
դը ա մէն ան գամ մի տքը պի տի բե րէ ըս-
տեղ ծո ղին բա րիքն ու սիր տը բոր բո քէ
ա̃ծ այ ին սի րով և ջեր մե ռան դու թեամբ .
ի՛նչ պէս որ սուր բե րը կա նէ ին ։

Ջա՛ն ջերմեռանդն՝ տաք եղիր ,
ջերմ աղօթքով՝ տաճար մտիր ․
մի ծուլանար՝ հոգևորին ,
թէ չէ կըլլաս՝ գլխաց բաժին ։

## Ռ․ ռ․ ռ․

Ռաբ բի քրիս տո սի ա նունն է ․ որ եբ-
րայ ե ցե րէն կը նը շա նա կէ վար դա պետ
կամ ու սու ցիչ ․ այս մըտ քով ա րա բա ցիք
ալ ռաբ բի ա նուն կու տան աս տու ծոյ ։
Երբոր քս̅ յար եաւ ու մա րիամ մագ դա-
ղե նա ցուն ե րև ցաւ , ան կէն՝ ռաբ բու նի
կան չեց ․ որ նոյն կը նը շա նա կէ ․ իսկ ա-
ռա քեալ նե րը ինչ որ պի տի հար ցը նէ ին
քրիս տո սի , և ինչ նե ղու թիւն որ ու նե-
նայ ին ռաբ բի կը կան չէ ին ։ Այս պէս ա-
մէն քրիս տոն եայ ինչ նե ղու թիւն որ ու-
նե նայ՝ պէտք է երկ նա ւոր վար դա պե-
տին օգ նու թիւնն ու շը նոր քը խըն դրէ ,
որ ա զա տի փոր ձու թե նէ ։

Ռա՛ն քեզ խրատէ՝ խնդրէ՛ ռաբբին ,
լսէ՛ ձայն՝ վարդապետին ․
ռամիկներէն՝ հեռու փախիր ,
գիտնոց ծերոց՝ միշտ ունկն դիր ։

## Ս․ ս․ ս․

Սէրն է ա ռա քի նու թիւն սի րուն և
գե ղե ցիկ , ո րով կը սի րենք ա̅ծ ան հուն
բա րու թեա նը հա մար ․ և ըն կեր նիս
կը սի րենք ա̅յ սի րոյն հա մար ․ ա պա ա̅ծ ա-

պաշտ մար դը պէտք է նախ ա մէն բա նէն ա ռաջ և ա մէն բա նէն վեր իւր ըս տեղ- ծօ ղը սի րէ, և ա նոր սի րոյն հա մար մեղ- քէ փախ չի ու բա րե գոր ծու թեան հե- տե ւի. նա և պի տի սի րէ ըն կե րը և ա- ղէ կու թիւն կա մե նայ, ինչ պէս որ ի րեն հա մար կը կա մե նայ. և իւր բա րեա ցը վը րա ինչ պէս որ կու րա խա նայ, պի տի ու րա խա նայ ըն կե րին բար եա ցը վը րա. ա հա այս է օ րէնք ա՟ծ սի րու թեան և եղ բայր սի րու թեան ։

Սէն սիրտդ ասէ՝ սիրով փրկչին,
միշտ բորբոքէ՝ նման բոցին.
չըլլայ թէ սէր՝ սուտ աշխարհին,
մինչ այրէ՝ սիրտդ ու հոգին ։

## Վ. Վ. Ն.

Վախ ձանն է պատ ձառ ա մէն գործ քի, որ կաս վի վախ ձա նա կան պատ ձառ. զի ա մէն բան մէկ վախ ձա նի հա մար կըլ լայ, և ա ռանց վախ ձա նի բան մի չըլ լար աշ- խար հիս վը րա. ուս տի նիւ թա կան բա- նե րը ե ղան մար դուս հա մար. բոյ սե- րուն, հան քե րուն, և ա նա սուն նե րուն վախ ձա նը մարդս է. իսկ մար դուս վախ- ձա նը ա՟ծ մի այն է. զի մարդն ու հը րեշ- տակն ա՟ծ ի րեն հա մար ըս տեղ ծեց, որ զին քը ձանչ նան, սի րեն, և պաշ տեն, ու իւր փա ռա ցը ար ժա նի ըլ լան ։ Ապա ռ- րուն վախ ձանն որ բա րի է, և բա րի վախ-

Ճա նի հա մար կաշ խա տի , ա նոր վերջն աւ րա րի կըլ լայ ։

Մեծն ասէ թէ՝ վախճանդ ըլլայ ,
Ա̃ծ միայն՝ այլ բան չըլլայ .
վարքդ ու շարժմունքդ՝ աղէկ արա ,
հարկաւ վերջդ՝ բարի կըլլայ ։

Տ . ա . պ .

Տօն կամ տօ նա խըմ բու թիւն կըլ լայ տէ րու նա կան օ րե րուն , և սուր բե րուն կա տար մա նը հա մար . զի ե կե ղե ցին դը- րեր է որ ա մէն քրիս տո նեայ տօն օ րը ե- կե ղե ցին եր թայ պա տա րագ տես նէ , ու փա ռա ւո րէ Ա̃ծ , և հո գե ո րա պէս ու րա խա նայ նոյն օր ւան հան դի սին հա- մար , խըն դը րե լով ըս տեղ ծո ղէն , որ շը- նորհք տայ ի րեն ու զօ րա ցը նէ . որ պէս զի սուր բե րուն նը ման յաղ թէ մարմնոյ և սա տա նայ ի , ու ա ռա քի նա կան վար- քով յա ւի տե նա կան տօ նա խըմ բու- թեան ար ժա նի ըլ լայ , ուր յա ւի տեան փա ռա ւո րէ Ա̃ծ ։

Տիւնըն ասէ՝ թէ Տ̃ր ունիս ,
տիրօղ տերանց՝ տիեզերքիս .
պատուիրանքէն՝ չի խոտորիս ,
սրբոց դասէն՝ դուրս չի վարվիս ։

Ր . ր . ւ .

Րե նա տես Ա̃ծ ա տես ա սըլ է . զի յա- կոբ նա հա պետ եր բոր տե սաւ հըր եշ-

տակն , որ ո̃յ կող մա նէ հե տը խօ սե ցաւ , իս րայ էլ կամ րե նա տես աս վե ցաւ . իսկ քրիս տոն եա նե րը նոր իս րայ էլ կոչ վե ցան , որ է նոր րե նա տես կամ ա̃ծ ա տես ։

Բայց ա̃ծ ա տե սու թեան փա փա քօղ մար- դը պի տի 'որ սիր տ ու նե նայ , հո գե ւո րին մօտ ըլ լայ , խո նարհ , հը նա զանդ և խա- ղա ղա սէր . երբ թէ սիր տին ըլ լայ ար քայ- ու թիւն՝ ո̃յ սի րո վը վառ ված . ա նանկ հո գին ա̃ծ ա տես է թէ հոս և թէ եր- կին քը ։

Բէն խըրատ տայ՝ խոնարհ եղի՛ր ,
բարեպաշտօն՝ հըլու ընտիր .
անձառ լուսոյն՝ երանական ,
բարի գործով՝ ըլլաս արժան ։

Յ . ց . դ .

Յան կա կան կա րո ղու թեամբ մար դըս կը բաղ ձայ բար ւոյն , և ցաս մնա կան կա- րո ղու թեամբ կը փախ չի չա րէն . բայց շատ ան գամ ըղ ձայ ու թիւ նը խաբ վե- լով բա րին կը թո ղու չա րին կը հե տե ւի , ցան կա նա լով ան կարգ բա նե րու . ուս- տի ա ռա քի նի մար դը պար տա կան է որ ցան կա կան կա րո ղու թիւ նը չա փի մէջ պա հէ , ու չար ցան կու թեան չի հե տե- ւի , բա րի բա նե րու ցան կայ . նոյն պէս պէտք է կա նո նով վա րէ ցաս մնա կան կա- րո ղու թիւնն որ ոչ յան դուգն հա մար- ձակ ըլ լայ , և ոչ վախ կոտ փոք րո գի . քա-

ջու թեամբ դէմ կե նայ չա րին. և հար-
կա ւոր տե ղը ա րի ու թիւն անէ ։

Յոն ցուցանէ՝ քեզ այլ խրատ,
ցանկականին՝ խլէ արմատ.
զցասմնականն 'ի կարգ պահէ,
առաքինին՝ ըլլաս քաջ մարդ ։

## Ի. Ւ. Ա.

Իիւ ծու թիւնն է հի ւան դու թիւն մարմ նա ւոր և հո գե ւոր. մարմ նա ւոր հի ւան դու թիւն կը պատ ճա ռի եր բոր ներ սի հիւ թե րը կայլ այլին, կամ ջեր-մու թիւ նը կա ւել նայ և կամ ցըր տու-թիւ նը, կամ չո րու թիւ նը, և կամ թա-ցու թիւ նը, թէ որ ճա րով չի լաւ նայ, մահ կը պատ ճա ռի, ու մար մի նը հող կը դառ նայ ուս կից որ ըս տեղծ ված է ։ Իսկ հո գե ւոր հի ւան դու թիւնն է զըր կու-մըն շը նոր հաց. տը կա րու թիւն բը նա-կան կա րո ղու թեանց, տը գի տու թիւն մը տաց. մո լո րու թիւն կա մաց, և ան-կար գու թիւն ըղ ձայ ա կան բաղ ձա նաց ։ Ա. հա այս հի ւան դու թիւն նե րը պա տա-հե ցան մեզ՝ ա դա մին մեղ քո վը. և այս հի ւան դու թեանց ա զատ կըլ լանք թէ որ բա րի ապ րինք ։

Իիւնըն կամէ՝ հոգւոյ հիւանդ,
տգիտութիւն՝ կանէ զմարդ.
կապէ զխիղճ՝ գիտութեան վարդ,
որ երևնաս՝ պսակազարդ ։

## Փ․ փ․ ‡․

Փըր կու թիւն է ղաւ աշ խար հի մի այն քըրիս տո սի ան գին ար եամբ, որ թա փեց մեզ փըր կե լու հա մար․ թէ պէտ ա՟ծ կա- րող էր ու րիշ կեր պով մեզ փըր կե լու սա- տա նայ ին ձեռ քէն․ բայց վ՟ս ան չափ սի- րոյն ք՟ս աշ խարհ է կաւ մար դա ցաւ չար- չա րե ցաւ և մե ռաւ․ հո գին մար մի նէն ե լա ծին պէս գը նաց լիմ պոս ա ղա տեց մար դա րէ նե րուն և ար դար նե րուն հո- գին․ բա ցաւ ար քայ ու թեան դու ռն որ ա մէն քըրիս տոն եայ փըր կու թեան հա- սաւ, ու երկ նայ ին փառ քե րուն ար ժա- նի է ղաւ ք՟սի փըր կա գոր ծու թեամբ։

Փիւրըն փառաց՝ քարոզ կուտայ ,
վերին փառաց՝ միշտ փափաքեմ ․
բարի գործքով՝ ով որ ջանայ ,
կրկին փառաց՝ արժան կըլլայ ։

## Ք․ ք․ +․

Քա ղա քա վա րու թիւնն է գե ղե ցիկ ու սու մըն մար դոյ , որ կը սոր վե ցը նէ ղին քը ճանչ նալ մե ծե րուն պա տիւ տալ , և մար դա վա րու թեամբ շար ժիլ։ Քա- ղա քա վար մար դուն ա մէն գործքըն ու- բա նը շը նոր քով պի տի ըլ լայ․ խօս քը ա- նոյշ, ձայ նը խո նարհ և շարժ ված քը շը- նոր հա լի․ ա նանկ պի տի վար վի տա նը մէջ, ինչ պէս որ կը վար վի դուր սը․ մի տ-

քը պի տի դ՛ը նէ որ ա մէն տեղ մար դա-
վա րու թիւն ա նե լու է. զի ա մէն տեղ
ա̃ծ կայ, և ուր որ ըլ լայ՝ մարդ է, և ոչ
ան բան. վեր ջա պէս նը ման քե րո բէ ից
պի տի սի րե լի ըլ լայ ա̃յ, և մար դոց քաղցր
կե նակ ցու թեամբ:

Ո՛.էն քարոզէ՝ վերջին խրատ,
ընտի՛ր եղի՛ր՝ կըրթըւած մարդ.
քաղաքավար՝ և բարեպաշտ,
գիտուն խոհեմ, և շնորհազարդ:

## Եւ. ե. ւ.

Եւ րո պիա աշ խար հիս չորս մա սին
փոք րն է, բայց շատ մեծ է խել քով գի տու-
թեամբ և բաղ մա մար դու թեամբ. իւր
ի մաս տուն նե րը բո լոր աշ խարհ կը լու-
սա ւո րեն, և իւր հը զօր թա գա ւոր նե-
րը աշ խար հի կա նոն կու տան: Սա կայն
ա ռաջ շատ մը գէտ է ին եւ րո պա ցիք,
ա մե նև ին բան չգի տէ ին. եր բոր ա րապ-
նե րը եւ րո պիա ան ցան ու տի րե ցին ըս-
պա նի այ ի՝ քիչ քիչ ու սում սոր վե ցու-
ցին եւ րո պա ցոց, որ ըս կը սան ծաղ կիլ,
ու ի մաս տուն դըր քե րով լը ցին ի րենց
աշ խար հը. որ տաս նը վեց աշ խարհ կը-
բաժ նը վի:

Եւնէ կիսատ՝ եչէ հնարած,
այլ խրատ տայ՝ ուսանողաց.
եթէ կիսատ՝ դուն միտք ունիս,
ջանքով ըլլաս՝ աղէկ սորված:

## ()· օ· օ·

()րէնքն է կա նոն աշ խար հի , և բո-լոր աշ խարհ օ րէն քով կը կա ռա վար վի· ա նոր հա մար եր բոր մարդն ըս տեղ ծե-ցաւ , ա̄ծ ի րեն բը նա կան օ րէնք դը րաւ խիղճ մը տան քը , որ ա նոր լու սով շի տակ եր թայ ան սը խալ· յե տոյ տը վաւ մով-սի սա կան օ րէնքն ու պատ ւի րանն , որ նոյն բը նա կան օ րէն քին վը րա հաս տա-տած է · նոյն պէս տը վաւ քս̄ ա ւե տա րա-նա կան օ րէն քը · ո րով օ րի նա պահք փըր կու թեան կը հաս նին ու կը պըր սակ-վին ա րար չէն · իսկ օ րի նա զանցք կը-դա տա պար տին · զի քս̄ի օ րէն քը է հաս-տա տու թիւն բը նա կան և դը րա կան օ րի նաց ։

()ն օրէնք տայ՝ օրւան վըրա ,
որ փուճ բանով կորած չըլլայ ·
օրինապահ՝ ով որ ըլլայ ,
օրէնքն իրեն՝ շնորհք կուտայ ։

## Պ· Փ· Ք·

Պի լի սո փոս կը թարգ մա նի սի րող ի մաս տու թեան · բայց ճըշ մա րիտ ի-մաս տա սէ րը պի տի ու նե նայ ա ղէկ վարք և սէր ա ռա քի նու թեան , կա տա-րե լու թեան , և ա̄ծ պաշ տու թեան · ա-նանկ որ իբր ե րան եալ հո գի ապ րի աշ-խար հիս վը րա , ա մե նուն սի րե լի , աշ-

զին պար ծանք, և ոչ հա ճե լի ։ Այս պի-
սի լա ւու թեանց է տե ւէ ման կու թե-
նէն պէտք է հե տե ւիլ, բա րի սո վո րու-
թեանց փա փա քող ըլ լալ, և ի մաս տա-
սի րու թեամբ լու սա ւո րիլ, ու մին չե
ծե րու թիւն բա րի ա նուն ըլ լալ, ա պա
ա̃ծ այ լին ան ճա ռե լի փա ռաց ար ժա-
նի ըլ լալ յա ւի տե անս յա ւի տե նից ։

Գէն փիլիսոփ՝ սաէ եղիր,
ճանչցիր աշխարհ՝ մի՛ քուն լինիր ·
ըստեղծողին՝ գործոց նայէ,
անճառելեաց՝ միշտ փափաքէ՛ ։



# ՎԱՐԺՈՒԹԻՒՆ
# ՄԱՆԿԱՆՑ

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

### ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԻՆԻ ՕՐԻՆԱԿԱՑ

#### Ա. Իմաստութիւն ։

Դիոնեսիոս բռնաւորը օր մի վաճառանոցն ելաւ, տեսաւ որ ամէն վաճառական տեսակ տեսակ ապրանք կը ծախեն ։ Հոն պատահեցաւ փիլիսոփայի մի. հարցուց թէ հապա դուն ի՞նչ կը ծախես ։ Ան ալ պատասխանեց թէ ես իմաստութիւն կը ծախեմ ։

Մրկնեց Դիոնեսիոս․ քանիո՞վ կը ծախես ։ Ասաց փիլիսոփան թէ վեցհարիւր դահե-կանի ։ Մ՛եկէն հանեց վճարեց ։ Ասաց փի-լիսոփան․ Ամէն գործոց խոհեմութեամբ գործէ ու դիւր վերջը մտածէ ։ Ահա այս է իմ ապրանքս ։ Այս խօսքս մեծ բան չերևնալով Դիոնե-սիոսին՝ սկսաւ սովորաբար բերան առնուլ, և նեղանալով ամէն անգամ ասել ։

Եղաւ որ իրեն իշխանները թշնամանա-լով կաշառք տուին իրեն սափրչին, որ եր-բոր գլուխն ածիլէ, վարպետութեամբ վիզը կտրելով սպաննէ բռնաւորը ։ Երբոր գնաց իրեն քով սափրիչը, Դիոնեսիոս առանց բա-նը գիտնալու բարձր ձայնով կանչեց․ Ամէն գործոց խոհեմութեամբ գործէ ու դիւր վերջը մտածէ ։ Սափրիչը կարծելով թէ Դիոնեսիոս բանը իմացեր է․ ընկաւ ոտքը թողութիւն խնդրեց որ կեանքը շնորհէ իրեն ։ Անատենը Դիոնե-սիոս իմացաւ իմաստութեան գինը թէ ինչ թանկագին մեծ բան է եղեր․ երանի անոր որ ունի ու գիտէ յարգը իմաստութեան․ զի պատճառ եղաւ իրեն ազատութեան ։

Գանձ իմաստութեան գանձ անկշռելի,
պարգև տէրունեան ընծայեալ բանի․
զոր ոչ երկրաքարշ միտք մարմնասիրի,
և ոչ ընչաւորն առնու 'ի յարգի ։
Քոյդ մնաց տուաւ այն գանձ տէրունի,
քեզ հաւատացաւ յարգել անթերի․
ձօխացի 'ի քոյդ գանձարան սրտի,
ձօխանալ այնու միտք քո և հոգի ։

## Է. Աշխատասիրութիւն:

Օգոստոս կայսր՝ Թշնամեաց դէմ մեծ յաղթութիւն կատարելէն ետեւ փառաւորապէս Հռոմ դարձաւ: Կայսեր դէմն ելաւ հռոմայեցի մի ունելով ձեռքը կաչաղակ Թռչուն. որուն սորվեցուցեր էր այս խօսքս խօսելու. Ողջունեմ քեզ կայսր յաղթող վեհափառ: Կայսրն այս բանս Թռչունէն լսելով զմայլեցաւ, ու հրամայեց որ ծանր գնով գնեն: Յետոյ այսպիսի խօսօղ Թռչուններուն սէր ձգելով քանի մի հատ գնեց: Ռամիկ արուեստաւոր մի այս բանս լսելով՝ ինքն ալ առաւ կաչաղակ մի, ու սկսաւ վերի խօսքը սորվեցնել մեծ դժուարութեամբ, որ յետոյ ծախէ կայսեր: Բայց որովհետեւ Թռչունը դժուար կը սորվէր՝ տէրը շատ անգամ նեղանալով կը կանչէր. Աւա՜ղ աշխատանացս որ կորաւ:

Վերջապէս արուեստաւորը սորվեցուց Թռչունին ինչպէս որ պէտք էր, որ ետքի խօսքն ալ միատեղ սորվեցաւ: Օր մի կայսրը երբոր կանցնէր այս արուեստաւորին դրանն առաջէն, Թռչունը նոր սորված բլբլալով պատուհանէն կըկանչէր. Ողջունեմ քեզ կայսր յաղթող վեհափառ: Վեր նայեցաւ կայսրն ու ասաց. Ես շատ ունիմ այդպիսի ողջոյն տըւօղ Թռչուններ: Կաչաղակին ետեւէն մէկալ խօսքն ասաց. Աւա՜ղ աշխատանացս որ կորաւ:

Այս բանն այնչափ զարմացուց կայսրն որ հրամայեց աւելի ծանր գնով գնել այն թըռչունը ։ Այն ժամանակն ասաց արուեստաւորը, թէ իրաւի՛ շատ մեծ բան է եղեր աշխատանքն որ ընաւ չի կորսըվիր ։

Այսպէս աննահանջ ջանք առաքինի,
 յաղթել բռնութեանց գիտէ աշխարհի .
 թէ զանխօսն առնէ խօսօղ ցանկալի,
 քանի՛ թէ խօսունդ 'ի նոյն կըթեսցի ։
Մի՛ յետս ընկրկիր 'ի գործ պիտանին,
 որչափ չարատանջ լիցէ առնելն .
 զի յոյժ անուշէ զամէն դժուարին,
 չքնաղ չափակցեալ գործս ու վախճանին,

### Դ. Հնարագիտութիւն ։

Երևելի իշխան մի լսեր էր որ աստղաբաշխ մի միշտ կը պարծենայ թէ իմ արուեստովս լաւ գիտեմ չեղած բաները գուշակելու ։ Իշխանը հրաման ղրկեց անոր, որ գուշակելով իւր չորս հարցմունքին պատասխան տայ ։ Առաջինն էր, Ո՞ւր է աշխարհիս կեդրոնը ։ Երկրորդ՝ Իմ արժէքս որչափ է ։ Երրորդ՝ Հիմա ես ինչ կը մտածեմ ։ Չորրորդ՝ Ես ինչ բանի կը հաւատամ ։ Աստղաբաշխը զարմանալով այսպիսի հարցմունքի վրայ խնդրեց թողութիւն իշխանէն . զի այսպիսի բան միայն ա̅ծ կարօղ է գիտնալ ։ Բայց իշխանը բարկանալով սպառնացաւ որ կամ գտնէ աստղա-

բաշխական արուեստով պատասխան տուր. և կամ կը պատուհասեմ քեզ չարաչար։

Երբոր աստղաբաշխը կը մտածէր տարակուսած՝ իւր Ջաղացպանը ներս կը մտնէ ու հարցընէ պատճառը կիմանայ։ Մ՚ի տարակուսիր կասէ. այդ հարցմունքդ բան չէ. ինծի հրաման տուր, հագուստդ հագնիմ, ես երթամ պատասխանը տամ։ Աստղաբաշխը ուրախանալով հանէ հագուստն անոր կը հագցընէ. ու կը ղրկէ իշխանին։ Ջաղացպանը աստղաբաշխին հագուստովն աղատութբ կերթայ շիտակ իշխանին խուցը կը մտնէ ողջունելով։ Իշխանը մեկէն կը հարցընէ թէ պատրաստեցի՞ր պատասխանը հարցմունքիս։ Հրամերես ասաց։ Աւրեմն ասա ինծի՝ կրկնեց իշխանը։ Ո՞ւր է աշխարհիս մէջ տեղը։ Պատասխանեց Ջաղացպանը. ոչ միայն պիտի ասեմ, այլև պիտի ցըցընեմ քեզի. թէ որ կամենաս հետս գալ դաշտը։ Իշխանը հաւնեցաւ. ելան գնացին դաշտը. Ջաղացպանը քիչ մի տեղ ոտքով չափեց ու կեցաւ. դարձաւ իշխանին ասաց՝ թէ ահա՛ հոս է մէջ տեղն աշխարհիս. եթէ ինծի չի հաւատաս՝ չափել տուր աւելի վարպետ երկրաչափի. կիմանաս որ շիտակ է խօսքս։

Իշխանը զարմանալով վարպետութեը վրա ասաց թէ աւելի դիւրին է քեզի հաւատալ, քան թէ կրկին չափել տալ։ Բայց ասա ինծի իմ արժէքս որչափ է։ Պատասխանեց Ջաղացպանը. մեր փրկիչը երսուն դահեկա-

նի ծախվեցաւ · ապա դուն պէտք է որ արժես մէկ դահեկան պակաս · կարծեմ թէ այս գինը անպատուութ̃ի չի բերեր քեզ ։ Ասաց իշխանը ասաւ թո՛ղ անցնի · ասա՛ ես հիմա ի՞նչ կը մտածեմ ։ Պատասխանեց ջաղացպանը · դուն քու շահդ ու եկամուտդ կը մտածես ։ Իրաւի է ասաց իշխանը · բայց գիտցի՛ր նայիմ ես ի՞նչ բանի կը հաւատամ ։ Պատասխանեց, թէ դուն կը հաւատաս թէ ես աստղաբաշխն եմ · բայց ես եմ ջաղացպան, որ անոր տեղն եկայ քեզ պատասխանեցի ։ Իշխանը շատ զարմանալով անոր հնարագիտութենը վրա գովեց մեծապէս թէ շատ աղէկ կատարեցիր պաշտօնդ ու ազատեցիր աստղաբաշխը · ուստի քու հնարագիտուն̃դ անկէ շատ վեր կը համարիմ ։

Այս վսեմափայլ նշոյլ բնածին ,
վառ իվառ պահեալ կայ յիւր կանթեղին ։
զի ճարակ լուսոյ իմացականին ,
է հանճար իմաստ ըստ տեսականին ։
Եթէ չէ վառեալ քոյդ ճրագ ներքին ,
փայլուն առարկայք քեզ խաւար զննին ·
զի՞նչ շահ այլք թէ զքեզ գիտուն համարին ,
երբ միտքդ է կապեալ՚ի մութ խաւարին ։

## Ժ̄ · Խորամանկութիւն ։

Աւազակները երբոր ճամբան կըսպասէին անցնողները կողոպտելու համար՝ տեսան որ անկէ կանցնէր կրօնաւոր մի սուրբ

Ֆռանչիսկոսի կարգէն՝ կարծելով թէ սպահած փող ունի, մէկէն վրան թափեցան, ու սուրը սրտին դրին կըսպառնային որ հանէ փողը ։ Իսկ բարի կրօնաւորը աներկիւղ և զուարթ դէմքով սկսաւ այսպէս ասել անոնց. Պարոններ կերևնայ թէ շատ ժամանակ է որ հեռացեր էք աշխարհէ, և մարդկային կենակցուէ․ որովհետև մոռցեր էք որ Ֆռանչիսկեան կրօնաւորները չեն կարնար վրանին ստակ պահելու․ ուստի դրամ չունիմ որ տամ․ անոր տեղը ձեզի խօսիմ խրատ մի, որով կարենաք ձեր ցանկասէր սիրտը հանդչեցնելու ։ Աւազակները զինքն անանկ հանդիստ և զուարթ տեսնելով հաճեցան, որ մտիկ անեն ։ Ուստի այսպէս սկսաւ խրատը ։ Եղբայրներ կը տեսնեմ որ ձեր կենցաղավարութիւն ու քսի կենցաղավարութիւնը շատ նման են իրարու․ վն զի նա աղքատ մեռաւ, դուք ալ աղքատ պիտի մեռնիք ։ Նա ամենուն ատելի եղաւ ու հալածվեցաւ, դուք ալ ամենուն ատելի էք ու կը հալածվիք ։ Նա մոլորեցուցիչ համարեցաւ, դուք գող աւազակ համարված էք ։ Նա չունեցաւ տեղ մի գլուխը դնելու, դուք ալ չունիք ապահով բնակարան մի․ մութն է ձեր լոյսը, գայլերն են ձեր ընկերները, և թռչուններն են ձեր երգիչները ։ Նա մէկ քաղաքէն մէկալը կը հալածվէր․ դուք մէկ վտանգէն կազատիք մէկալը կիյնիք, ու հովին ձայնը և ծառերուն տերևը ձեզ կը դո-

ղացնէ ։ Նա ընկաւ թշնամեաց ձեռքը մէկ աշկերտին մատնութը , դուք ալ պիտի մատնըվիք ձեր մէկ ընկերին ձեռքովը ։ Նա Պիղատոսի առաջը հանեցին , դուք ալ օր մի պիտի ելլէք դառն դատաւորի մի առջև ։ Նա դատապարտեցաւ ՚ի մահ խաչի . դուք ալ պիտի կախվիք անարգ կախաղանէն ։ Նա իջաւ դժոխքը . դուք ալ պիտի իջնիք ։ Սակայն երկու մեծ տարբերութի կայ անոր ու ձեր մէջ . զի նա սուտ վկայներէն անիրաւ դատապարտեցաւ վս մեղաց . դուք պիտի դատապարտիք անսուտ վկայներէն , և արդարութբ պիտի սպանվիք ձեր յատուկ չարագործութե համար ։ Նա դժոխքէն ելաւ յաղթանակով , դուք հոն պիտի մնաք յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

Այս խրատս այնչափ շարժեց աւազակներուն սիրտն՝ որ ընկան ոտքը զղջացան , ու առին կրօնաւորն իրեն վանքը տարին ու անկէ ետև թողուցին աւազակութիւնը , բարեպաշտութե հետևեցան բարի խրատով սրբակաց կրօնաւորին ։

Ազդու ազդարար ձայն խրատատուին ,
երբ կից է գործոց իւր բան խրատին .
զի սին բանն ասի շարժումն օդային , !
ոչ պատճառ բարեաց ոչ շարժիչ սրտին ։
Ու մատո՛ զքո սիրտ առ ձայն ազդողին ,
ամբարեա՛ ՚ի նա զբարի բարին .
այնու մեծանաս այն է գանձ ներքին ,
զոր օտարք անտի կողոպտել չունին ։

## Է. Նշդարութն։

Խելացի մարդ մի միշտ կը մտածեր աշ-
խարհիս ունայնութենը վրան ու կը զարմա-
նար, թէ ագահ մարդիկ ինչպէս չեն յա-
գենար, որ իրենց սակաւօրեայ ժամանակն
հանգիստ անցընեն։ Այս բարի խորհուրդ-
ներով այնչափ սիրտը շարժեցաւ, որ ամէն
ունեցած բարին աղքատներուն բաժնեց,
ու լեռը ճգնաւորի նման սրբութ̃ կապրեր։
Երբոր ձմեռը մօտեցաւ կը նայեր որ լեռ-
ներուն մէջ ծակ փապար մի գտնէ ու հոն
բնակի։ Որ մի գտաւ անանկ տեղ մի բնա-
կարանի համար. ելաւ քարերուն վրայէն
մէջը մտաւ. շատ աղէկ տեղ երևցաւ ի-
րեն. բայց երբոր ներսը նայեցաւ՝ տեսաւ
որ կտոր մի ոսկի հոն ձգած է անանկ վախ
եկաւ իրեն այն ոսկիէն, որ կարծեր թէ
մահը տեսաւ։

Ուստի ձգեց ելաւ անկեց սկսաւ փախ-
չիլ. երբոր աստանկ վազելով կանցներ լե-
ռանը մէջէն՝ աւազակները տեսան վրան
վազեցին բռնեցին. հարցուցին թէ ինչու
կը փախչիս. ինչ կայ։ Պատասխան տուաւ
թէ մահը տեսայ, անկեց կը փախչիմ։ Զար-
մանալով սկսան ստիպել, որ շիտակն ասէ.
ինչ բան տեսար որ կը փախչիս։ Ատենը
իրենց հասկըցուց թէ իմ մահս ոսկին է,
ոսկի տեսայ այրին մէջ վախցայ կը փախչիմ։
Աւազակները վրան խնդալով թողուցին,

որ փախաւ գնաց · իրենք իրեք հոգի ելան
գնացին գտան ոսկին սկսան ուրախանալ ·
յետոյ խորհուրդ ըրին հանեցին ստակ մը-
մըն իրենց մէկ ընկերին քաղաք ղրկեցին որ
գինի և ուտելիք բերէ իրենց ։ Այս մարդը
կերթայ քաղաք և ամէն բան գնելէն ետև
կը մտածէ որ բոլոր ոսկին ինքն յափշտա-
կէ · ուստի թոյն առաւ գինիին մէջ լեցուց ,
որ ընկերները խմեն ու մեռնին ։ Այս ո-
ղորմելին երբոր մօտեցաւ այրին քով՝ ըն-
կերներնալ խորհեցան որ զինքն սպաննեն ,
ու ոսկին երկուսին մնայ · այս խորհրդով
ելան դուրս առին ձեռքէն բաները ու զար-
կին սպաննեցին · իրենք նստան ուտել խմե-
լու · բայց որովհետև դեղած էր գինին ,
անոնք ալ հոն մեռան ։

Իսկ բարեսէր Ճգնաւորը ուրիշ յարմար
տեղ չի գտնելով՝ մտածեց թէ աւազակնե-
րը ոսկին անկէ առեր տարեր են , երթայ
հոն բնակի · երբոր կը մօտենայ , կը տեսնէ
որ մէկ աւազակը զարկեր սպաններ են ա-
րիւնոտ պառկած · մէկալ երկուսն դեղով
սեւցած մէկ դի շրջըված են , իմացաւ թէ
ոսկին ինչ մահ բերեր էր իրենց · ուստի
սկսաւ աւելի ուժով վազել հեռանալ այն
մահաբեր տեղէն ։ Գնաց ընկաւ երեսի վրա
շնորհակալ եղաւ ա̄յ , որ զինքն ազատեր էր
այն չար մահէն · և բոլոր կենացը մէջ ոսկի
չուզեց տեսնելու , իբր Ճշմարիտ մահ հա-
մարելով հոգևոր և մարմնաւոր ։

Այս ոսկեօխրաց կշիռ և բաժին ,
մարմին և հոգի ՚ի նոյն մաշողին .
այս սուտ բերկրութիւն մտաց անմտին ,
ծախիչ է կենաց թոյն մահաբերին :
Տես զիա՞րդ ազատ սիրտ առաքինին ,
ազատ ՚ի թունից հրճուի յիւր հոգին .
Թո՛ղ զանբան ոսկին առիթ մահածին ,
հետևեալ բարւոյն նման երջանկին :

## Է. Հոգէսիրութիւն :

Թէոդոս Թագաւորը հանդիսաւոր խաղ մի ուզեց անելու . ուր ժողվեցան ամէն մեծամեծ իշխանները : Խաղէն առաջ երկու իշխան ուզեցին որ երթան դէպ ՚ի անտառը քալեն ու դառնան գան . բայց ասոնք մանկութենէ բարի խրատներով կրթըված ըլլալով՝ սկսան պիտանի և հոգևոր բաներու վրայ խօսիլ բոլոր ճամբան . այնչափ անուշ եկաւ իրենց այս խօսակցութիւն որ մոռցան խաղը . և շատ տեղ անտառին մէջ կը քալեն , ու կը հեռանան : Նայիս անտառին մէկ կողմը ճգնաւորի խուց մի կը տեսնեն կերթան որ օրհնուին առնուն . կը նային որ ներսը մարդ չի կայ . միայն փայտէ ամաններ , ու խարազներ կը տեսնեն հոն . կը զարմանան թէ ասանկ ահռելի տեղ մարդ կարնա՞յ կենալու , ի՞նչպէս մարդ է եղեր հոս բնակողը : Տախտակին տակը նային կը գտնեն ՚որ Անտոն ճգնաւորին վար-

քը · մեկը կըսկըսի կարդալ, որչափ աւելի կարդաց այնչափ սիրտը բորբոքեցաւ · քիչմ ալ կարդաց՝ սկսաւ ա՛խ կանչել ։

Վերջապէս սիրտը չի դիմացաւ սկսաւ այսպէս խօսիլ · Ո՛հ այս ի՛նչ կուրութիւն է մեր գործքը · այս ի՛նչպիսի անցաւոր կեանք ունինք ու միայն անցաւորին ետեւէ ծախեր ենք · ո՛րչափ վտանգներ ո՛րչափ նեղութիւններ քաշեցինք անցաւոր թագաւորին համար, ունայն անուան և փառաց համար · հապա երկնաւոր թագաւորին, անանց բարեաց և փառաց համար ի՛նչ գործեցինք ։ Զորս դին կընայեր · ձեռքերը գլխուն կը զարնէր · այս ի՛նչ խեւութիւն է մեր բանը · աշխարհի համար մարմինի համար բան մի չենք խնայեր, հոգու համար ամէն բան կը խնայենք · արքայութեան համար ոյ համար ի՛նչ արած ունինք ։ Դարձաւ ապա ընկերոջն ասաց թէ ես ալ չի պիտի երթամ քաղաք · ես հոս պիտի մնամ · հոս պիտի գտնեմ իմ հոգիս և իմ յաւիտենական թագաւորութիւնս որ կորուսեր էի ։ Ընկերն ալ իրեն հետեւելով մնացին հոն · հագան այն խարազները նստան ապաշխարեցին, մինչև 'ի մահ սրբութեամբ անցուցին իրենց կեանքը · ինչպէս կը պատմէ 'որ օգոստինոս ։

Տես՝ զիա՛րդ ազդեալ սրտի դիւցազնին,
անդէն ձգեցաւ զհետ շարժողին,
եգիտ մեծութիւն աննիւթականին ։
զոր չարժէ աշխարհ ընդ բոլոր գոյին ։

Պատրաստեմ զմուտ քոյդ ազդարանին ,
Հետևիլ բարւոյն ը̃ սահմանողին .
սէր Հոգեկանին սիրոյ անմահին
ձգեսցէ 'ի վեր սիրտ քո և զՀոգին :

## Է̃ . Ժամասէրութիւն :

Նաբօլի քաղաքը սեպուհ իշխան մի կար շատ բարեպաշտ և ժամասէր . որ բաց 'ի պարտաւորութենէն՝ ամէն կիրակի քարոզի կերթար , ու երբոր տուն կը դառնար՝ լսած քարոզը գործքով կը կատարէր : Այս բարեպաշտ իշխանը մէկ այլազգ գերի մը կառնու , և խնամելով լեզու սորվեցնել կուտայ ու քովը կը պահէ : Գերին ալ ամէն կիրակի իշխանին հետ ժամ կերթար . կը նայէր որ տէրն ինչ քարոզ որ ժամը կը լսէ կերթայ տուն գործքով կը կատարէ . միտքը կը դնէ , որ երթայ քարոզիչը գտնէ աղաչէ որ առջևի կիրակին գերի ազատելու վրա քարոզ տայ , որ ինքն ալ ազատէ : Քարոզիչը լսելով գերիին խնդիրքը՝ սիրով յանձն առաւ կատարելու : Կիրակի եղաւ նորէն եկեղեցին գնացին քարոզի . բայց քարոզիչը ուրիշ բանի վրա տուաւ քարոզը . իշխանը տուն գնաց՝ նոյն քարոզին խրատը կատարեց : Գերին կարծելով թէ քարոզիչը մոռցաւ , նորէն գնաց խնդրեց : Քարոզիչը միտս է՝ ասաց , պիտի տամ ուզած քարոզդ : Բայց հետևեալ կիրակին ալ չի տուաւ նոյն քարոզը . և այսպէս քանի

մի կիրակի անցաւ․ վերջապէս մէկ կիրակի եկեղեցին կերթան, քարոզիչը կըսկըսի գերի ազատելու վրայ փառաւոր քարոզ մի կու տայ․ գերին ուրախանալով տիրոջը հետ տուն կերթայ, նայիս իշխանը կը կանչէ քովը գերին, ազատութեան թուղթը կու տայ իրեն՝ ասելով թէ ասկէ ետև դուն ազատ ես, երբոր կուզես գնա՛ քաղաքդ։

Գերին խնդալով դուրս կելլէ, կը վազէ կերթայ քարոզչին շնորհակալ ըլլալու, որ պատճառ եղաւ իրեն ազատութենը․ ետքը դարձաւ հարցուց թէ ինչո՞ւ համար առջի կիրակին այս քարոզը չի տուիր, ու այսչափ ուշացուցիր։ Պատասխանեց թէ ես ինչ քարոզ որ տալու ըլլամ՝ նախ գործքով կը կատարեմ, ետքը կու տամ․ որովհետև գերի չէի ազատած նայեցայ որ գերի մի առնում ազատեմ, յետոյ տամ քարոզը․ անոր համար ուշացայ։

Գերին այս բանս որ լսեց՝ այնչափ զարմացաւ որ սիրտը շարժեցաւ դարձաւ գնայ իշխանին ոտքն ընկաւ, խնդրեց որ մնայ հոն․ քրիստոնեայ ըլլայ։ Ահա այսպէս փափքին հասաւ և քարոզչին ու իշխանին բարեպաշտութենը հետևելով երևելի բարեպաշտ եղաւ։

Այս պտուղ բարեաց գործոց պանծալի,
այս առաքինեաց օրինակ բարի․
ձգէ զհեռաւորս 'ի գիւտ Ճշմարտի,
'ի լոյս հրաւիրէ զխաւարեալ հոգի։

Այս և քեզ 'ի ձայն մանուկ շնորհալի ,
առաքինեաց տիպ 'ի քեզ գծեսցի ․
լուսատիպ եղեալ լոյս տուր խաւարի ,
փառաւորել զՀայր գործովք լուսալի ։

## Է. Ա̃ծապաշտութիւն ։

Արեւելի ա̃ծաբան մի ուզեց իմանալ թէ աշխարհիս վրայ ո՞վ է թշուառ ողորմելի ․ շատ մտածելէն ետեւ աստուծմէ խնդրեց որ իրեն յայտնէ ։ Օր մի ձմեռուան մէջ կելլէ եկեղեցին կերթայ ․ կը տեսնէ որ դրանը քով խեղճ ողորմելի աղքատ մի մերկ կը դողայ ․ ա̃ծաբանն անանկ խեղճութե̃ մէջ կը տեսնէ աղքատն որ կը մտածէ թէ ահա այս պիտի ըլլայ փնտրուած թշուառս , զի ասկէց աւելի ո՞վ կարնայ ըլլալ ողորմելի ։ Ուստի մօտենալով բարեւ կուտայ աղքատին՝ թշուառ անուանելով ։ Պատասխան կուտայ աղքատը , թէ ես թշուառ չեմ ։ Զարմանալով ա̃ծաբանը կասէ , թէ դուն թշուառ չես՝ հապա ո՞վ է ․ դուն ի՞նչ մարդ ես որ խեղճութիդ չես ճանչնար ։ Պատասխան կուտայ աղքատը , թէ ես թագաւոր եմ ։ Դուն թագաւո՞ր ես , կասէ , քու թագաւորութիդ ո՞ւր տեղ է ։ Ան պատասխանէ , թէ իմ թագաւորութիս հոգուս մէջն է ։

Ա̃ծաբանն աւելի զարմանալով ուրիշ խօսք չի գտներ հարցընելու՝ դառնայ կասէ ․ թէ որ ա̃ծ վճռէ , թէ դուն դժոխքն

երթաս , չես ըլլար թշուառ ։ Ամենևին չէ ասաց · վասն զի ես միշտ իմ ստեղծօղս երկու ձեռքովս բռներ եմ ա՟ծպաշտութեան օրէնքով · թէ որ զիս դժոխքը զրկէ , զինքն ալ հետս կը տանիմ · անատենը դժոխքն արքայութի՟ կըլլայ , ես ալ իմ հոգւոյս թագաւորութիւնը գտնելով՝ ոչ թէ թշուառ , այլ երջանիկ երանելի կըլլամ ։ Այն ժամանակն ա՟ծաբանը աղքատին ոտքն ընկաւ ասաց , թէ իրաւի՝ դուն երջանիկ և կատարեալ ես ա՟ծպաշտութ՟բ · ուրեմ՟ն ա՟ծպաշտուի չունեցօղ չարագործ մարդն է թըշուառ թէ՛ աշխարհիս վրան , և թէ 'ի հանդերձեալն ։

Ահա հիասքանչ գործ ա՟ծպաշտին ,
անկիր երանեալ յամէն վիճակին ·
ձեռք ինքնակալաց՝ զօրք բելլորին ,
չզօրեն բերել արկած երջանկին ։
Ա՟ծպաշտութ՟բ թէ կրթիս յանձին ,
յաղթես աշխարհի՝ դրանց դժոխին ·
մարդ ա՟ծափայլ հրեշտակ 'ի մարմնի ,
զերծ յամէն կրից նեղքին արտաքին ։

## Ի · Արդարութիւն ։

Արիստիդէս աթենացին շատ երևելի ըլլալով իրենց տէրութե մէջ մեծանուն փայլեցաւ թէ՛ խելքով , թէ՛ քաջութ՟բ , և թէ՛ արդարութ՟բ · մինչև մեծ պաշտօնի վրա ելլելով գլխաւոր եղաւ ազգին ։ Բայց սոր

ընութիւնը այնչափ բարեսէր և պարկեշտ էր, որ ամենեւին իւր յատուկ շահը չէր փընտըռեր, այլ միայն ազգին և ժողովրդին աղէկութենը համար կաշխատէր. ոչ փառասիրութիւն գիտէր, և ոչ անիրաւութիւն. մինչ զի իրեն մականուն դրվեցաւ Արդար Արիստիդէս: Սակայն իւր ընկերներէն նախանձոտներ եղան, ու ժողովուրդը ոտք հանեցին որ քշեն զինքը խեցեգրութբ̃. իբր զի՝ խեցիի վրա գրելով ժողովուրդը կը յայտնէր որ չեն ուզեր զինքը, պէտք է աքսորվի:

Այս արդար իշխանն ամենեւին չէր հոգար թէ Աթէնքէն պիտի քշվի. օր մի ելաւ առանձին կըքալէր. տեսաւ որ քաղաքացիներէն մէկը կը գրէր որ աքսորվի Արիստիդէս. գնաց մօտեցաւ հարցուց թէ ինչու համար կը գրես. Արիստիդէս քեզի բանմ՞ արած ունի: Պատասխանեց՝ թէ ոչ ինձի բան արած ունի, և ոչ զինքը կը ճանչնամ. հապա անոր համար չեմ ուզեր որ ամենէն վեր Արդար կանուանի: Ահա այսպէս զուր տեղն աքսորվեցաւ արդարը տասը տարուան համար. բայց իւր արդարութիւն իրեն շուտ հասաւ. զի Քսերքսես Թագաւորը պարսից՝ յունաստանի վրան գալով, ժողովուրդը բերել տվաւ Արդար Արիստիդէսը վեցերորդ տարին, ու թշնամուն դիմացը հանեց նաւով. որ ոչ միայն քաջութբ̃ կատարեց իր պաշտօնը, այլև անկէ ետև մեծամեծ պաշտօններու մէջ մտաւ, ու ա-

մէն անգամ իրեն արդար անունը փայլեցուց իր վրան զարմանալի առաքինութի, և ազգասիրութեամբ ։ Երկար ժամանակ գանձապետ եղաւ, բայց շահասիրութե չունենալուն համար միշտ աղքատ էր . ու աղքատ մեռաւ . մինչ զի իր զաւակները տէրութիը պահեց մեծցուց . բայց արդար անունով ձոխ և պայծառ էր թէ իրեն տէրութե մէջ, և թէ բոլոր աշխարհի ։

Արդարութին է որ տիեզերին,
ու ոյժ զօրութի արքայից բազկին .
Երբ բառնին յերկրէ իրաւունք վեհին,
տապալի աշխարհ կործանի ինքնին ։
Ու քեզ զայն անուն չքնաղագունին,
արդար գործելով յամէն առնելին .
լաւ է վեհ անուամբ պանծալ՝ի կարգին,
քան տիրել գանձուց բոլոր աշխարհին ։

## Ճ . Հնազանդութիւն ։

Ազնուական մեծատուն մի ունէր մէկ հատ զաւակ, որ շատ կը սիրէր հնազանդութեանը համար . զի ամենեւին ծնողացն հրամանէն դուրս չէր ելած . ուստի ամէն ուսում սորվեցաւ . սակայն ծնողաց սիրովը շատանալով՝ առուտուրի բան չէր սորված ։ Երբոր այս տղան չափահաս եղաւ, մայրն սկսաւ հօրն ետեւէն իյնիլ, որ նշանէ որդին . իսկ հայրը խելացի ըլլալով կանչեց տղան քովը ու ասաց, թէ մօրդ խըն-

դիրքը պիտի կատարեմ, բայց նախ կուզեմ որ երթաս մէկ հատ ոսկի վաստըկիս բերես որ տեսնեմ։ Տղան կարմըրելով դընաց, որ հօրը հրամանը կատարէ հնազանդութե̃. սակայն վաստակի ճամբայ չի գիտնալով տրտմած կը մռմռտար։ Մայրը վազեց քովն ասաց, թէ մի՛ տրտմիր. մեր քովն ոսկի շատ. ահա՛ առ այս մէկ ոսկին. վաղը իրիկուն տա՛ր հօրդ տո՛ւր. և այսպէս կը վճարի քու հնազանդութե̃ պարտքըդ։

Տղան մօրն ալ հնազանդելով առաւ ոսկին միւս իրիկունը երբոր հայրը շատրուանին քով նստած էր՝ գնաց քովը կեցաւ. հայրը հարցուց թէ ո՞ւր է վաստըկած ոսկիդ. տղան հանեց մօրը տուած ոսկին հօրը տուաւ. հայրը վրան նայելով վերուց ջուրը նետեց ասելով թէ այս քու վաստըկած ոսկիդ չէ. գնա՛ դուն վաստըկէ՛ բե՛ր։ Տղան ամօթուն գետինը կանցնի. կերթայ տըրտմութե̃ կուլայ։ Նայիս մայրը կը հասնի և կը հարցընէ թէ ինչո՞ւ կուլաս. հայրդ իրեն ոսկին թէպէտ ճանչցաւ, բայց ես վաղը դրացիէն կը փոխեմ ոսկի մի կուտամ քեզի, թո՛ղ ճանչնայ նայիմ։ Ուստի տղուն սիրտ կուտայ մայրը. և միւս օրը կը փոխէ դրացիէն ոսկի մի, ու կուտայ տղուն կը ղրկէ հօրը։ Հայրը ձեռքը կառնու ոսկին, ու բարկանալով կը նետէ ջուրը. այս քու վաստըկածդ չէ՛ կասէ. գնա՛ քու վաստըկածդ բե՛ր։

Նաստէնը տղան միտքը կը դնէ թէ մին-չև որ չերթամ իմ աշխատանքովս հօրս հրամանը չի կատարեմ չի պիտի ըլլայ ։ Ուստի առաւօտանց կանուխ կելլէ կերթայ քաղաքին ծայրը․ կը նայի որ շէնք կը շինեն․ կը փոխէ հագուստն՝ ու կը մտնէ բանւորներուն մէջ կաշխատի մինչև իրիկուն․ յետոյ հագուստը կը փոխէ կերթայ տուն․ և այսպէս մէկ շաբաթ չարաչար աշխատելով հազիւ մէկ ոսկի կը վաստըկի․ և դողալով կը տանի հօրը ։ Իսկ հայրը առաջվանպէս ոսկին վրան նայելով երբոր ջուրը պիտի նետէր, տղան ոտքը կիյնի, ու կը բռնէ հօրը ձեռքը կաղաղակէ, որ չի նետէ մեղք է․ զի մէկ շաբաթ հոգիս հաներ եմ կասէր, քրտինք թափելով վաստըկեր եմ ։

Նաստէնը հայրը ուրախանալով կըսկըսի տղան խրատել, թէ այդ քու հնազանդութիւնդ քեզ արժանի արաւ որ վայելես իմ մեծութիւնս․ որովհետև փորձով գիտցար թէ ապրանքի տէր ըլլալ, բան վաստըկիլը որչափ մեծ և դժվար բան է ։ Ով է որ դըժվարութիւնը չի գիտնայիր՝ շուտով կը կորսընցընէիր իմ ապրանքս ու չէիր ցաւէր․ ինչպէս որ չի ցաւեցար ջուրը նետած ոսկիներուս վրայ․ վասն զի չէիր աշխատած ։ Ուրեմն պահէ միշտ որդիական հնազանդութիւնդ և գիտցիր ունեցածիդ յարգը․ որով կըլլաս տէր և թագաւոր աշխարհի ։

Օ՜ ինչ գեղեցկութի՜ւն քան զայս յաշխարհի,
հնազանդ և հլու ունել պերճ որդի.
զարիւն և ըզկեանս առեալ 'ի ծնողաց,
անդրադարձ նոցին ձօնել նկրտի։
Դու մանուկ ընտիր քաղցր առաքինի,
հնազանդեա՛ կամաց փոքու և մեծի.
Թէ յաղթել կամիս աշխարհակալին,
յաղթեա՛ քոյդ կրից ներքին արտաքին։

ԺԱ. Անյիշաչարութիւն։

Անուանի մեծատուն մի իրեք զաւակ ունէր, իրեքն ալ աղէկ կրթելով և սորվեցընելով մեծցուց ինչպէս որ կը փափաքէր։ Տեսնելով անոնց առաքինի վարքն ու կատարելութիւնը հանեց իր բոլոր ապրանքը հաւասար իրեքին բաժնեց։ Բայց ունէր մէկ անգին քարով մատնի մի. որուն նմանը չէր գտնըվէր. այս մատնին պահեց քովը ու ասաց զաւակներուն, թէ ով որ ձեզմէ մէկ երևելի գործք կամ գեղեցիկ առաքինութիւն անէ՝ անոր կուտամ։ Որդիքն իրմէն հրաման առին, որ երթան իրեք ամիս պտըտին ու երևելի գործքով մը դառնան։ Այնչափ ժամանակ անցնելէն ետև դարձան եկան. հայրը կանչեց զիրենք առաջն ու սկսաւ հարցաքննել, թէ ո՞վ աւելի մեծ առաքինի գործք արած է։ Առջի որդին պատմեց թէ ինձի պատահեցաւ օտարական մարդ մի. որուն հետ ընկեր ըլլալով բարե-

կամ եղանք , անանկ ինծի հաւատացեր էր որ տրուած ինծի մէկ մնտուկ ոսկի պահելու առանց համրանքի և առանց գրի . ուսկից շատ բան կարնայի վերցընելու . բայց չի կամեցայ հաւատարմութեան դէմ մեղանչել , ամբողջ պահեցի . ու եկածին պէս հանեցի ամբողջ տվի իրեն ։ Հայրը պատասխանեց թէ բարի է գործքդ . բայց այս առաքինութիւնն անելով բնական պարտքդ կատարեցիր . զի օտարին ոսկին գողնալով պիտի ըլլայիր անիրաւ և զրկօղ , որուն հատուցումն պէտք է որ ըլլայ կամ հոս և կամ հանդերձեալը ։ Երկրորդ որդին պատմեց , թէ ծովուն քովն էի , տեսայ որ տղայ մի յանկարծ ծովն ընկաւ , ու պիտի խեղդըվէր . սիրտս չի դիմացաւ մեկէն ծովը նետվեցայ բռնեցի տղան ողջ հանեցի ծովէն ազատեցի ։ Պատասխանեց հայրը , թէ քու գործքդ ալ բարի է . բայց դուն ալ բնական պարտքդ կատարեցիր . զի ամէն մարդ պարտական է իրարու օգնել , և իրարու հասնիլ մինաւանդ վտանգի մէջ . որովհետև օգնական մարդը օգնութիւն կը գտնէ , և խստասիրտ մարդը անողորմ կը կորսըվի ։

Ան ժամանակը երրորդ որդին պատմեց հօրը , թէ անիրաւ մարդ մի նախանձելով անանկ թշնամի եղաւ ինծի , որ ետևէս ընկեր էր զիս սպաննելու . շատ մեծ դժվարութեամբ երբոր կը զգուշանայի իրմէն , օր մի պատահեցայ իրեն , տեսայ որ լեռա-

նը ծայրը պառկէր կը քնանար. անանկ դար ու վտանգաւոր տեղ էր, որ քունին մէջ շարժածին պէս պիտի գլորէր վար իյնէր հազար կտոր ըլլար. Նայեցայ վրան սիրտս չի դիմացաւ, ուզեցի որ զինքը այն վտանգէն ազատեմ. իրաւ ինծի մեծ թշնամի էր, բայց ես կամեցուկ մօտեցայ իրեն ու զգուշութե՛ արթընցուցի, որ ելաւ այն վտանգէն ազատեցաւ։ Հայրը լսածին պէս վազեց գրկեց այս առաքինի որդին ասելով. սիրելի զաւակ քեզի կը վայլէ այս իմ անգին մատնիս. զի քու առաքինութիւնդ արժանի է ամէն բարեաց. որովհետեւ բարի անել բարերարին է գործք բնական. բայց բարի անել չարարարին՝ է գերազանց գործք, գեղեցիկ առաքինութի՛ եւ դիւցազնական բարեգործութի՛։ Այսպիսի մեծ գովասանքով եւ սիրով հանեց մատնին դրաւ առաքինի զաւակին մատն ու հայրական օրհնութե՛ն օրհնեց։

Այս պարգեւ բարեաց անյիշաչարին,
աննման գործոյ տրիտուր անգին.
քանզի վարձք գործոց վսեմագունին,
վսեմ գերազանց չափակցեալ նմին։
Աւէ 'ի սոյն չքնաղ գործ տիրականին,
բերիս նկրտիս զերթ առաքինին.
վարձք անկշռելի քեզ պահի յերկին,
մեծապանծ փառօք յանմահից կարգին։

## ԾԷ. Ապստամբութիւն.

Արշակունեաց թագաւորութիւնը վերնալէն ետև բոլոր Հայաստան ոտնակոխ եղաւ պարսիկներէն. շատ նախարարներ պատուի համար ուրացան հաւատքն ու շատ տեղ կրակատուններ կը շինէին և կրակ կը պաշտէին. իսկ բարեպաշտ մարդիկ մեծ հալածանաց մէջ էին։ Պարսիկները ուրացողներուն վատութիւնը տեսնելով բոլոր հայոց ազգը կատէին, և նախատանօք վարելով ամէն ազգէն անարգ կը համարէին հայերը։

Այս ժամանակը՝ որ Վարդանայ եղբօր որդին քաջն Վահան տեսնելով որ հաւատքին հալածանքն ու ազգին խեղճութիւնը վառւեցաւ սիրտը ազգասիրութ̃ և ա̃ծպաշտութ̃. ուստի միաբանեց իրեն հետ ամէն բարեպաշտ նախարարներն ու կեանքը դնելով հաւատքին և ազգին համար, սկսաւ քաջութեամբ հալածել Հայաստանէն կրակապաշտ պարսիկներն և ուրացողները։ Թէպէտ շատ քիչւոր էին առջի բերանը. բայց ա̃յ զօրութեամբը այնչափ զօրացան, որ հազարաւոր պարսիկները ցիրուցան կը ջարդէին զարմանալի քաջութ̃. անանկ որ միայն Վահանայ անունը զամէնքը կը դողացնէր։

Պերոզ թագաւորը պարսից լսելով Վահանայ գործքերը՝ անհամար զօրք հանեց վրան, որ ջնջէ զինքը. բայց նա ա̃ծպաշ-

տութ՟ն և ազգասիրութ՟ն հոգւով անանկ վառուած էր որ ոչ միայն չի վախցաւ, հապա աներկիւղ և քաջութեամբ մտաւ զօրքին մէջ իրեն քաջերովը և սոսկալի ջարդտալով մէկալ դիէն ելաւ, ու սարսափեցուց և խորտակեց պարսից զօրութիւնը ։ Գրեթէ ամէն պատերազմին մէջ այսպիսի քաջութեամբ ցիրուցան արաւ թշնամիները ։ Բայց վերջի մեծ յաղթութ՟ին եղաւ, երբոր երսուն քաջով մտաւ բիւրաւոր պարսից բանակն ու կայծակի նման զանոնք հալածելով մէկալ կողմէն ելաւ․ մինչև անհաւատ թշնամիներն վկայեցին թէ Վահանին օգնական աներևոյթ զօրութ՟ի մի կայ․ ուստի չէին համարձակեր իրեն նայելու․ թէպէտ ինքը զանոնք մարդու տեղ չի դնելով քովերնէն կանցնէր ։

Այս Պերոզ մեռնելէն ետևնստաւ թագաւոր պարսից Վաղարշ, որ լսելով Վահանայ անպարտելի քաջագործութիւնները զարմացաւ մնաց․ զի քաջին դէմ ծեծկըւող զօրապետները կը վկայէին թէ այսպիսի զօրաւոր մեծ մարդ չէ տեսած․ որ ազգասիրութեամբ աչքին բան մի չերևնար, ու օր ըստ օրէ կըզօրանայ ։ Վաղարշ սէր կապեց Վահանայ վրան, ու հրովարտակ ղրկեց իրեն որ հնազանդի հաշտըլելով հետը ։ Վահան հաւանեցաւ թէ որ իրեն իրեք խնդիրքը կատարէ․ Նախ՝ թող տայ իրենց որ ամէն տեղ քրիստոնէական

կրօնը պաշտեն փառաւորապէս․ Հայ մարդ-չուրայնեն, և կրակատըներն Հայաստանէն վերցընեն։ Երկրորդ՝ Թող գիտնան լաւն ու գէշն ընտրելու․ բարի և քաջ մարդիկ սիրեն ու պատուեն․ իսկ անարգ ուրացող մարդիկ չի պատուեն կրակապաշտ ըլլալներուն համար։ Երրորդ՝ Թագաւորն իր աչքովը նայի և ականջովը լսէ ամէն մարդու գործքն ու քաջութիւնը․ և չի հաւատայ ստասայ զրպարտողներուն։

Վաղարշ Թագաւորը տեսաւ որ արդար էին Վահանայ խնդիրքները․ ոչ միայն կատարեց գովելով անոր ազգասիրութիւնը, որ բոլոր ջանքը ազգին լաւութեանը համար էր, այլև հրամայեց, որ իրեն երթայ քաջն Վահան ու փառաւորի պատուով աննման քաջութեանը համար։ Աստի երբոր Վահան բարեպաշտ նախարարներով գնաց ներկայացաւ Թագաւորին, ու խօսեցաւ ատենին մէջ զարմանալի ատենախօսութեամբ․ ամէնքը մեծապէս հաճեցան, և գովեցին անոր խոհեմութիւնը։ Ապա տուաւ Թագաւորը մեծ պատիւներ Վահանայ, նա և Սպարապետութիւն ազգին վրայ․ նոյնպէս տուաւ ուխտապահ քաջ նախարարներուն իրենց պատիւը, և մեծապանծ փառօք ղրկեց զիրենք Հայաստան։ Երբոր Վահան հասաւ Հայաստան՝ մեծ հայրապետն Յոհան Մանդակունի ելաւ առաջ՚նը խաչով, և՚նը նըշխարքով լուսաւորչայ՝ օրհնեց զինքն ու տա-

րաւ եկեղեցին բոլոր ժողովրդով, գովեցին և փառաւորեցին զԱծ, որ փառաւորեց իւր փառաւորիչը ։

Ցօկեց ետև Վաղարշ տեսնելով Վահանայ հաւատարմութիւն ու խոհեմութիւնը ղրկեց իրեն Մարզպանութի, և եղաւ մը և գլուխ ազգին ։ Բոլոր հայաստան ցնծութեամբ և ուրախութեամբ լեցվաւ, որ անանկ փառաւոր ազգասէր իշխանը մը եղաւ ազգին ու հայրաբար կը խնամէր զամմէնքը ։ Իսկ մեծ հայրապետը նորէն օրհնելով իւր պայծառ իշխանը, խօսեցաւ գեղեցիկ Ճառ մի սքանչելի ատենաբանութի . նախ՝ գովելով և փառաբանելով զԱծ . երկրորդ՝ մեծարելով Վահանայ քաջութիւնը, ազգասիրութիւնը և բարեպաշտութիւնը . երրորդ՝ օրհնելով զամմէնքը, որ այսպէս զօրացան փառաւորապէս ։ Իսկ Վահան խոնարհելով առաջի Այ չնորհակալ եղաւ, և անկէ ետև մինչև ցմահ նոյն բարեպաշտութեամբ և ազգասիրութեամբ կառավարեց ազգը խոհեմապէս, և օրըստօրէ պայծառացուց թէ քրիստոնեայ ժողովուրդը, և թէ քնի մը հաւատքը . և այս բարեպաշտ ազգասիրութիւնը և իշխանութիւնը երտուն տարի տեւելով շատ աղէկութի տեսաւ ազգը, և միշտ պատուեցաւ փառաւոր անունը քաջին Վահանայ ։

Այս պատգամ սիրոյ կուտակ Ճշմարտին,
վառիլ և մաշիլ 'ի սէր ընկերին .

այս գործ է սիրոյ սիրօղ քաջազնին ,
ծախել զոր ունի 'ի սէր ազգային ։
Տուր 'ի սէր ազգին կեանք քո և մարմին ,
կեալ մնալ անմահ 'ի մտունդ նորին .
զի կեալ մ՟ն անձին է կեալ սոսկ մարմին ,
կեալ 'ի պէտս ազգին է բանականին ։

## ԾԳ. Սրտէուրութիւն ։

Երեւելի խոհեմ մարդ մի ունէր երկու որդի . որ շատ մեծ հոգ ունեցաւ երկուսն ալ աղէկ մեծցընելու կրթելով , և ուսում տալով , որ ընտիր խելացի մարդիկ ըլլան . և ինչպէս որ կը փափաքէր ազնիւ խելացի զաւակաց հայր ըլլալու՝ փափաքին հասաւ . զի անանկ շնորհալի իմաստուն զաւակներ եղան , որ աշխարք կը զարմանար անոնց խելքին քաղաքավարութենը և պարկեշտութեանը վրան ։

Այս սիրուն զաւակները երբոր ասանկ շնորհալի կը ծաղկէին մատաղ հասակի մէջ՝ հայրը ամէն բան կը ձգէր ու անոնց վրա նայելով կըզմայլէր . շատ անգամ բանը կը ձգէր վազէր կերթար զաւակները տեսնելու . որչափ նեղութիւն ունենար , անոնց երեսը նայածինպէս կը մոռնար ։ Որչափ որ անոնց առաքինութիւնը և եղբայրսիրութիւնը կաւելնար՝ հօրը սէրն ալ այնչափ կը բորբոքէր . անանկ որ ամէն րոպէ կը դողար վրանին . նոյն չափով անոնք ալ սիրական ծնող-

քին վրա կը դողային որդիական սիրով։ Ուստի ասոնք առաքինութեան պատկերք մի եղած էին աշխարհիս մէջ իրենց բարի վարքովը։ Սակայն ասոնց սէրն ու քաղաքավարութիւնը անանկ դժոխային նախանձ մի բերաւ բռնաւոր իշխանին, որ կը տիրէր նոյն քաղաքին անիրաւութեամբ. մինչև սկսաւ ետևներէն իյնիլ պատճառներ փնտռելու, որ զիրենք կորսնցընէ. վերջապէս սուտ բանով մի վերուց երկու տղան ալ բանտը դըրաւ սուտ վկայներով, ու հաստատեց որ երկուսն ալ մեռնին. խեղճ հայրը երբոր լսեց, խելքը գլխէն գնաց, վազեց գնաց բռնաւորին ոտքն ընկաւ, խնդրեց աղաղակեց, որ ողորմի խնայէ զաւակներուն ու չի մարէ ճրագը. որ սքանչելի օրինակ բարի մնան աշխարհիս վրան, և ծնողական սրտին մխիթար ըլլան։ Այսպիսի աղէտալի խօսքերով որչափ որ ջանաց բռնաւորին սիրտը կակղցընել, այնչափ քարացաւ նա. մինչ զի քովի մեծամեծներուն սիրտը չի դիմացաւ՝ անոնք ալ սկսան աղաչել։ Ողբալի հայրը կաղաղակէր որ անոնց տեղը զինքն սպաննէ. իսկ իշխանները կաղաչէին որ գէթ մէկ տղան չըսպաննէ թողու ծնողքին մխիթար։

Այս անօրէն բռնաւորը որովհետև կուզէր որ ծնողքին սիրտը խորտակէ, հրաման հանեց, թէ երկու որդուն մէկը պէտք է որ մեռնի. հապա հայրը որն որ կուզէ՝

այն թող մեռնի · ուստի բերին զաւակնե-
րը բանտաւորին առաջը · ցաւալի հայրն ալ
հոն բերին · որ որոշէ , մէկ զաւակը մեռնե-
լու տայ , մեկալն առնու իրեն ։ Շարժե-
ցաւ խեղճին ծնողական գութը · այլայլե-
ցաւ արիւնը · նայելով զաւակներուն վրա
սիրտը կտրտեցաւ , վազեց գնաց պլլըւե-
ցաւ զաւակներուն · ողորմագին ձայնով
խնդրեց բանտաւորէն որ երկու զաւակին ալ
խնայէ , ու զինքն սպաննէ ։ Տեսաւ որ մտիկ
չըրաւ , նորէն աղաղակեց · ո՛վ բռնութե՛ն ·
ո՛ր զաւակս տամ , և ո՛րը պահեմ · երկուսն
ալ սիրուն և առաքինի · երկուսն ալ ան-
գին մխիթար ծնողական սրտիս · երկուսն
ալ հոգույս ճրագը · և սրտիս փառքը · այս
աչքերս ինչպէս տեսնեն անմեղ զաւակիս
մահը · այս ոտքերս ինչպէս կոխեն զաւա-
կիս արիւնով ներկած հողը · շատ աղէկ է
որ ես մեռնիմ քան թէ աննման զաւակիս
մահը տեսնեմ ։ Նայիս անանկ այլայլեցաւ
սիրտն որ երևակայութիւն , որ կորուս միտ-
քը , չի գիտցաւ արածը · այլ չի դիմացաւ
սիրտը հանեց սուրը զարկաւ զինքը մեռ-
ցուց · և իւր արիւնով շարժեց ամենուն
սիրտն ու զոհ եղաւ զաւակներուն · և այս-
պէս զանոնք ալ ազատեց իւր մահուամբն ։

Այս է բնութեան անժոյժ բռնութիւն ,
տենչայ զաւակաց զոհել զիւր արիւն ·
այս ցաւած սրտի կիրք անհնարին ,
վազվազեալ բերի յաղէտ դառնագոյն ։

Դու՛ զուարկ ընտիր բարեկիրթ ներհուն,
ծնողական սրտի մխիթար սիրուն.
Ջանամ պանծալի վեհանալ 'ի նոյն,
փառաւոր անմահ 'ի կեանս 'ի մահուն։

ԾԴ. Ոնողաջան կէրտ։

Իտոմենէ դեւկալիոնեան Կրիտոս թագաւորը, տրոյական պատերազմին ժամանակը կերթայ նոյն քաղաքը պաշարելու յունաստանի ուրիշ թագաւորներուն հետ։ Այս քաղաքը կործանելէն ետեւ Իտոմենէ կը մտնէ նաւն որ քաղաքն երթայ։ Բայց այնպիսի սաստիկ ալէկոծութիւն մի կը պատահի, որ ամմէնքը կը յուսահատին. իսկ փորձ և զօրաւոր նաւավարները կը հաստատեն թէ այս վտանգէն ազատելու ճար չի կայ։ Ամէն մարդ մահն առաջը կը տեսնէր, ամենուն կերեւնար, թէ անդունդը բերանը բացեր է որ զիրենք կլանէ. ուստի ամմէնքը լացով ողբով կուլային իրենց դժբաղդութիւնը, որ գերեզմանի ալ արժանի չեղան։

Իսկ Իտոմենէ վերցուց աչքերը երկինքը դառն տրտմութեամբ սկսաւ աղաղակել. Ո՛վ ամենակալ տէր, դուն որ ունիս տէրութիւն ծովուն ալիքներուն վրա, լսէր ողորմելոյս, ողորմէ խեղճ թշուառիս. ահա կուխտեմ. եթէ զիս ազատես ու հասցընես իմ կղզի

Կիրիտ՝ խորտակելով ծովուն զարհուրելի բռնութիւնը, ես զօհեմ քեզ այն գլուխն, որ նախ աչքիս կերևնայ։

Սակայն իւր որդին գտնալով հօրը դարձը պատրաստվէր էր որ դիմաց երթայ ու հօրը հետ դրկախառնի, խեղճը չէր գիտէր թէ այն պիտի ըլլար իրեն անձին կորուստ։ Հայրը ազատելով ալէկոծութենէ շիտկեց նաւը դէպ 'ի նաւահանգիստը, տեսաւ հեռուէն հայրենիքը ուրախանալով շնորհակալ կըլլար ա̃յ, որ իւր ուխտին հաճեցաւ ու զինքը ցանկալի երկիրը հասուց, սակայն մեկէն իմացաւ, թէ քանի՞ տրտմալի էր արած ուխտը։ Լաւ հասկըցաւ իւր դժբաղդութիւնը, և կը ցաւէր անխորհուրդ ուխտին վրայ։ Ի՛նչ զի կը վախնար հասնելու քաղաքը, և տեսնելու իւր ընտանիքը. ես առաւել կը դողար որ չըլլայ թէ որդին տեսնէ, որ շատ աւելի սիրելի էր աշխարհիս մէջ։ Սակայն անգութ ձախորդութին աշխարհի, որ կը ջանայ միշտ պատժելու մարդիկ և խոնարհեցնելու մեծամեծները, կը հալածէր աներևոյթ ձեռքով իտօմէնէ։ Սան զի հաղիւ թէ հասաւ քաղաքն ու չի համարձակելով աչքը վերուց որ նայի, ահա՛ տեսաւ սիրական որդին, որուն համար էր վախն որ չըլլայ թէ տեսնէ. մեկէն զարհուրելով անդին դարձուց երեսը. աչքը կը փնտռուէր ուրիշ գլուխ մի տեսնելու, որ քիչ սիրածն ըլլայ, որպէս զի ծառայէ զո-

հին, բայց պարապ տեղը կը նայէր · զի որ-
դին որդիական սիրով վազեց ամենէն ա-
ռաջ հասաւ կարօտալի հօրը, փաթթըվե-
ցաւ վզին փափաքանօք · բայց տեսաւ որ
հայրը տրտմութ̃ե լեցված ոչ երեսը կուզէ
նայիլ, և ոչ իւր գգուանքը կընդունէր,
այլ արտասուօք կողբար · զարհուրեցաւ
տղան, չի դիմացաւ սիրտը ։ Ո՞վ հայր իմ
ասաց, ուսկի՞ց է այդ քու տրտմութի̃դ · այս-
չափ երկար հեռաւորութենէդ ետև ինչո՞ւ
կը վշտանաս որ թագաւորական քաղաքը
հասար · և ինչո՞ւ զաւակիդ ուրախութ̃ենը
վրա տրտմեր ես ։ Ի՞նչ արի ես, որ աչքդ
իմէ կը դարձընես կը վախնաս երեսս նայ-
ելու ։ Հայրը տրտմութ̃ե լեցված չունէր
կարողութ̃ի որ պատասխանէ · վերջապես
խորունկ հառաչանօք սկսաւ ասել · Ա՜հ տ̃ր,
ի՞նչ խոստացայ ես քեզ · և դուն ի՞նչ գնով
ազատեցիր զիս ալէկոծութենէ · տա՛ր զիս
տու՛ր ալիքներուն և ժայռերուն, խորտա-
կէ՛ զիս, որ կատարի տըրտմալի կեանքս ·
թող որ ապրի որդեակս ։ Ո՞վ բռնութ̃ես ·
ահա՛ ու իմ արիւնս, ու խնայէ՛ զաւակիս ։
Այսպէս խօսելով քաշեց սուրն որ ինքը
զինքն սպաննէ, որ որդին ազատի մեռնե-
լէն ։ Բայց հասան հօն մեծամեծները չորս
դին կեցած՝ բռնեցին ձեռքն արգիլեցին ։

Սօփրօնիմոս ծեր պատգամախօսը հա-
սաւ իրեն ու սկսաւ զինքը համոզել, թէ
ի՞նչ հարկ կայ որդիդ զոհ անելու · առանց

անոր ալ կըլլայ. քու խոստումդ է անխա-հեմ. Ա՜ծ չուզեր բնաւ պատուիլ անգթու-թեամբ. զգո՛յշ կեցիր չըլլայ թէ աւելցնես մեղքդ ուխտիդ յանցանքին վրայ, կատա-րելով ուխտդ ընդդէմ օրինաց բնութե՜ն. Զոհէ՛ հարիւր ձերմակ ցուլ, ցանէ՛ անոնց արիւնը սեղանին չորս դին, պսակելով ծա-ղիկներով, և ծխելով անուշահոտ խուն-կեր՝ աւելի ընդունելի կըլլայ ա՜յ.

Իտօմենէ գլուխը կախած կը լսէր այս խօսքերը, բայց որդւոյն կսկըծուն սաստիկ խռոված, դէմքը դեղնած այլանդակ, ա-մէն կէտի գոյնը կը փոխուէր, ու բոլոր ան-դամքը կը դողային սարսափմամբ: Իսկ որ-դին բանը հասկընալով աղաղակեց հօրը. Ահա ես հայր իմ. քու որդիդ պատրաստ է մեռնիլ զոհ ըլլալ ա՜յ. չըլլայ թէ նորա բար-կութի՜ը քեզի բերես. ես զոհ կը մեռնիմ. որպէս զի իմ մահս պահէ քու կեանքդ. Զարկ հայր իմ մորթէ՛ զիս. մի՛ վախնար, թէ անարժան որդի կերևնամ քու մեծու-թե՜դ՝ վախնալով մահուանէ. Հայրը տղուն այս քաղցր ձայնին որ լսեց բոլորովին խոր-տակեցաւ սիրտը, կորուց միտքին կարողու-թի՜ը՝ ուխտին բանը միտքը բերելով խիղ-ճը կատղեցաւ, արիւնը բռնկեցաւ, վերուց սուրն որ զարնէ. տղան որին դէմ ելաւ, յանկարծ որդւոյն սիրտը մտաւ սուրը, թարմ արիւնը ոգեխառն սկսաւ վազել. Ծովի եզերները մինչև որ բռնեցին, արիւ-

նաթաթախ սուրը տղուն սրտէն դուրս հանեց, որ կը ծխար։

Ողորմելի տղան աւելի սիրական ըլլալուն հօրը, աւելի խեղճ եղաւ. նայիս ընկաւ վազած արիւնին մէջ, աչքը կիսաբաց խաւարած ստուերաւ մահու. նման գեղեցիկ շուշանին, որ արմատէն կտրելով արօրէն՝ կիյնի դաշտին մէջ խամրած խորտակած, չի կրնար վեր կենալ. Թէպէտ դեռ չէ կորուսած բնական ճերմակ գոյնը. բայց կեանքը մարած է, ու երկրէս ալ չի կրնար մնունդ առնելու։ Այսպէս եղաւ սիրուն որդին Իտօմէնայ, որ Թարմ և նորահաս ծաղիկ ըլլալով ողորմելի հնձեցաւ ծաղկափթիթ հասակին մէջ։

Իտօմէնէ սաստիկ կըսկըծուն անզգայ և խելագար եղաւ. ոչ ուր եղածը գիտէր և ոչ ինչ ըրածը։ Վազելով դէպ 'ի քաղաքը որդին կը հարցընէր։ Իսկ քաղաքացիք տեսնելով այս զարհուրելի դիպուածը ցաւակից եղան խեղճ որդւոյն, ու երես դարձուցին Թագաւորէն։ Իսկ բարեկամները առին Թագաւորը նաւը դրին ու ծովն ելան գնացին։ Իտօմէնէի խելքը գլուխն եկաւ, հասկըցաւ աղէտալի դիպուածը որդւոյն. և շընորհակալ եղաւ բարեկամներուն, որ զինքը հանեցին այն երկրէն, որ սիրական զաւակին արիւնովը շաղւած էր. ուր չէր կարօղ բնակելու. գնաց Սալէնթինայ նոր քաղաքը շինեց, ու հոն հաստատեց Թագաւո-

բուԹիւնը՝ միշտ ողբալով ազնիւ զաւակին
վրա ։

Նարեզարդ զաւակ տայ զարեն անգին ,
զոհէ զայն 'ի սէր ծնողականին ․
զոր փոխ էր առեալ յարենէ նոցին ,
ընծայէ սիրով կենաց տուողին ։
«Ն, եզ է օրինակ մանուկ դիւցազին ,
զոհ լինել ծնողաց զոհ կենարարին ․
զի այն է կեալ միշտ անմահ 'ի մահին ,
անմահ յիշատակ Թողեալ յաշխարհին ։



## ԺԵ · ՀԱՅՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՂԻՍԱԲԵԹԻՆ

### Ա. Գնէպուած.

Տօպօլսքի սիպերիայի մայրաքաղաքը շինած է Թօպօլ և Երթիշ գետերուն մէջոցը · որուն հիւսիսակողմը կը շրջապատէ ընդարձակ անտառն ու կերթայ մինչև սառնապատ ծովը ։ Այս միջոցը կայ 1100 վերստ մինչև ապառաժ լեռները, որ միշտ ծածկած են սառերով · ուր ջրերը սառած ըլլալով ոչ դաշտերը կոռոգանեն և ոչ ծաղիկ մի կը բուսցընեն ։ Ինչ որ աւելի բևեռին մօտենաս, և ոչ մեծ ծառ կը տեսնես · այլ տեղ տեղ անպէտ թուփեր, բժշկական խոտեր, և կենդանիներ ։

Ահա ասոնք են այս տխուր տեղերուն զարդարանքը ։ Ապա կերևնան ճախլին տե-

զեր լեցուն մամուռներով, որ կերևցնեն բնութեն ձիգը · անկէ ետև այլ բոյս չերևնար · ցուրտն ու սառը կը թագաւորէ ։ Սակայն բնութիւնը ուրիշ տեսարան մի կերևցնէ, որ է հիւսիսային արշալոյսը · հորիզոնին վրա կերևնայ շատ անգամ լուսափայլ կամար և շարժական լուսեղէն սիւներ երկինքը կախված, որ մեծ զուարձութիւն, և զարմանք կը բերեն մեր կողմերէն աքսորվածներուն ։ Թոպոլսքի մայրաքաղաքին հարաւային կողմէն կանցնի Իշիմ գետը · ուր տեղ տեղ սերմնած են դաշտերը · իսկ դառն լիճը սահմանն է Խըռխըզ թաթարներուն · որոնք թեպետ այլազգ են, այլ զարմանալի աւելորդապաշտութիւններ ունին հանդերձ կախարդութեամբ ։ Շատ անգամ դէպ 'ի երկինքը կը կավին, թէ ուրիշին խնդիրքը կը կատարես մերինը ինչու չես կատարեր · երբեմն հրացան քաշելով կըսպառնան · որ տայ ած իրենց խնդիրքը ։ Այս քաղաքին ձախակողմը կը շրջապատէ Իրթիշ գետը, իսկ աջակողմը Թօպօլ գետը ուր անբոյս և անբեր տխուր տեղեր են · ուրիշ բան չերևնար · եթէ ոչ ժայռեր մէկմէկի վրա դիզած · օդը թանձր, աստիճանը ծանր, և արեգակը տրտում ։

Իշիմ գաւառը աւելի բարեխառն ըլլալով սիպերիայի պարտէզը կանուանի · որովհետև ամառ կը տեսնէ · և ձմեռը միայն ութ ամիս կը տևէ · բայց ցուրտը շատ սաս.

տիկ է . մանաւանդ՝ երբ հիւսիսային հովը կը փչէ . սեպտեմբերի ամէն ջուր կը սառի , և կը տևէ մինչև մայիսին վերջը . անկէ ետև ծառերը կըսկըսին կանանչիլ , և բոյսերէն անոյշ հոտ բուրել . Թռչուններն երգելով կը զուարճանան , հիւսիսային սագերը ջրերուն երեսը կը կարկաչեն , արագիլն ու սպիտակ կռունկը եղէգներուն մէջ բոյն կը շինեն ձագ հանելու համար . սկիւղ (շընձառ) կենդանիները մէկ ծառէն մէկալը ցատկելով կը ձայնեն ։ Այս զուարճալի տեսարանը բնութեան քաջալերելով կը զօրացնէ բնակիչները . որոնց երջանիկ օրերն ատոնք են ։ Բայց որոնք որ աղէկ երկիրներէն հոն աքսորուած են . ամենևին զուարճութիւն չեն իմանար ատանկ բաներէն ։

Այս անբաղդ աքսորուածները մէյմէկ դիպուածով վարվեցան հոն որոնց մեծ մասը Թօպօլսքի քաղաքին քովերը կը բնակին մինչև Իշիմի սահմանը . ոմանք դաշտերու մէջ կը բնակին խրճիթներով ։ Ռուսաց տէրութիւնը ողորմելով հոգացաւ իրենց որսորդութեան ապրուստի համար . սակայն այս ողորմելի մարդիկը ամէն դի սփռուած ըլլալով՝ ո՛ր կողմն որ նայիս՝ սրտիդ գութը կը շարժի , և ամէն տեղ խեղճութիւն կը տեսնես ։

Տոմսքա երկրորդ քաղաք կը համարվի սիպերիային . ուր կը նստի երկրորդ կառավարիչ իշխանը . ասկէց իրեք վերստ հե-

ռու՝ ջրոտ անտառին մէջ բոլորակ լճին քով կը բնակէր աքսորուած տուն մի · երեք հոգի էին, այր կին և դուստր, այրն էր 45· տարուան Պետրոս Սփինձէր անուամբ · կինը 30 · տարուան Ֆէօտորա անուամբ · իսկ դուստրը փոքրիկ և գեղեցիկ ծաղկափըթիթ, Եղիսաբեթ անուամբ։ Այս խեղճերը փակուած ըլլալով այս անմարդաբնակ անտառին մէջ՝ ամենևին հաղորդակցութիւն չունէին մարդու հետ ։ Սփինձէր միայն կերթար որսի, այլ ընաւ չէր կարող Սաիմքա քաղաքը մտնելու · իւր կինն ու աղջիկը մարդ մի չէր տեսեր, բայց ՚ի աղքատ թաթարներէն՝ որ իրենց կը ծառայէին · նաև մարդ չգիտէր թէ ուսկից են, որո՞ւն ցեղէն, և ինչ պատճառով աքսորուած են։ Միայն մեծ իշխանը Թօպօլսքի քաղաքին գիտէր ու իւր տեղապահ իշխանին ալ չէր յայտնէր, որ կը նստէր Սաիմքա ։ Վասն զի երբոր ասոնք հոն աքսորուեցան՝ իշխանը ղրկեց զանոնք Սաիմքայի իշխանին ու պատուիրեց որ անոնց համար յարմար բնակարան մի շինել տայ հանդերձ փոքրիկ պարտէզով · նա և հոգայ իրենց կերակուրն ու հագուստը · բայց սաստիկ արգելած էր որ ոչ հաղորդակցութիւն ունենան դուրսի հետ, և ոչ թուղթ մի անցընեն ռուսաց տէրութեան, կամ թագաւորական քաղաքը։

Այսչափ զգուշութիւնները կարծիք կը բերէին թէ պէտք է որ ասոնք մեծ ցեղէ

եղած ըլլան . և Սփինճէր անուան տակը ծածկած կայ ուրիշ փառաւոր անուն . համեստ անբաղդութ̄ի, և մեծ անիրաւութ̄ի կամ եղեւն : Որչափ որ ջանային իմանալու ասոնց որպիսութ̄ինը, այնչափ ծածուկ մնաց : Երբեմն երբեմն որսորդները կը մտնէին այն անտառին մէջ . երբոր կը հանէին լճին քովը ու կը հարցընէին անոնց անունը . պատասխան կուտային, թէ այս խրճիթին մէջի բնակիչները դժբաղդ ողորմելի են : Անոնք ալ գթալով իրենց վրա կը հեռանային ասելով . ա̄ծ ողորմի ձեզ, ու օր մի տանի ձեր հայրենիքը հասցընէ :

Այս լճին մէկ կողմն էր ընդարձակ դաշտ գերեզմաննոց, ուր կերևնային մեռելի ոսկորներ որ յայտնի կերևցընէին թէ հոն կայ եղեր հին ժողովուրդ . որոնց ոսկի զարդերն՝ որ իրենց հետ թաղւած էին ժամանակով՝ մարդկային ագահութ̄ գտնըւեցան ու յայտնի եղան : Իսկ արևելեան կողմը լճին կար փայտաշէն փոքրիկ մատուռ մի, որ քրիստոնեայք շիներ էին :

Արդ Սփինճէր այս կողմերս մինակ պտըտելով երկայն ձմեռուան մէջ կը զարնէր զանազան կենդանիներ . կզնաքիս (զէրտէվա) սամոյր, աքիս (քաքում), ուր խիստ շատ կան : Անոնք կը զրկէր Թօպօլսքի ծախել կուտար . ու կնկանը ուզած բաները առնել կուտար . նա և աղջըկանը համար հարկաւոր գրքեր բերել կուտար : Իսկ երկայն գիշեր-

ները կը պարապէին իրենց սիրական զաւակին կրթութիւն տալու համար, որ պարկեշտութ̃բ նստելով ծնողացն առջին կը կարդար. միշտ ծնողքը կը ջանային ընտիր պատմութիւններ և երևելի գործքեր կարդացընելու եղիսաբեթին. որ վառ սիրտը առաքինութ̃բ և ա̃ծպաշտութ̃բ. հայրը կը սորվեցնէր փառաց և դիւցազնութե̃ց մեծութի̃ը, և գեղեցկութի̃ը. իսկ մայրը համեստութի̃ և բարեպաշտ սովորութի̃. հայրը կը սորվեցընէր, թէ ինչպէս պէտք է առաքինութի̃ը յարգել. իսկ մայրը՝ ինչպէս պէտք է սիրել առաքինութի̃ն ու պարկեշտութի̃ը։ Այս բարի կրթութի̃ներէն առաջ եկաւ արիական բնաւորութի̃, հրեշտակային քաղցրութի̃, և մխիթարական կենակցութի̃։

Իսկ երբոր ձիւնը կըսկըսէր հալելու, և գետինը կանանչնալու, Սփինձէր պարտէզը կը հոգար. Ֆէօտօրա կը պատրաստէր սերմը. Եղիսաբեթ կը ցանէր այն փոքրիկ պարտէզն, որ ցիցերով շրջապատած էր, և զարդարած փոքրիկ ծառերով. որոնց ծաղիկը անոյշ հոտ կը բուրէ։ Կէսօրեան ժամանակը կաշխատէր ծաղկոցին մէջ. ուր կը հասցընէր զանազան ծաղկըներ, որ անծանօթ են մեզ. և ասոնցմով կը զարդարէին Եղիսաբեթի գլուխը ասելով. Ե՛ղիսաբեթ միտքըդ դի՛ր թէ հայրենեացդ ծաղկըներէն են. ասո՛նք նման են քեզ. երանի՛ թէ ոչ ասո՛նք անցնէին, և ոչ դու։

Սփինձէր երբոր պարապ կըլլար լռու-կենալով կը մտմտար, ու խորին հառաչմամբ կը նայէր դէպ 'ի կողմն հայրենեաց. Թէպէտ կինը զգուելով կը մխիթարէր զինքը, այլ աւելի կը մորմոքէր սիրտը՝ մանաւանդ կնոջը և զաւակին վրա նայելով: Սատի կը կանչէր. ա՜հ փէօտօրա, ինչու կամեցար հետս միատեղ աքսորվելու. լաւ էր որ զիս մինակ Թողուիր հոս. գէթ դուն զաւակովդ հանգիստ կըլլայիր մեր հայրենիքը բուպատուովդ, եւ այլ հոս առաւել դոհ կանցընէի ցաւալի օրս: Այս բանն որ կը լսէր փէօտօրա՝ ողորմագին նայվածքով կարտավէր. և ասով ցոյց կուտար Թէ որչափ մեծ սէր ունէր քաղցր ամուսնոյն վրա. անանկ որ և ոչ օր մի առանց անոր կարնար ըլլալու. նաև զինքը Թշվառ չէր համարէր միատեղ և զաւակից ըլլալովը. գիտէր որ ամէն բան ա̃ծային կամքովը կըլլայ. ուստի մխիԹարվելով կը ջանար միշտ որ սիրտն առնու ընկերին:

Միշտ կը պարապէր անոր կամքը կատարելու, և սիրած կերակուրը պատրաստելու. մաքրութ̃ին ու խաղաղութ̃իը կը Թագաւորէր իրենց փոքրիկ բնակարանին մէջ. իրենց ամէն բանը պարզ և աղքատին էր. որ Սփինձէրին սրտորդութեամբը կը հոգային: Նենեկին պատերը զարդարած էին փէօտօրային ու Եղիսաբեթին քաշած նըկարներով. ներքնասենեակը տվեր էին Ե-

ղիսաբեթին․ ունէր և ուրիշ տուն թաթար ծառային համար, ուր կը դնէին ամանները․ և պարտիզին գործիքները ։

Իրենց ժամանակը կանցնէր կամ ներքին բաները հոգալով, և կամ ծառի կեղևէ փսիաթ շինելով գետինը փռելու համար․ իսկ երբոր կիրակի կըլլար՝ Ֆէօտօրա հառաչելով կը տրտմէր պատարագ չի տեսնելուն համար, թէպէտ սրբութեամբ և աղօթքով կանցընէր ՚ը Վարսեղի պատկերքին առաջը․ որուն շատ ջերմեռանդ էր․ և պաշտպան առեր էր իւր մատաղ հասակին ։ Այսպէս ամէն օր ջերմեռանդութեամբ և բարեպաշտութեամբ անցընելով իրենց միտքը լուսաւորած էր և սիրտը մխիթարած քաջալերութեամբ ։

Իսկ եղիսաբեթ չորս տարուանէ ՚ի վեր այս սիպերիայի անտառը բնակելով ասկէ ՚ի զատ ուրիշ հայրենիք չէյտէր, և իւր անմեղ սիրտը այն պարզ բնական բաներով կուրախանար ։ Երբեմն կելլէր լեռին քովի ժայռերուն վրայ կը ժողվէր բազէի և անգեղի հաւկիթներ․ շատ անգամ կը բռնէր վայրի աղաւնիներ, ու թռչնարանին մէջ կը շատցընէր․ և այնպէս կըզբօսնոյր իւր սիրտն, որ կարծէր թէ ասկէ աւելի երջանկութիւն չի կայ աշխարհիս վրայ իրեն համար․ իւր առողջութիւնը կը զօրանար սովորելով օդին․ և իւր հասակը կաճէր շարժմամբ և կրթութեամբ ։ Դէմքին վրայ հանգչած կե-

րենար անմեղութ՟ին և հանդարտութ՟ին , և օրըստօրէ իւր հաճութ՟ինը կը շատնար , ու գեղեցկութիւնը կը պայծառանար . որ մի միայն մխիթարութ՟ին և ցնծութ՟ին էր ծնողացը . որոնց առջին սիրուն ծաղկի նման կը բացվէր , ինչպէս վայրի ծաղիկը միայն արևին ներկայութեամբը կը բացվի , թէպէտ իւր գոյնը և գեղեցկութ՟ինը միշտ ունի . այսպէս կըլլար Եղիսաբեթ երբոր ծնօղքը կուգային իրեն մօտ . որոնց պարտական կը ճանչնար իւր կեանքը :

## Է . Պնեպուած :

Երբոր մարդուս ախորժակը քիչ առարկայի վրա կը ժողվըվի՝ շատ ազդու և փափուկ կըլլայ . ինչպէս էին Եղիսաբեթի սէրն ու ախորժակը . որ ուրիշ մարդ չէր ճանչնար , եթէ ոչ իւր ծնօղքը , անոնք միայն կը սիրէր , և անոնց հետ միայն կը կենակցէր . անոնք էին միայն իւր տէրը , պաշտպանը , ընկերները , մանաւանդ իւր վարպետներն ու սորվեցնօղները : Կը տեսնէր որ ամէն բան անոնցմէ կուգար իրեն , և առանց անոնց բանի մի կարօղ չէր . ոչ քոյր ունէր , ոչ եղբայր , ոչ ազգական , և ոչ ծանօթ . միշտ իւր աչքը անոնց երեսն էր . որոնք խոհեմութ՟բ իրենց ցաւը կը պահէին իրենց սիրական զաւակէն , որ չըլլայ թէ քաղցր սիրտը կոտրի վշտանայ :

Սակայն երբոր սկսաւ հասակն աճիլ և ընտրողութիւն հասունանալ սկսաւ հետաքրքրութիւն ալ աւելնալ. կը դիտէր որ սիրական ծնողքը միշտ միակերպ չեն. ծածուկ կը տեսնէր որ մայրը կուլայ՝ հայրը կը հառաչէ. հասկըցաւ որ իրենց մէկ դժբաղդութի պատահած է։ Ուստի սկսաւ աղաչել իրենց որ պատճառն իմացընեն իրեն. բայց անոնք ուրիշ բան չէին ասեր, այլ միայն կողբային իրենց հայրենիքը. զի չէին ուզեր որ անոր անմեղ սիրտը իրենց անտանելի վշտին հաղորդէն. չէին իմացներ թէ ինչ մեծութենէ այն խեղճութեան հասեր էին։

Ժամանակէն ետև երբոր մանկութեան յաջորդեց պատանեկութիւնը՝ իմացաւ ծնողաց տրտմութեան պատճառն ու սկսաւ ինքն ալ հաղորդակցիլ անոնց վշտին. ուստի կորուս անմեղութեան զբօսանքը, թողուց իւր պարտէզն ու ծաղկըները. դադրեցաւ սիրելու թռչունները. երբոր լճին քով կերթար ոչ ձուկ բռնելու կը նայէր, և ոչ նաւակը նստիլ խաղալ. այլ կը մտածէր թէ ինչ պիտի ըլլայ իրենց վախճանը. իւր երևակայութիւնը անանկ սիրտը կը խռովէր, որ ոգիքը կը քաղէին, Երբեմն նստած ժայռին վրայ՝ աչքը ջրին վրայ հաստատելով կը մտածէր, թէ ինչ առիթ կարենայ ըլլալ որ կարենայ դադրեցնել ծնողացն արտասուքը. որոնք անդադար կուլային իրենց հայրենիքը. բայց Եղիսաբեթ չէր կարնար

լաւ երեւակայել, թէ ինչ բան էր հայրենիքը . որովհետեւ ինքը ոչ այն մեծութիւնը տեսեր էր, եւ ոչ կրնար երեւակայելու ։ Սակայն միշտ մտածելով կը յափշտակուէր . յետոյ աչքը երկինքը վերցնելով օգնութիւն կը խնդրէր ստեղծողէն . երբեմն այնչափ խորունկ կը մտածէր, որ ձիւն անձրեւ կուգար վրան ու չէր ելլէր ։ Իսկ երբ ծնողքը կը կանչէին զինքը՝ մեկէն կը վազէր, կերթար կամ դաս առնելու, եւ կամ մօրն օգնելու ։ Բայց երբոր անոնք իրմէ կը հեռանային, եւ երբ կաշխատէր, կամ կը պառկէր, մի միայն մտածութիւն էր որ ինչպէս երթայ Պէթրպուրկ, ու ծնողքն ազատէ այն խեղճութենէ . եւ այս խորհուրդը անծպաչտութեամբ անանկ սրտին մէջ պահեր էր որ բնաւ չի պիտի յայտնէր, մինչեւ որ չի յաջողի, եւ ճամբորդ չըլլայ ։

Ահա այսպէս էր Եղիսաբեթին արիական սիրտն ու խորհուրդը . այսպէս էր անվախ գիտաւորութիւն մատաղ կուսին . Թէպէտ միտքը կուգային մեծամեծ վտանգներ եւ դժվարութիւններ . բայց սրտին արիութիւնը, կամքին բնութիւնը, եւ վստահութիւն առ Աստուած՝ զինքը քաջալերելով կը զօրացնէին թէ ամէն բանին ալ պիտի յաղթէ ։ Երբոր կը մտածէր որ անտառէն դուրս ելլելու կարողութիւն չունի, մօտ գեղը գնացած չէ, ինչպէս պիտի երթայ մինչեւ Պէթրպուրկ, ինչպէս պիտի ճամբորդութիւն անէ այնչափ

ազգերուն մէջէն , որոնց ոչ լեզուն գիտէր , և ոչ բնութիւնը · նորէն կը խնդրէր ա՟ծային օգնութիւնը · խոնարհելով առաջի ա՟յ կը խոստովանէր իւր տկարութիւնը , ինչպէս որ սորված էր բարեպաշտ ծնողքէն : Ամենէն աւելի դժուար կերևնար իրեն , թէ ինչպէս ծնողացմէ պիտի զատուի , և ինչպէս անոնց խօսք պիտի անցընէ · որոնց մխիթարութիւն էր ինքը միայն աշխարհիս ծայրը անշէն անտառին մէջ , ուր իրմէ 'ի զատ ուրիշ մարդ անոնց դռնէն ներս մտնող չի կար : Բայց սակայն ոչ երբեք ասանկ խորհուրդներով յուսահատեցաւ , յիշելով թէ չի կայ այնպէս անապատ տեղ , ուր չի հասնի ա՟ծային նախախնամութիւնը զի ամէն տեղ կը լնէ դժբաղդներուն աղօթքն , ու օգնութիւնը կը հասցընէ :

Երեք տարիով առաջ մէկ մեծ վտանգ պատահեր էր Սփինձերին · որ խիստ ձմեռվան մէջ գտնըւեցաւ սրածայր բարձր ժայռին վրայ · ուր պէտք էր կորսըւիլ , թէ որ չի հանէր իրեն օգնութեան քաջ պատանին որդի պարոն Սմօլօֆայ կառավարչին Տօպօլսքիու · որ միատեղ որսորդութեան կերթար ամէն ձմեռ Սախմքայի կողմերը · երբեմն Ուրալքի լեռներուն վրայ արջ կորսային , որ աւելի վտանգաւոր էր , ինչպէս վտանգեցաւ Սփինձեր և ազատեցաւ օգնութեամբ ընկերին : Այս դիպուածէն ետև Սմօլօֆին անունը անոնց մէջ միշտ յարգութեամբ կը յիշէր · որ խեղ-

Ճերուն երախտաւոր եղաւ, և շատ կը փափաքէր Փէօտօրա որ տեսնէ ու շնորհակալ ըլլայ օրհնութեամբ. Թէպէտ ամէն օր անոր համար կաղօթէին. որովհետև արդելք կար մարդ չէր կարող անոնց բնակարանն երթալու:

Իսկ Եղիսաբեթ որ միշտ իւր ճամբորդութե՟ն դժվարութիւնը կը մտածէր, միտքը դրաւ որ առանց մէկ բարեկամի օգնութե՟ն չպիտի կարենայ գլուխ տանելու այս բանը, իւր խորհուրդը դարձուց Սմօլօֆ կտրիճին վրայ. որ իրեն պաշտպան անէ. զի նա կարենար իրեն ճամբայ ցըցնելու մինչև Պեթրպուրկ, և կայսեր ներկայացնելու. նաև իշխանին որդին ըլլալով հօրը խօսք հասկըցնելու որ ծնողացը վրայ չի բարկանայ այս բանիս համար: Աստի տեսաւ որ ձմեռը մօտ է, ետևէ եղաւ իմանալու թէ արդեօք Սմօլօֆ կուգայ որսորդութե՟ն այն կողմերը. կը փափաքէր հետը խօսակցելու:

Սփինճեր այն վտանգին մէջ իյնելէն ետև խոստացեր էր կնոջն որ չերթայ արջու որսորդութե՟ն, և չի հեռանայ անտառէն. այլ միայն կորսար սկիւռ և սպիտակ աքիս, ինչպէս կը խնդրէր Փէօտօրա. նաև մինչև որ դառնար որսորդութե՟ն շատ մեծ մտմըտուքի և ցաւի մէջ կըլլային: Այն ձմեռ ձիւն մի եղաւ սաստիկ խիտ և մնայուն, և ցուրտն էր 30 աստիճանէն աւելի: Սփինճեր մէկ առաւօտ մի դեկտեմբերի մէջ առաւ հրա-

ցանը գնաց որս, բայց մեկնելէն առաջ դը-
գուելով խոստացաւ կնոջն ու զաւակին որ
արևը չի մտած դառնայ ։

Ժամանակն անցաւ գիշերը մօտեցաւ Սփինճէր չի դարձաւ. անտանելի եղաւ կսկիծն ու մտմըտուքը Ֆէօտօրային. իսկ Եղիսաբեթ սրտին ցաւուն կուզէր երթալ հայրը փնտըռել, կամ օգնել. բայց չէր կարնար մայրը մինակ ձգելու ողբի մէջ ։ Մինչև նոյն ատենը Ֆէօտօրա լճին քովէն անդին չէր գնացեր. այն կէտին վիշտը բըռնադատեց խիղճն որ երթայ աղջըկանն հետ փնտըռէ այրը ։ Երկուքը միատեղ ելան կերթային դէպ 'ի դաշտավայրը. օդը սաստիկ ցուրտ, ծառերը սառած. հորիզոնը թանձր սևութի մի ծածկեր էր. գիշերվան մօտիլը զարհուրելի գոյն մի տվեր էր առարկաներուն. անանկ որ ամէն մէկ քայլին կը դողդողջար տկար Ֆէօտօրա. իսկ Եղիսաբեթ հոն մեծցած ըլլալով սորված էր օդին և ցրտին. բայց մայրը չէր սորված, որ միշտ կը զօրացնէր ։ Ինչպէս որ ծառ մի օտար տեղէ բերեն տնկեն կը տկարանայ. իսկ փափուկ շառաւիղները արմատէն կելլեն ու կը սորվին այն տեղին, կը զօրանան և կաճին. նաև իրենց ստուերին տակը կը պաշտպանեն ծառը, իբր թէ նոր կեանք կուտան. այսպէս կը զօրացընէր Եղիսաբեթ մայրը ։

Երբոր մօտեցան տափարակ տեղը՝ Ֆէօտօրա այլ չէր կարնար առաջ երթալու. Ե-

ղիսաբէթ ասաց, մայր իմ օրը կը մթնէ,
դուն հոս կեցիր. թո՛ղ զիս երթամ մինչև
անտառին ծայրը. թէ որ այսպէս ուշանանք
գիշերը մեզ կարգիլէ փնտըռելու հայրս:
Խեղճ փէստօրան կաթընած կեցաւ ծառին
քով, ու թողուց որ աղջիկն երթայ. որ մէ-
կէն հասաւ լեռնակը գերեզմաններուն. այս
լեռնակին ծայրէն Եղիսաբէթ արտասուալի
աչօք կը նայէր չորս դին որ հայրը տեղէ մը
տեսնէ. բայց բան մը չի տեսաւ. ամէն դի
լուռ և անապատ տրտմալի. խաւարն ալ
սկըսեր էր երկիրս երկինքէն որոշելու:
Քիչ մը անցաւ լսեց մօտ տեղէ՝ ձայն
հրացանի, մեծ յոյս առաւ: Որովհետև այս
ձայնը միայն հօրը ձեռքէն լսած էր, կար-
ծեց թէ հայրն էր. անցաւ ժայռերուն մէ-
կալ կողմը տեսաւ որ մարդ մը վար ծռած
որսը կը փնտըռէր՝ կանչեց. Հա՛յր իմ հա՛յր
իմ, դո՞ւն ես: Երբոր նայեցաւ իրեն, տե-
սաւ որ չէր Սփինձէրը. այլ էր շնորքով
պատանի մը: Եղիսաբէթ տրտմութբ̃ ա-
սաց. դուն չես իմ հայրս. բայց չի տեսա՞ր
տեղ մը հայրս, աստ աղաչեմ ո՞ւր կարնամ
գտնելու: Պատասխան տուաւ թէ չեմ ճանչ-
նար հայրդ. բայց գիտեմ որ աս ատենս
դուն չես կարնար աս տեղերս մնալ առանց
վտանգի, պէտք է վախնաս: Երկնեց Եղի-
սաբէթ, ես բանէ մը չեմ վախնար աշխար-
հիս մէջ. ո՛հ միայն կը վախնամ որ հայրս
չեմ կարնար գտնելու: Այսպէս խօսելով

աչքը վերուց դէպ 'ի երկինքը հառաչեց․ ուր քաջութիւն ու խանդաղատանքը, վստահութիւն ու քաղցրութիւնը նկարուած էին դէմքին վրա, և կը նախագուշակէին իւր երջանիկ վիճակը։ Պատանեակը այնպէս զարմացերէր որ կարծէր թէ երազ կը տեսնէ․ զի այնպիսի ազնիւ քաջասիրտ կոյս չէր տեսած․ ուստի հարցուց թէ ինչ է հօրդ անունը․ պատասխանեց, թէ Պետրոս Սփինձեր։ Ըլլա՞յ թէ ասաց՝ դուն ըլլաս դուստր աքսորվածին, որ կը բնակի լճին քովի խրճիթը․ մի վախնար ես կը ճանչնամ հայրդ․ դեռ ժամ մի չի կայ, որ զատվեցանք իրարմէ․ և գնաց իւր բնակարանը․ Թուի թէ հիմա հասած է հօն։

Եղիսաբեթ այլ չի կեցաւ, սկսաւ վազել երթալ մօրն, որ թողուցեր էր ծառին քով․ և կը կանչէր մեծաձայն խնդութեամբ հօրը դարձը, որ մայրը հեռուէն լսելով ուրախանայ․ սակայն չի գտաւ հօն մայրը․ սկսաւ անտառին մէջ կանչել ծնողացն անունը տալով։ Նայիս լճին կողմէն ձայն եկաւ իրեն․ վազեց հասաւ խրճիթը․ տեսաւ հայրն ու մայրը․ գրկեց զանոնք նստաւ, պատմեցին իրարու թէ ինչպէս զանազան ճամբայով հասեր էին հօն։ Եղիսաբեթ նայեցաւ դուրս՝ տեսաւ որ պատանին հօն կուգար․ Սփինձեր լսելով ելաւ դուրս կանչեց անոր տհաճութիւն․ Պարոն Սմոլոֆ ժամանակս ուշ է․ դուն գիտես, որ ես քեզ չեմ կար-

նար տունս ընդունելու, և ոչ մէկ գիշեր ։ Իսկ կինն ու դուստրն մեկէն կանչեցին . Պարոն Սմօլօ՜ֆն է, որ մեզի եղաւ ազատիչ, ազատելով քեզ այն վտանգէն . երկուսն ալ ելան դուրս ոտքն ընկան ։ Ֆէօտօրա արտասուօք լուաց ոտքը . Եղիսաբեթ ասաց . Պարո՛ն Սմօլօֆ իրեք տարի է, որ ազատեցիր հայրս, մենք օր մի չենք անցուցած առանց աղօթք անելու և օրհնելու քեզ ։ Պատասխանեց պատանին զարմանալով . իրաւի իմ արած փոքր աղէկութիւնս չէր արժէր այդչափ մեծ հատուցումն ։

Ժամանակն անցեր էր, մութը կոխեր էր բոլոր անտառը . Սմօլօֆ առանց վտանգի չէր կրնար մինչև կէս գիշեր հասնիլ Սաիմքա . նաև Սփինճէր չէր կրնար ճամբայ տալու իր ազատչին . բայց գիշերը հօն պահելու կը վախնար . զի երդվընցեր էր Թօպօլսքիու կառավարիչ իշխանին, որ մարդ չի հանդիպցընէ իր խրճիթը . ուստի առաջարկեց հիւրին, որ ճրագ վառէ ու միատեղ երթայ առջևէն ։ Ֆէօտօրա այս բանը լսելով դող ելաւ, ու ընկաւ ոտքը աղաչեց, որ չերթան ։ Նստենք ասաց Սմօլօֆ . շնորհք արա ինձ մը, որ մինչև առաւօտ մնամ խրճիթդ . գիտեմ ինչ պատճառի համար հայրս արգիլեց քեզ, և այնչափ խստութիւն եղաւ ։ Ես ապահով եմ, որ նա ինձ կըներէ այս առթիս մէջ . նաև խօսք կուտամ, որ շուտով գամ իրեն կողմանէ

չնորհակալ ըլլամ տէրութեանդ, որ զիս այս գիշեր հոս պահեցիր ։ Ընտանէնը Սփինձեր բանեց ձեռքէն ու խրճիթէն ներս տարաւ. նստան մինչև Փեօտօրա և Եղիսաբեթ կերակուր պատրաստեցին ։

## Է. Պնդուած ։

Եղիսաբեթ հագեր էր ինչպէս գեղացի Թաթար աղջիկ. տակէն մորթի, վրայէն կարմիր կապա, և նեղ բաճկոն՝ կօճակներով մէջքը սղմուած. մազերը ձգած ետին, որ մինչև ոտքը կը հասնէր. ատով գեղեցկութիւը դէմքին ու հասակին վայելուչ չափակցելով, յայտնի կերևցընէին ազնուութի բարուցը և վսեմութի հոգւոյն. նաև բոլոր իւր շարժմունքն էին շնորհալի. մինչդի Սմոլօֆ կը զարմանար և կըզմայլէր անոր քաղաքավարութեը և շնորհքին վրայ, ու գթալից կը նայէր վրան ։ Իսկ Եղիսաբեթ քանի որ կը նայէր Սմոլօֆին, իբր թէ իւր եղբայրը կը համարէր մաքուր սիրով. որ հայրը ազատեր էր. և յոյս ունէր թէ ճամբորդութեն այլ օգնութիւը կը հասնի ։ Սրտին մէջ ա͞ծ դրեր էր, որ միայն ծնողացը համար հոգայ, և անոնց ազատութիւնը մտածէ ։

Երրորդ կերակուրի նստան՝ Սմոլօֆ ասաց թէ իրեք օրէն ետև Սախմքա մեծ որսորդութի պիտի ըլլայ գայլերուն համար,

որ շատցեր էին, և կապականէին այն կողմը ։ Երբոր Փէօտօրա լսեց՝ աղաչեց սփինձէրին որ չէրթայ այս վտանգաւոր որսը ․ չի գտնեմ՝ կասեր կեանքդ վտանգի մէջ, որ ինձի ամէն բարիքէս աւելի յարգելի է ։ Պատասխանեց սփինձէր ․ դուն ինչ կը խօսիս Փէօտօրա ․ ինչ է իմ կեանքս ․ ես չըլլայի՝ դուք այս խեղճութիւնը կը քաշէիք ․ գիտէ՞ք որ եթէ իմ կեանքս չըլլայ, դուն ալ, զաւակս ալ կաղատիք ։ Ալինը կտրեց այս խօսքս ցաւագին աղաղակով, Եղիսաբեթ վազեց հօրը քովը ու բռնեց ձեռքն ասաց ․ Հա՛յր իմ գիտես որ այս անտառիս մէջ մնած ըլլալով ասկից 'ի զատ ուրիշ հայրենիք չեմ ճանչնար ․ ես և մայրս քեզի հետ երջանիկ ենք ուր որ ըլլանք ․ իսկ առանց քեզ մեր հայրենիքն ալ ըլլանք՝ թշուառ ողորմելի ենք ։ Ալկնեց Սփինձէր ․ լո՛ւր պարո՛ն Սմօլօֆ ․ գիտնաս որ այսպիսի խօսքը սիրտս կը ճըմլէ տրտմութեր, և ոչ թէ զիս կը մխիթարէ ․ առաքինութիւն է միայն զիս մխիթարողը ․ բայց սիրտս կը խորտակի երբոր կը յիշեմ, թէ ասոնք իմ պատճառովս այս անշէն անապատիս մէջ ընկեր են ․ և իմ պատճառիս Եղիսաբեթ պիտի անծանօթ մնայ՝ աշխարհէ հեռու ։ Մատաղ զաւակը կտրեց խօսքն ու ասաց ․ ո՛հ հա՛յր իմ, ահա՛ ես ձեր ձեռքին մէջն եմ ․ ինչպէս անծանօթ խեղճ կըլլամ ։ Նոյն ատենը շարունակելով խօսքը ասաց Սփինձէր ․ Սիրելի զաւակս, դուն

չպիտի՞ խրախանաս ընկերաց հետ. չպիտի՞ աշխարհի բերկրութե̃ն ունենաս. չպիտի՞ խաղաս խնդաս փեսայի հետ. այս տխուր անապատին մէջ պիտի անցնի քաղցր կեանքդ, ինչպէս թռչուններու. ո՞չ անմե՛ղ զոհ. չե՞ս գիտեր թէ ի՞նչ բարիք կորուսեր ես. աւա՜ղ չեմ կարող տալ քեզի անոնք որ կորուսեր եմ։

Այս ցաւագին տեսարանը անանկ ձմլեց սիրտը Սմօլօֆին, որ անդադար կուլար. շատ անգամ ուզեց խօսելու, ձայնը արգելվեցաւ լացէն. վերջապէս սիրտ առաւ, ասաց. Տէ՛ր իմ. այս տրտում անապատիս մէջ շատ տեղ քալեցի, շատ ողորմելի բաներ տեսայ. գժբաղդագոյն աքսորվածներ տեսայ, որ ո՛չ բարեկամ ունէին, և ոչ ընտանի. ո՛չ մխիթարանք, և ո՛չ անոյշ խօսք տեղէ մի ունէին, որոշած աշխարհէ, և հեռացած մարդիկներէ։ Կրկնեց Փեօտորա. ա̃ծ մեզի զաւակ տված է, ու կասես թէ, ամէն բան կորուսեր եմ. հապա թէ որ առնէ մեզմէ՝ ի՞նչ պէտք է ասես։ Սփինձեր գգուելով աղջիկն ասաց, թէ իրաւ կիմանամ, թէ ամէն բան չեմ կորուսած։

Այսպիսի խօսակցութե̃ն ետև նոյն գիշեր հոն հանգստացան. առաւօտուն Սմօլօֆ հրաման առաւ որ երթայ. Եղիսաբեթ կը փափաքէր որ միջոց մի գտնէ ու իւր խորհուրդն անոր յայտնէ. բայց մէկ վայրկեան ծնօղքը զինքն առանձին չի թողուցին, որ

խօսի հետը․ կը յուսար որ ուրիշ անգամ տեսնէ զինքն, ու յայտնէ խորհուրդը։ Ցետոյ դարձաւ ասաց․ Պա՛րոն, այլ չե՛ս գար հոս․ խօսք տո՛ւր ինձի որ այսօր չըլլայ վերջինն որ տեսայ հօրս ազատիչը։ Աֆինձէր զարմացաւ այս եղանակ խօսակցութե՛ն վրայ․ ու գաղտնի անհանգստութի՛ մի ունեցաւ․ մտածելով թէ չըլլա՛յ որ նորէն իշխանին հրամանին դէմ այսպիսի դիպուած պատահի։

Սմօլօֆ պատասխանեց, թէ ես կերթամ թօպօլըքի հօրս․ ինձի մեծ երջանկութի՛ է, եթէ կարենամ ծառայութի՛ մի ընել քեզ․ ասա՛ կաղաչեմ չունի՞ս խնդիրք մի իշխանէն։ Պատասխանեց Աֆինձէր, թէ ոչինչ։ Բայց հարցուց Ֆէօտօրային․ անալ ասաց, թէ ես կը խնդրեմ որ տայ հրաման կիրակիներն երթամ Սախմքա, պատարագ տեսնելու աղջկանս հետ միատեղ։ Սմօլօֆ խօսք տուաւ, որ կառնում ձեզի համար այս հրամանը։ Բայց մեկնեցաւ անկէ շատ օրհնութեք և աղօթքով։ Սակայն Սմօլօֆին սիրտն ու երևակայութիւնը Եղիսաբեթին հետն էր․ կը զարմանար անոր հնարհալի տեսքին անոյշ խօսքին և նազելի շարժմունքին, որ տեսաւ անմեղ կոյսին վրայ․ սիրտը դըրաւ որ այն դաշտին մէջն որ զինքը նախ տեսաւ, չէր դիպուածական ինչ, այլ նախախնամութիւն մ՛յ․ որ մէկ մեծ բարիք պիտի ըլլէ։ Միտքը կը վկայէր թէ Եղիսաբեթի սիրտն ալ իւր սրտէն շատ հեռու չէր։

Իսկ Սվինձէր մեծապէս տրտմած էր քանի որ այս սիրական պատանին միտքը կուգար. վասն զի իրեն փափաք կուգար, որ աղնիւ ղաւակն անոր տայ. բայց իւր ողորմելի վիճակը ամէն բան իրեն մոռցընել կուտար։ Մէկ իրիկուն այսպիսի թանձր տըրտմութը կը մաշէր. ֆէօտօրա ձգեց ձեռքէն ասեղն ու նայեցաւ թէ ինչ կըլլայ. աղօթք արաւ, որ ա̃ծ սփոփելով սիրտը մխիթարէ, ու մոռնալ տայ այն վիշտը։ Եղիսաբեթ մութ տեղէն տեսնելով այս բանը, կը խընդրէր ստեղծողէն, որ տայ այն օրն որ այլ այսպիսի ողբ և տրտմութի̃ն չունենան։ Կըրյուսար որ Ամօլօֆին օգնութ̃ն երթայ բէդրպուրկ ու զանոնք ազատէ. բայց կը վախնար որ ծնօղքը չեն հաճիր, մանաւանդ մայրը։ Նաև հարկաւոր էր գիտնալ թէ ուստի և ինչ պատճառով աքսորված էին. և ինչ յանցանքի համար ներում պիտի խնդրէր կայսերէն։

Այս բարի խորհուրդը Եղիսաբեթին այնչափ զօրացաւ, որ միտքը հաստատեց թէ ժամանակն հասած է, պէտք է յայտնել սիրտը, և իմանալ ծնողաց միտքը. ուստի քաղաքավարական ամօթով մօտեցաւ հօրը մէկ կողմն, ու լուռ կեցաւ քիչ մի ժամանակ. կը յուսար որ հայրը պիտի խօսի հետը. բայց տեսաւ որ հայրը իւր մտմըտուքին հետն էր՝ ինքն սկսաւ խօսիլ այսպէս. հայր իմ ներէ ինձ որ տէրութեանդ

խնդիր մի առաջարկեմ ։ Հայրը սիրով ընդունեց իրեն խնդիրքը • ուստի ասաց • Հայր անցեալ օր Ամօլօֆ պատանին խնդրեց թէ քանի մի կուզէ՞ս • Հրամանքդ պատասխանեցիր որ չէ • իրա՛ւ է որ քանի մի չես փափաքիր ։ Հայրը ասաց թէ քան մի չեմ ուզեր՝ որ նա կարենայ տալու ինձի ։ Հապա , կրկնեց Եղիսաբեթ, ո՞վ կարենայ ուզած գտալու ։ Ըսաց թէ արդարութիւնը միայն ։ Ո՞ւր կը գտնըվի այդ արդարութիւն • ասաց , երկինքը • այս երկրիս վրա տեղ մի չի գտնըվիր •

Եղիսաբեթ կրկնեց արիական ձայնով • ո՞վ սիրական ծնօղք իմ , լսեցէք ինձի , ահա այսօր տասներեօթը տարիս լմընցուցի , այսօր է որ այս կեանքս ինձի տուիք • որ պիտի ըլլայ ինձի անչափ սիրելի , եթէ կարենամ զայն ձեզի համար զոհելու • այս սիրտս կենդանի պատկեր ըլլալով ստեղծողին երկնից՝ կը սիրէ և կը յարգէ զձեզ , պէտք է ապաւինի ա͠ծ , ու ձեր բարեայը տենչայ ։ Ծնընդենէս ետև ամէն րոպէն կեանքիս՝ ձեր բարերարութիւնը նշանակած է • որոնց չեմ կարող երախտագէտ և շնորհակալ ըլլալու • ո՞վ սիրական ծնօղք իմ ներեցէք յանդըգնութիւնը ձեր զաւակին , որ կը փափաքի բոլոր կենացը մէջ մէկ երախտիք մի անելու ձեզ • որուն դուք անդադար կանէք ծնողենէ 'ի վեր ։ Ո՛հ կաղաչեմ • յայտնեցէք ինձի , ձեր դժբաղդութեան պատճառը ։

Մայրը լսելով այս բանս կանչեց . ինչ կը խնդրես որդեակ՝ ասա ։ Կը խնդրեմ, ասաց, որ ինձի պատմես ամէն ծածուկդ . որն որ հարկ է ինձ գիտնալ իմ սէրս ձեզի յայտնելու համար . ա̃յ յայտնի է թէ ինչ ուխտ գլխս կը քաջալերէ . որ պիտի համարձակիմ ուխտել ձեզ այնպիսի ուխտ ։

Այս խօսքս ասելով ընկաւ հօրը ոտքը՝ աչքը լաց, երեսը ողորմագին կաղաչէր . ուրուն այլայլած կերպարանքն, ու կենդանի զգացողութ̃ին կերևցընէին դիւցազնութ̃ի հօգւոյն և ազնուունի սրտին ։ Իսկ խոնարհ շարժումն կը յայտնէր ա̃ծային շնորհն որ ունէր ։ Սփինձէր մնաց զարմացած այս առաքինի համարձակութենը վրա սիրուն զաւակին . սիրտը կը ճմլէր գթով, ոչ կարնար խօսիլ, ոչ կարնար լալ . լուռ կեցած էր արտմութեամբ . բոլոր զօրութիւնը կորսուսեր էր խեղճը ։ Իսկ Էղիսաբեթին սիրտը անանկ զօրացեր էր որ թագաւորներուն ուժը չէին կարող վախցընելու ։

Սփինձէր որչափ որ մնաց շուարած, Էղիսաբեթ առաջը ծունկ չոքած էր . մայրը եկաւ զաւակին քով տեսաւ որ այլայլած է, ուզեց վերցընելու . բայց աղջիկը մնաց հաստատ իւր խորհրդին վրայ ։ Ապա Փէտօրա ասաց Սփինձէրին, թէ ինչու չես պատմեր մեր ծածուկը մեր զաւակին . չես ցաւիր մատղաշ հասակին վրա . կը վախնամ որ Էղիսաբեթին սիրտը մեզի ցաւակից չըլլար ։

Պատասխանեց այրը, թէ ես չեմ վախնար, թէ տկար է, մեզի ցաւակից չըլլար· այլ... Սիրտը լեցվելով կտրեց խօսքն ու աղաղակեց· Ո՛վ ստեղծող ած իմ· ներէ ողորմագին ձայնիս· ես բարիք կը ճանչնայի զանոնք, որ առիր ինձմէ· և ոչ զանոնք, որ ինձի համար կը կարգադրէիր։ Եղիսաբեթ դուն այսօր տասուերկու տարուան քաշածներս մոռցուցիր։

Պատասխանեց աղջիկը· Հա՛յր իմ· մի կասկածիր, իմ բերնէս ուրիշ խօսք չելլէ, եթէ ոչ այն՝ որ պիտի պատճառէ երջանկութիւնդ։ Պատմէ՛ ինծի, երդումով կը հարցնեմ, ինչ է քու անունդ· ո՞ւր է հայրենիքդ· և ինչ է դժբաղդութեանդ պատճառը։ Իմ դժբաղդութիւնս ասաց կը հարցնես· չունիմ դժբաղդութիւն· իմ հայրենիքս· ուր տեղ որ քեզ ինծի մօտ կը տեսնեմ հոն է· իսկ իմ անունս է երջանիկ հայր Եղիսաբեթի։ Փետորա խօսքին վրա գալով ասաց· սիրելի՛ զաւակ իմ· քանի՛ մէկ սիրտդ կը մաշես· ինչպէս պիտի մխիթարես հայրդ։

Այս խօսքով յաղթըլվեցաւ Սփինձերին հաստատութիւնը· առաւ քովը կինն ու զաւակը· սկսաւ լալով աղաղակել· Ա՛ծ իմ· ներէ իմ ապերախտութեանս· ներէ մի պատուհասեր որչափ որ տրտնջացեր եմ· գիտեմ որ ամէն բան իմ լաւութեանս համար տնօրինեցիր բարերար կամօքդ։ Ապա դարձաւ աղջկանն ասաց· սիրելի՛ զաւակ իմ

այլ չեմ դիմանար․ ահա կը պատմեմ քեզ, ինչ որ կուզես գիտնալ․ սակայն քանի մի օր համբերէ, որ քիչ մի ցաւերս մոռնամ, և սիրտս հանդարտի․ զի այսօր չեմ կարնար պատմելու իմ անբաղդութիւնս։ Եղիսաբէթի հնազանդութիւնը չի համարձակեցուց զինքն որ նորէն ստիպէ․ ուստի ակնածութեամբ ելաւ անկէ ու կըսպասէր ժամանակին, որ լսէ․ բայց պարապ տեղը կըսպասէր․ կերեւնար թէ Սփինձէր կը վախնար և կը հրաժարէր պատմելու․ զի հասկըցաւ որ սիրական զաւակը կեանքը վտանգի մէջ պիտի դնէ իրեն համար․ գիտէր արիութիւն սրտին, որ յանձն պիտի առնէր այն սարսափելի ճամբորդութիւն անելու, անոր համար չէր ուզեր պատմել․ չէր ուզեր իր ազատութիւն, որ զաւակին վտանգովը միայն կարնար ըլլալու։

Ծնողական սէրը սկսաւ պատերազմիլ զաւակի սիրոյն հետ․ այն կը ջանար որ ամէն դժուարութեանց յաղթէ իր անձին վտանգովը, միայն թէ կարենայ ծնողքն այն թըշուառութենէ ազատելու․ իսկ անոնք կը ջանային անոր մտքէն այս բանը հեռացնելու․ որ մի միայն մխիթարանքն էր իրենց սրտին։ Ինչպէս կարելի էր մատաղ կուսին ութ հարիւր փարսախ ճամբայ անել, քալելով այն սաստիկ ցուրտ օդին մէջ և վայրենի անապատներուն մէջ։ Եղիսաբեթ սկսաւ ճամբու կրթութիւն անելու․ ամէն օր որչափ

ցուրտ փուք ըլլար՝ կելլէր կերթար , իւր զօրութիւնը փորձելով օրէ օր քիչ քիչ առաջ կերթար յետոյ կը դառնար տեղը . թէպէտ ծնօղքը կը մրմռքէին վրան . բայց ճար չէր ըլլար իւր քաջութիւն յաղթելու ։

Է . Գեղուած ։

Սպերիայի ձմեռը յանկարծ փոթորիկ կը հանէ . նայիս երբ օդը պարզ է յանկարծակի փոթորիկներ կելլեն երկու հակառակ կետէն հորիզոնին՝ սարսափելի ալեկոծելով օդը . կը խորտակեն ծառերը , ձիւնն ու սառը լեռներուն բարձրունքը վրայ կը պտըտցընեն , և կը զարնեն ժայռերուն ծայրին . մինչ զի տուն խրճիթ մարդ և անասուն կը յափշտակեն սոսկալի կերպիւ ։ Յունվար ամսուն մէջ առաւօտ մի երբոր Եղիսաբեթ կրթութեան համար դէպ 'ի փայտաշէն մատուռը կերթար . տեսաւ որ փոթորիկ ելաւ . երկինքը մթնեցաւ , հովն սկսաւ . վազեց արագութեամբ . փոթորիկն իրեն չի հասած ընկաւ ՚որ մատուռին մէջ ազատեցաւ . երբոր քամին զարկաւ մատուռին՝ կը թուէր թէ հիմը պիտի տապալէ . Եղիսաբեթ խորանին առաջն ընկած կաղօթէր . փոթորիկն որոտալով ամէն բան կը սարսեցընէր բաց 'ի սրտէն Եղիսաբեթի . զի գիտէր որ իւր կեանքն էր վ̄ ծնողաց . կը յուսար որ Ա̄ծ կը պահէ զինքն անոնց համար . և չէր

զինքը կորսնցընէր զանոնք չազատած։ Այս ներքին ապահովութիւնը կամ երկնաւոր ձայնը միայն բարեպաշտ սիրտը կրնայ լսելու․ ինչպէս էր Եղիսաբեթին․ որ խռովութեանց մէջ հանդարտ դրաւ գլուխը խորանին ոտքին, ուսկից կաղաչէր ած, հանգիստ քնացաւ, ինչպէս անմեղ զաւակ ծնողաց գիրկը, և ինչպէս առաքինութեան ածային հաւատքին վրայ։

Այս օրեր Սմոլօֆ պատանին Թիօպօլսքիէն դարձեր էր Սախմքա՝, ուր առաջին հոգն էր որ երթայ Սփինձերին խրճիթը․ զի բերեր էր Թոյլտուութիւն Գէօտօրային ու դստերը համար, որ ազատութեամբ կարենան երթալ ամէն կիրակի Սախմքա պատարագ տեսնելու․ զի արքունի հրամանն միայն Սփինձերին համար էր սաստիկ․ ուստի իշխանը հրաման տուեր էր Սմոլօֆին որ նորէն տեսնըլլի հետը և այս պիտի ըլլար վերջին այցելութիւն․ զի պատանին երդուընցեր էր հօրն որ միանգամ միայն տեսնըլլի․ և մեծ տրտմութիւն ունէր այսչափ սաստիկ խըստութեան վրայ։

Երբ Սմոլօֆ ուրախական կրկուք գնաց խրճիթը, տեսաւ որ Եղիսաբեթ չի կայ, պաղեցաւ մնաց, որ չըլլայ թէ խեղճերուն դիպուած մի պատահած ըլլայ․ բայց երբոր իմացաւ թէ Եղիսաբեթ քալելու գնացեր է․ քիչ մի ուշացաւ որ գայ տեսնըլլի․ ահա այս միջոցը վերոյգրեալ փոթորիկն սկսաւ

անանկ սաստիկ որ սարսափեցան մնացին , կը հոգային թէ ի՞նչ եղաւ եղիսաբեթին ․ մայրը վշտանալով կը կանչէր ․ ո՜վ եղիսաբեթ , ի՞նչ եղաւ արդեօք իմ եղիսաբեթս ։

Վերջապէս Սփինձէր չի դիմացաւ առաւ գաւազանն որ երթայ նայի թէ խեղճ աղջիկը ի՞նչ եղաւ ։ Սմօլօֆ մէկէն վազեց գնաց հետը ․ հովն անանկ սաստիկ էր , որ անտառին ծառերը կտոր կտոր կըլլային ամէն կողմանէ ։ Սփինձէր կարդելուր պատանին որ վտանգի մէջ չիյնի ․ իսկ պատանին կը մխիթարէր բարեկամը ։ Երկուսն ալ անտառին մէջէն կերթային ․ Սմօլօֆ հարցուց թէ ո՞ր կողմն երթանք ․ պատասխանեց Սփինձէր թէ դէպ 'ի մեծ դաշտն երթանք ․ ուր ամէն օր կերթար ․ և յուսամ թէ հոն մատուռին մէջ փախած է ։ Այսպէս միակերպ արագութ̃բ կը վազէին երկուսն ալ իբր երեսի վրա երթալով ․ գի տոսկալի քամին ծառերուն ձիւղերն ու ձիւնը երեսնուն կը զարնէր ․ և ժայռերուն փայլատակները վրանին փոթորկելով աչվըննին կը շլացընէր ։ Թէպէտ անտառէն ելլելով այս երևութներէն ազատեցան ․ բայց քամին աւելի բռնացաւ , մինչև վար կը շրջէր զիրենք ։

Վերջապէս շատ մեծ աշխատանքէն ետև հազիւ հասան մատուռը ․ ուր կը յուսային որ գտնեն ․ բայց վախերնուն ոտվընին առաջ չէր երթար որ ներս մտնեն ․ չըլլայ

թէ հոն չի գտնեն ։ Սմօլօֆ առաջ անցաւ մտաւ տեսաւ որ եղիսաբէթ աղաւնիի նման խորանին առջև անոյշ կը քնանար ․ ցցուց հօրն , ու երկուսն ալ զարմանալով ընկան պաշտպան հրեշտակին առաջն ու աղօթք ըրին ․ և շնորհակալ եղան ստեղծողին , որ զինքը պահեր էր այն մեծ վտանգէն ․ ապա մօտեցան նայեցան եղիսաբէթի շնորհալի երեսին , որ անմեղութեամբ կը փայլէր ։

Այս միջոցս արթընցաւ եղիսաբէթ ու վազեց հօրը փաթթըվեցաւ ասելով ․ ո՞հ գիտէի որ զիս կը հոգաք ։ Ո՞վ անբաղդ զաւակ իմ , ասաց հայրը ․ ինչ նեղութեն մէջ ձգեցիր զիս ու ցաւալի մայրդ ։ Պատասխանեց ․ հա՛յր իմ , ներէ ինձի ․ երթանք շուտով մօրս արտասուքն ալ սրբենք ։ Նայեցաւ , որ Սմօլօֆ հօրն ետին կեցեր է՝ զարմանալով ասաց ․ իրաւ դուք էք իմ պաշտպանս՝ բայց ինձի համար ինչ կը հոգաք ․ զի ա̃ծ վերէն զիս կը հոգայ , հայրս և դուն ինչո՞ւ աշխատեցաք հոս եկաք ։

Ասաց հայրը , թէ դուն կուզես շուտով երթալ մօրդ ․ բայց մենք հրաշքով հազիւ կարցանք գալու , դուն ինչպէս պիտի երթաս ։ Փորձենք ասաց ․ ա̃ծ ինձի ալ բաւական ոյժ տվեր է , որ չես կարծեր ։ Այսպէս խօսելով կերևնար վրան մեծ քաջալերութիւն ․ մինչև հայրը սիրտ առաւ , ելան գլուխը ծածկեցին ու առին ազնիւ աղաւնին իրենց մէջ սկսան երթալ , որ թեթև

և քաջութեամբ երթալով անոնց առ սիրտ տվաւ. մինչև ոչ վտանգէն և ոչ աշխատանքէն վախցան ։

Ան ատենը երկինքն սկըսաւ պարզիլ, և փոթորիկը մեղմացաւ. Եղիսաբեթ իւր զօրութիւնը յայտնելու համար թողուց զանոնք ու սկսաւ միայնակ վազել հասնիլ մօրը ։ Որ երբոր տեսաւ զաւակը, առաւ գիրկն ու օրհնեց ամենամեծ շնորհակալութեամբ. և մայրական սիրով կը գգվէր. ապա ամէնքը միատեղ նստան. Սմօլօֆ կը զարմանար Ֆէտօրային ազնուագութ սիրոյն վրա, և շնորհալի զաւակին քաղաքավարութեանը վրա ։

Երբոր իրիկուն եղաւ Սփինձէր բռնեց ձեռքէն Սմօլօֆին, և ցաւագին սրտով նշան տվաւ, որ ժամանակ է երթալու ։ Եղիսաբեթ լսեց որ վերջին գալն էր հոն, այլ հրաման չուներ գալու. ուստի խռովելով աղաղակեց. ի՞նչ, ասաց, այլ չպիտի՞ քեզ տեսնենք ։ Պատասխանեց պատանին, կը տեսնըվինք աստուծով. ես անպակաս կուգամ Սախմքա. և հոն եկեղեցին կարնանք տեսնըվելու. կամ դուրսը կը հանդիպինք ։ Ահա այսպիսի տրտմութեամբ մեկնեցաւ պատանին գնաց Սախմքա ։

Իսկ երբոր կիրակին եկաւ Եղիսաբեթ և Ֆէտօրա պատրաստվեցան երթալ եկեղեցին Սախմքայի. Սփինձէր զիրենք ճամբայ դրաւ, ու դարձաւ տրտմութեամբ խրճիթը. զի առաջին անգամն էր որ մնաց մինակ խըլը

ճիթը . բայց իւր կսկիծը անոնց չիմացուց , այլ օրհնելով յանձնեց զիրենք ա̃յ . որոնք կերթային ու կուլային ։ Օդը գեղեցիկ ըլլալով ճամբան կարճ երևցաւ իրենց . գեղացի թաթար ծառան ալ հետերնին գնաց մինչև գեղը ։ Երբոր մտան եկեղեցին՝ ամէնքը երեսնին կը նայէին . բայց իրենք միայն ա̃յ կը նայէին . սրտերնին լի բարեպաշտութ̃ , գլուխնին խոնարհած . խնդրեցին ստեղծողէն օգնութի̃ , մանաւանդ Եղիսաբեթ որ առաջադրեց և ուխտեց ա̃յ՝ ծնօղքն ազատելու համար ։

Մինչև հանդիսին ժամանակը քօղը երեսէն չի վերուց . միայն ա̃ծ կը խորհէր , և հայրը կը հոգար ։ Երբոր հոգևոր երգերն սկսան երգել եկեղեցնայ մէջ, Եղիսաբեթ սաստիկ զգացողութեամբ յափշտակեցաւ . մտքով տեսաւ թէ երկինքը բացվեր է , և ա̃ծ իրեն հրեշտակ մի տվաւ , որ առաջնորդէ ճանապարհին ։ Երբոր երգը դադրեցաւ , այս տեսիլքս ալ դադրեցաւ ։ Եղիսաբեթ աչքն որ բացաւ , նախ և առաջ տեսաւ Սմօլօֆ պատանին . իրեն թուեցաւ թէ նա էր հրեշտակն որ պիտի օգնէր ազատելու համար հայրը ։

Եկեղեցիէն ելլելէն ետև Սմօլօֆ ուզեց որ մինչև անտառը հետերնին երթայ . գնացին մինչև լճին մօտ . հոն մնաց Սմօլօֆ . մեծաւ երախտագիտութ̃ զատվեցան անկէ գնացին իրենց խրճիթը . և Սմօլօֆ

դարձաւ դէպ 'ի անտառը · և միտքը յափըշտակէր էր Եղիսաբեթին վրա · կը զարմանար իւր գեղեցկութե և շնորհալի շարժվածքին վրա · կըզմայլէր բարեպաշտ ջերմեռանդութենը և ծնողասիրութենը վրա · զի չէր տեսած անանկ բան · մանաւանդ որ անտառի մէջ մնած զաւակ մի ինչպիսի խոհեմութի և կատարելութի կը ցըննէր գործքով։

Եղիսաբեթ առաւօտուն ըստ իւր սովորութե գնաց քալելու , և հասաւ մինչև մատուռը մեծ դաշտին · անանկ արագութի կը փորձէր քալելու · որ կարենայ անով իւր ծնողքը ազատելու ։ Արեգակը իւր ճառագայթը ձգելով ձիւնապատ դաշտին վրա , և բիւրաւոր սառուցներ կախվելով ծառերէն վար , իւր փայլուն երևակայութիը և սիրտը կը բացվէր , ու զօրութիը կը շատնար՝ ասոնց վրա նայելով։ Երբոր հոն կաղօթէր , նայիս Սմօլօֆ հոն հասաւ , ու երբոր տեսաւ աղջիկը՝ աչքն երկինքը թևերը վեր վերուցած , նորէն զարմանքն աւելցաւ ։

Եղիսաբեթ երբոր տեսաւ պատանին՝ մեկէն կանչեց · ո՜վ պարոն Սմօլօֆ · ա̃ծ կուզէ քու ձեռքովդ ծնողքս ազատելու · խոստացի՛ր ինձի առաջի ա̃յ քու օգնութիւնդ ։ Այս բանս որ լսեց պատանին , խռովեցաւ մնաց · ապա ասաց , եթէ ա̃ծ իւր ողորմութիը ձեզ պիտի անէ , ես ինչպէս կարնամ՝ հրաժարելու · հնազանդ եմ բարերար կամացը · ահա կանք առաջի ա̃յ ։

Ան ատենը Եղիսաբէթ սկսաւ այսպէս խօսիլ. Պարոն Սմօլօֆ, ես շատոնց կը փափաքէի հետդ առանձին խօսելու և իմ միտքս քեզի յայտնելու, որ ա՟ծ դրաւ ու քու ձեռքովդ պիտի ըլլայ. ահա՛ ա՟յ առջևն ենք. գիտէ Ստեղծօղս որ խելքս միտքս տվեր եմ ծնօղքս ազատելու համար. քանի որ ես զիս կը ճանչնամ, միայն անոնց վրա կը մտածեմ. անոնց սէրն է իմ հանգիստս, և անոնց երջանկութիւնն է բոլոր կենացս նպատակը. Իմ ծնօղքս թշուառութեան մէջ են. ա՟ծ ինձի կը կանչէ որ օգնեմ իրենց. քեզ ալ այսօր հոս բերաւ, որ ինձի օգնես, ու իմ վիճակս լրացնես. Լաւ գիտնաս, որ ես պիտի երթամ Պէթրպուրկ ազատութիւն խնդրեմ հօրս համար. ահա այս է իմ կամքս.

Ինձի կերևնայ թէ ա՟ծ այս վիճակն ինձի որոշեր է իմ կենացս հետ միատեղ. այս դութին ու սէրը ծծեր եմ կաթին հետ մէկտեղ. Ես Պարոն Սմօլօֆ առջի անգամն որ քեզ տեսայ, միտքս կաթեց որ օր ըլլայ յայտնեմ քեզ և օգնութիւնդ խնդրեմ. բայց այսօրվան պահված էր. ահա՛ այս է իմ խորհուրդս. թէ՛ ննջեմ, թէ զարթնում. այս է այն, որ զիս հոս բերաւ, այս է որ սիրտս շարժեց քու վրադ եղբայրական սիրով, որ յայտնեմ այս խորհուրդս. վերջապէս, այս է միայն, որ կուտայ ինձի քաջալերութիւն՝ ոչ աշխատանքէ, ոչ դըժբաղ-

դուլթեանց, և ոչ մահուան՛ վախնալ. և այս կարծեմ զիս անհնազանդ պիտի անէ ծնողացս, եթէ զիս արգելուն երթալու։

Սմօլօֆ պատանին զարմացեր էր այս մատաղ կուսին այսպէս մեծամեծ բաներ մտածելուն համար. ապա ասաց. Նորանի և հազար երանի է ինձ, եթէ զիս ընտրես քեզ օգնական և լսող. բայց դուն չես ճանչնար թէ ինչ մեծ դժվարութիւններ կան։ Կրկնեց աղջիկը. ես երկու միայն դժվարութիւն կը ճանչնամ. մեծ բան էր եթէ կարնայիր բառնալ. մէյմը, որ ճամբայ չիյտեմ, ո՛ւր պիտի երթամ, և չուզիմ ապահովլունի. երկրորդ՝ չըլլա՛յ թէ իմ երթալովս վնաս մը գայ հօրս։ Ուրեմն պէտք է որ դուն ինձի ճամբայ ցըցնես. ի՛նչ քաղաքներէ պիտի անցնիմ. ի՛նչ տներ պիտի իջնիմ, և ի՛նչ միջոցով պիտի աղերսագիրս կայսեր ներկայացնեմ։

Պատասխանեց Սմօլօֆ. գիտե՞ս Ելիսաբէթ, թէ կայսրն ի՛նչպէս բարկացած է հօրդ դէմ. որ մահացու թշնամիի տեղ դրեր է։ Պատասխան տվաւ, թէ ամենեւին չիյտեմ, թէ ինչ յանցանքով հայրս ամբաստանվեր է. ոչ հայրենիքը գիտեմ, և ոչ ճշմարիտ անունը. բայց ապահով եմ անմեղութեանը վրա։ Աղաղակեց պատանին. ի՛նչ, չե՞ս գիտեր ծնողացդ վիճակը. չե՞ս գիտեր ի՛նչ մեծութիւն և գերազանցութիւն ունէին աշխարհիս վրա։ Աղջիկը խօսքը կըտրեց, թէ ահա այս էր հօրս ծածուկն որ իս–

մէ պահեց . ապա պարտիմ իրմէն իմանալ և ոչ ուրիշէն . և անկէ ետև երթամ աշխատիմ սիրական ծնողքիս համար . որոնց պարտական եմ իմ կեանքս ։ Սրկնեց պատանին . Եղիսաբեթ կարնա՞ս 3500 վերստ անցնելու . որ կորոշէ իշիմայ շրջանակը ինկուխա գաւառէն . և այն միայն ոտքով՝ անտէր՝ անօգնական ։ Աղաղակեց աղջիկը խորանին առաջն ընկած . զիս ղրկող տէրը օգնելու համար ծնողացս՝ չի թողուր զիս անտէր ։

Սմոլօֆին սիրտը չի դիմացաւ՝ սկսաւ լալ . ապա ասաց . այդ քու բանդ շատ սիրտս շարժեց . պէտք է որ առաջարկութեանդ վրա մտածեմ . ժամանակս ձմեռն է . քիչ ժամանակէն ետև սիպերիայի անտառները կը խռնաւանան սոսկալի . ուստի ես հիմա կերթամ Թօպօլսքի , և հօրս կը յայտնեմ . նա գթասիրտ բարի մարդ է , ողորմութի մի կանէ անբաղդից . յետոյ նորէն կը տեսնըվինք . յուսամ թէ նա չի պատժեր զհայրդ այդպիսի առաքինի գործքի համար , թէ որ ըլլայ կարելի ։ Անկէց ետև իմ հանգստութիւնս և երջանկութիւ կը համարիմ այն օրն երբոր ծնօղքդ կաղատին այս դառն աքսորանաց , ու կերթան կը վայելեն իր ենց հայրենիքը . բայց Եղիսաբեթ յիշէ՛ ան ատենը , թէ Սմոլօֆ այս անապատին մէջ տեսաւ քեզ , խօսեցաւ հետդ սիրով . և իրեն շատ քաղցր է ապրիլ , բարեկամ ըլալ աղ-

քատ և իմաստուն կուսիդ հետ. քան ամէն Ճոխութիւն մեծնալ։

Այս բանիս վրայ Եղիսաբեթ մտածեց, թէ ժամանակ անցաւ, ելաւ երթալու. ասելով ամօթխածութեամբ. ես եկայ խօսելու հետդ ծնօղացս օգտին համար. շնորհակալ եմ լսեցիր ինձի, հիմա պէտք է երթամ գտնեմ զիրենք։ Երկնեց պատանին. Ո՜հ ազնուական դուստր. գնա գնա կատարէ առաքինութեանդ պարտքդ. իմ սիրտս չի պիտի հեռանայ քեզմէ, և իմ խորհուրդս միայն պիտի զբաղի քեզ օգնելու համար։ Այս ասելով խոստացաւ, որ հետևեալ կիրակին տեսնէ զինքը եկեղեցինայ դուռն ու պատմէ ամէն հարկաւոր գիտելիքը իւր Ճամբորդութեան համար. և այսպէս մեկնեցան։ Կիրակի եղաւ՝ Եղիսաբեթ մօրը հետ գնաց եկեղեցին Սախմքայի. պատարագէն ետև անհամբերութիւն ելաւ. բայց մայրը դեռ կաղօթէր. նայեցաւ, որ Սմօլօֆ չէր եկած, շատ մեծապէս վշտացաւ. և այսպիսի տըրտմութեամբ դարձաւ մօրը հետ տուն. անհամբեր վախ և վտանգ միտքը կուգային նոյն իրիկունը։ Սմօլօֆն ալ չի տեսաւ, բոլորովին անհանգիստ եղաւ, ուստի շուտով առանձնացաւ իրեն բնակարանն, ու սկսաւ երկնաւորէն օգնութիւն խնդրել արտասուօք։

Երբոր անմեղ զաւակը գնաց քոլերէն, մայրն սկսաւ ուրիշ մտքի երթալ. դարձաւ ասաց Սփինձներին. կը տեսնես Եղիսաբե-

թի սրտին փոփոխութիւնը. որ միշտ կը մտա-
ծէ, ու Ամօլօֆին հեռանալն իրեն անհան-
գըստութիւն կը բերէ. այսօր եկեղեցին ալ
շատ հանգիստ չէր. այս ինչ մեծ ցաւ է մե-
զի։ Ո՛վ Ստանիսլաւս. ես կը յիշեմ այն
օրերն որ իմ գլխուս եկաւ երբոր երջանիկ
հարուստ եղայ. անանկ որ երբ քեզի համար
ինձի հետ կը խօսէին, կամըչնայի. ու աչքս
միշտ քեզ կը փընտըռէր։ Ա՛հ ինչ պիտի
ըլլայ զաւակիս վերջը. չէ՞ նա ինչպէս մայրն՝
որ երջանկութիւն էին իրեն այն բաները։

Ափինձեր կանչեց լալով. ինչ երջանկութիւն
է, որ քաղցր կեանքդ աքսորանաց դառն ա-
նապատին մէջ անցուց։ Կրկնեց կինը. այո՛
երջանկութիւն է ինձի թէ և աքսորանաց մէջ
մաշիմ. բաւական է որ սիրելեաց սիրտը ի-
րարու մօտ գտնըվին, ուր որ ըլլան նոյն է։
Այս խօսքէս ետև նորէն շարունակեց առ-
ջի խօսքը. կը վախնամ, որ Ամօլօֆ պատա-
նին աղքատ տեսնելով զաւակս, չուզենայ
առնելու, և իմ աղնիւ զաւակս տրտմութենէ
մեռնի, իւր մայրն ալ իւր հետը։ Այսպէս
խօսելով խեղճ կուլար. բայց այրը հաստատ
սրտով այսպէս կը մխիթարէր։

Սիրելի՛ իմ Փէոտորա մի՛ վախնար, և մի՛
խռովիր. Եղիսաբեթ ուրիշ հոգւոյ տէր է.
և ուրիշ առաքինական վարք ունի, որ պի-
տի յայտնէ գործքովը։ Թէ որ մենք կա-
մենանք տալու զինքը Ամօլօֆին, ապահով
եմ թէ չի հրաժարիր առնելու մեր աղնիւ

կոյսը. թէև անապատիս մէջ աքսորած ըլլանք. Սակայն Եղիսաբէթ չի պիտի մնայ անապատիս մէջ անծանօթ, և ոչ դժբաղդ երկար. զի անհնարին է թէ անոր այնչափ առաքինութիւնները առանց պսակի մընան. շուտ և ուշ պէտք է երևնայ անոր փառքը։

Ֆէոտորա այսպիսի քաջալերական բան լսելով զօրացաւ. ու սկսաւ քնանալ։ Իսկ Եղիսաբէթ կը նայէր որ Սմօլօֆ Սախմքա գայ. երկու ամիս ամէն կիրակի եկեղեցին կերթար, տեղ մի չի տեսաւ. սիրտը շատ կոտրած էր. կարծէր թէ խնդիրքը մոռցեր է. և շատ անգամ կուլար։ Ապրիլի վերջը գեղեցիկ արև օրեր եղան, ձիւներն սկսան հալիլ, և լճին աւազոտ կղզիներն երևցան կանաչազեղ. նոյնպէս գետին քովերը կը թռչէին կարմրագոյն քանարիայք պարոյց սև կտուցքով, և յոպոպ գլուխը, որ գեղեցիկ ձայնով կերգէին, և գետերուն վազելովը զանազան տեսակ թռչուններու ալ վեր վար կը թռչէին. վերջապէս գեղեցիկ գարուն եղաւ. իսկ խեղճ Եղիսաբէթ հալէր կը մաշվէր որ Ճամբայ չէր կարնար ելլելու այն գեղեցիկ օրերը։

## Է. Դիպուած ։

Մ՚էկ առաւօտ մի Սփինձէր կաշխատէր պարտէզին մէջ, Եղիսաբեթ քովը նստած կը մտածէր. շատ խորունկ մտածելով երեւակայեց Ճամբուն դժվարութիւնները. եւ թէ ինչպէս յայտնէ իւր խորհուրդը ծնողաց. անոնք որ դէմ դան չի թողուն զինքը՝ ինչ պատասխան պիտի տայ. եւ ինչպէս պիտի սիրտն ամըրցընէ ու անոնց միտքը իրեն դարձընէ ։ Այս մտածմունքներն իրեն մտացուցին թէ հայրը քովն է, լալով ծնկան վրա եկաւ խնդրեց ստեղծողէն զօրու՟ն, որ կարենայ քաջութ՟ կատարելու ։ Սփինձէր երբոր այս լալագին աղաղակը լսեց՝ վազեց եկաւ աղջըկանը քովն ու ասաց. Ե՛ղիսաբեթ ինչ ունիս, եւ ինչ կուլես. ո՛հ այդ ինչպէս սիրտդ կը մաշես. յայտնէ ինծի՝ ես մաշվիմ ։ Պատասխանեց աղջիկը. Հա՛յր իմ, այլ մի պահէր զիս հօս. ես պէտք է որ երթամ. Ճամբէ՛ զիս. զի ա՟ծ է, որ զիս կը կանչէ ։ Այս խօսքս չի լմընցած թաթար ծառան վազելով եկաւ ասաց. Ահա՛ պարոն Սմօլօֆ, ահա՛ պարոն Սմօլօֆ ։ Եղիսաբեթ լսելով ուրախութէն չի գիտցաւ ինչ առնէ. բռնեց հօրը ձեռքը դէպ 'ի սիրտը տարաւ ասելով. Կը տեսնես ահա ա՟ծ է. որ զիս կը կանչէ. ինքը կը ղրկէ ինձ օգնական, որ Ճամբաս բանայ, ստեղծողիս դըժվար բան մի չիկայ ։ Ո՛վ հայր իմ, սիրական

հայր իմ. քու երջանիկ դուստրդ պիտի կոտրէ շղթադ ու քեզ ազատէ ։ Այս բանս խօսելով գնաց դէպ 'ի տուն. մօրը հետ մէկտեղ ներս մտան գտան մեծաւոր մարդ մի յիսուն տարեան, միակերպ հագուստով, նստած էր շատ մարդիկներով. զարմացան մնացին. զի այնպիսի բան չէր եղած. Ելիսաբեթին սիրտը նորէն կոտրեցաւ, դէմքը դեղնեցաւ, և ծնկերը կը դողային ։

Վերջապէս իմացան որ կառավարիչ մեծ իշխանն էր Թօպօլսքի մայրաքաղաքին, և հայրը Մօլօֆին. որ սկսաւ այսպէս խօսիլ Սփինձէրին հետ. Պարոն Սփինձէր, արքունական խոհեմութիւն ռուսիոյ աքսորեց քեզ հոս. և մինչև հիմա չի կարցայ գալու. ահա՛ առաջի անգամն է որ այցելութիւն եկայ այս շրջանակիս. քաղցր էր ինձ թէ որ թոյլտուութիւն ըլլար բարեկամութիւս յայտնելու քու պայծառ անձիդ. և մեծ բաղդաւորութիւն կը համարէիմ ինձ. այլ ցաւ է ինձ, զի այն պարտաւորութիւն կարգիլէ զիս օգնելու և պաշտպանելու քեզ ։ Պատասխանեց Սփինձէր. ես չեմ ուզեր մարդկային պաշտպանութիւն և ողորմութիւն, և չեմ ապաւինիր անոնց արդարութեան ու գթութեանը. աղէկ թող ըլլան իրենք, որ զիս հեռացուցին այսչափ իրենցմէ. ես պիտի անցընեմ իմ օրերս այս անապատին մէջ առանց տրտնջման ։ Երկնեց կառավարիչը. քեզ նման պայծառ մարդու շատ ահռելի

բան է անցընել կեանքը այս ողորմելի անապատին մէջ։

Սփինձէր այնպէս հանգիստ և առաքինի սրտով պատասխանեց, որ յայտնի ցուց, թէ իւր անձը մեծ էր քան իւր թշվառութիւը։ Իսկ Եղիսաբեթ մօրը ետին կեցած կը նկատէր, թէ կառավարչին երեսը ինչ գութ և մարդասիրութի կը տեսնէ. որ համարձակի սիրտը անոր բանալու։ Կառավարիչ իշխանը տեսնելով Եղիսաբեթին շարժմունքը իմացաւ, ինչպէս որ որդին ալ իրեն պատմեր էր. ասաց իրեն. Ազնուուհի, որդիս քեզ ճանչցեր է ինչպէս որ պատմեց ինձի։ Պատասխանեց Ֆէօտօրա. Իրաւի է Պիօրն, զի պարտական է անոր հօրը կեանքն որ ազատեց։ Երկնեց իշխանը. Այդպէս չէ տիկին. զի նա ինձի պատմեց թէ Եղիսաբեթ իւր կեանքը կուզէ տալ հօրն ու քեզի համար։ Ա՛հ պիտի տայ, ասաց Սփինձէր, այս գութն է մեր մի միայն բարին որ ունինք. այս բարին միայն մնաց մեզ. որ մարդիկ չի կարօղացան մեզմէ հանելու։

Ան ատենը իշխանը դարձաւ ասաց Եղիսաբեթին. Ազնուուհի, երկու ամիս է, որ որդիս Սախմքա էր, կայսերէն հրաման առաւ, որ երթայ հասնի զօրքին, որոնք կը հաւաքին երթալու Լիվօնիա. բայց երթալէն առաջ երդումով խնդրեց իմէ, որ քեզ հասցընեմ իւր թուղթը. ահա այն թուղթը իմ ձեռքովս կուտամ քեզ։

Եղիսաբեթ ամօթխածութեամբ առա-
թուղթն ու առաջը նայեցաւ . երբոր ծնող-
քը կը զարմանային այս բանիս վրա , կան-
չեց Իշխանը . երջանիկ հայր , երջանիկ մայր ,
որ այսպիսի զաւակ ունիք . որ ձեզմէ ծա-
ծուկ ձեր փրկութենը համար կաշխատի .
Յետոյ Սփինձերին ասաց , թէ թագաւո-
րին հրամանը զիս կը պարտաւորէ , որ միշտ
արգելում , չըլլայ թէ մարդ հանդիպցընես
բնակարանդ ։ Սակայն լսեցի , որ աղքատ
միսիօնար քահանաներ պիտի գան Չինիմա-
չինու կողմէն . պէտք է որ այս լեռնէն անց-
նին . թէ որ դալու ըլլան այս խրճիթն ու
խնդրեն գիշեր մի կենալու , հրաման է , կար-
նաս զանոնք պահելու ։

Կառավարիչ իշխանը անկէ մեկնելէն ե-
տեւ Եղիսաբեթ վար ծռած կընայէր թղթին
վրա , ու չէր համարձակեր առանց ծնողացը
հրամանին բանալու , ուստի ծնողքը հրա-
ման տըլին որ բանայ կարդայ . Թուղթը կար-
դացածին պէս ընկաւ ծնողացը գիրկն ու
լալով աղաղակեց . Հասաւ ժամանակը , օգ-
նեցէք առաջարկութենս . երկնային նախախ-
նամութին ինծի ապահով ճամբայ կը բա-
նայ . ստեղծօղս զիս ընդունեց ու օրհնեց
իմ մտածութիս ով սիրական ծնողքս , դուք
ինչպէս պիտի չի հաւանիք ու չի օրհնէք
զիս ։ Սփինձէր միտքն իմանալով խռովե-
ցաւ սիրտը . իսկ Փէօտօրա ամենեւին բան
մի չի գիտնալով շփոթեցաւ . Եղիսաբեթ ,

ասաց , ի՞նչ խորհուրդ է այդ . և ի՞նչ կայ գրոյդ մէջ ։ Աղջիկը համարձակեցաւ պատասխանելու . Ո՜վ մայր իմ ներէ ինձի . ես կը դողամ խօսելու քու առաջդ . չե՛ս իմանար թէ ի՞նչ կայ . քու ցաւդ սիրտս կը խորտակէ . որ է մի միայն իմ արգելքս . ո՜վ մայրիկ թո՛ղ որ յայտնեմ հօրս առջին . դուն չես տեղեակ ինչպէս նա . . . Կտրեց խօսքը Սփինճեր . Չէ՛ դուստր իմ չէ՛ . մի՛ աներ այդ բանն , որ ոչ աքսորանքը , և ոչ դժբաղդութիւնը կարցաւ մեզ իրարմէ զատելու ։ Խեղճ մայրը իմանալով բանն սկսաւ զարհուրելի ձայնով աղաղակել . Սիրական զաւակս , առաքինի դուստրս , խնդրէ իմմէ իմ կեանքս , և մի՛ խնդրեր հրաման մեզմէ հեռանալու . թո՛ղ ես մեռնիմ , իմ մահուամբս ձեզմէ զատվիմ , չէ կենդանութեամբս ։ Այսպիսի ողորմելի խօսքերով շատ լացին ։ Նազլիսաբէթ սիրտ առնելով ասաց . Մա՛յր իմ , հօրս երջանկութեանը համար կը խնդրեմ քիչ մի ժամանակ ։ Կանչեց մայրը , և ո՛չ օր մի . և ոչ ժամ մի . ի՞նչ երջանկութիւն է այն՝ որ կարենայ գնել քու հեռաւորութիւնդ . ո՛չ ո՛չ , և ո՛չ օր մի . ո՜վ ստեղծող երկնի և երկրի , մի՛ թող տար ինձ այն , որ իմմէ կը խնդրէ ։

Այս բանս խորտակեց Նազլիսաբէթին սիրտը . չէր գիտեր ի՞նչ անէ , և ի՞նչ խօսի . ապա հանեց թուղթը հօրը տվաւ որ կարդայ ։ Սփինճեր առաւ թուղթը և քաջալերեց կինն որ հանդարտի . ապա սկսաւ ձայ-

նով կարդալ այսպէս. „Ազնուուհի՛ դուստր. ցաւ է ինձ. որ չի կարցայ քեզ տեսնելու և օգնելու առաջնորդելով թէ ինչ ճամբայ պիտի բռնես. ահա թագաւորական սաստիկ հրամանը զրկեց զիս իմ փափաքէս. զի Թօպօլսքի հասածիս պէս հայրս իմացուց ինձի եկած հրամանն երթալու հազար փարսախ հեռու ասկէց. որուն հնազանդելով մեկէն ճամբայ կելլեմ. բայց չիյտես թէ ինչ սէր և գութ հետս կը տանիմ. Ահա ես ամէն բան յայտնեցի հօրս, ու քեզ ալ իրեն ծանուցի, որ երբոր լսեց քու միտքդ՝ սիրտը լեցվեցաւ լացաւ. կարծեմ թէ նա կուզէ քեզ տեսնելու, և մխիթարելու. Կարելի է թէ այս տարի կերթայ իշիմայ շրջանակը այցելութեան համար, և այս թուղթս կը հասցընէ քեզ. Ազնիւ Եղիսաբեթ, ես հանդիստ կերթամ իմ ճամբաս, որովհետև յանձնեցի քեզ իմ հօրս պաշտպանութեր. բայց կը խնդրեմ, որ իմ դառնալէս առաջ ճամբայ չելլես. ես տարիէն ետև կուգամ, ու կը տանիմ քեզ Պէթրպուրկ. ուր ամէն ճամբորդութիւն հոգալով կայսեր ալ կը ներկայացնեմ քեզ. մի վախնար, ես ոչ միայն եմ բարեկամ, այլև պիտի ըլլամ եղբայր հարազատ, և սիրելի անջնջելի սիրով”։

Այս բարեւագրին տակը հայրն ալ ձեռք դնելով հաստատեր էր քաջալերական խօսքերով. անանկ որ երբոր լմնցուց Սփինձէր

կարդալը՝ շատ սիրտ առաւ և զօրացաւ, որ դատերը վրա այնչափ համարում ունէին, ու կուզէին օգնելու անոր հայրասէր առաքինութենը: Սակայն մայրը տրտմութեան ծով ընկղմած՝ միակերպ աղջկանն երեսը կը նայէր. ու կենար կենար աչքը երկինքը կը վերցընէր: Իսկ Եղիսաբեթ ընկաւ առաջնին ու սկսաւ այսպէս խօսիլ. Ո՛վ ծընողք իմ հրամմա՛ն արէք որ խօսիմ ձեր առջին. ես իմ կեանքս դրեր եմ ձեր երջանկութենը համար. ես պիտի հեռանամ ձեզմէ, որ դուք մտենաք ձեր քաղցր հայրենեացը. ես տարի մի ձեզմէ զուրկ պիտի մնամ, դուք ձեր կեանքը հայրենեացը մէջ պիտի անցընէք, ինչպէս կը յուսամ ստեղծողին օգնութե՛րը և կարողութե՛րը, որ օգնական է անբաղդից և յուսացողաց: Ո՛հ, թէ որ ասկէ աւելի բան մի խնդրեմ ձեզմէ մի՛ կատարէք: Սփինձէր ձեռքը դրաւ աղջըկանը գլխուն՝ կեցաւ լուռ: Մայրը աղաղակեց. Մ՚իայն ոտքո՞վ, անօգնակա՞ն. ինչպէս ըլլալու բան է. ոչ ոչ. անկարելի է, որ քեզմէ զատվիմ: Պատասխանեց Եղիսաբեթ. Գիտնայիր թէ ես որչափ ժամանակվան ՚ի վեր է այս առաջադրութիս արեր եմ. երբոր ձեր դժբաղդութիր հասկըցայ՝ անկէ ՚ի վեր է. ես գիս ձեզի զոհ եմ արեր. երջանիկ է ինձ այն օրն, որ ձեր ազատութեն համար պիտի անցընեմ. երջանիկ է այն յոյսն որ գիս զօրացուց. եթէ այս յոյսը կուզէք

վերցընել խմէ, նախ իմ կեանքս վերցուցէք. եթէ պիտի մնամ այսպէս առանց օգնելու ձեր անբաղդութեր, թող մթնէ իմ լոյսս և վերնայ իմ արևս։ Աղաչեմ ներեցէք, եթէ ձեզ կը վշտացնեմ. ինչու համար կուզէք որ ձեզմէ չի զատվիմ, երբոր ամենքնիս ալ նոյն անբաղդութեն մէջն ենք. թողէք երթամ. բաց է ողորմածիս դուռը. չի կորսնցընէր իմ յոյսս, իմ ջանքս, իմ տառապանքս վասն ձեր ազատութեն. Մ՚ի ասէք թէ այս բանս է անկարելի. չի կայ աշխարհիս մէջ անկարելի բան, եթէ աշխատի մարդ՝ կը վայելէ. սիրտս ձեզի կը պատասխանէ, որ այսքան զօրացեր է արդարութեն համար. չունի վախ ոչ աշխատանքէ, ոչ վտանգէ ոչ նախատինքէ, և ոչ թագաւորէն. ուրիշ տեղէ ահ չունի, միայն ձեզմէ որ չըլլայ թէ չի հաւանիք։

Սփինձէր չի դիմացաւ կանչեց. թող Եղիսաբէթ, բաւական է. խռովեցիր հոգիս, մաշեցիր սիրտս. որ մինչև ցայսօր գերազանց առաքինութեց և մեծամեծ գործոց համար քաջ էր. ահա այսօր թուլացաւ. ես չէի կարծեր զիս այսչափ տկար. ահա տկարացայ, չեմ կարող հաւանիլ առաջարկութեդ, որ կը խնդրես։ Երբոր Փեօտօրա լսեց այս խօսքս, սիրտ առաւ, բռնեց աղջըկանը ձեռքը, դէպ 'ի սիրտը տանելով ասաց. լսէ ինձ Եղիսաբէթ. ողորմէ ողորմելոյս. թէ որ հայրդ տկարացաւ առջիդ,

պէտք է որ ներես մօրդ տկարութիւնը որ չի՛ կարնայ թողուլ քեզ գործել դիւցազնական առաքինութիւնդ ։ Օտար բան է, որ մայրը կը խնդրէ զաւակէն քիչ առաքինի ըլլալ ։ Կը խնդրեմ սիրական զաւակս. բայց չեմ հրամայեր ։

Արկնեց եղիսաբեթ. Մայր իմ, քու խընդիրքդ միշտ արդար է. թէ որ հրամայես ինձ հոս կենալ չերթալ, պէտք է որ հնազանդիմ. բայց ես կաղաչեմ, թողուցէ՛ք զիս որ ձեզի ցաւակցիմ. ձեր ազատութիւնը հոգամ. իմ յոյս հաստատուն է. զի մէկ օրուան մտածում չէ. այլ շատ ժամանակուան. ես իմ տկար զօրութեանս չեմ ապաւինած, այլ ա̃ծային ողորմութեան. կա՞յ ուրիշ առիթ ազատելու հայրս ասկէ 'ի զատ ։ Հա՛ 12 տարի է հոս ընկեր ենք. ո՞ր բարեկամ օգնեց և պաշտպանեց մեզ. որչափ մեծ բարեկամ ըլլայ, կարնա՞յ համարձակ խօսելու, ինչպէս մենք. կը հոգա՞յ սրտանց՝ ինչպէս մենք ։ Թողէ՛ք կաղաչեմ, որ յոյս ամուր մնայ. մի դէմ կենաք այս պայծառ առաքինութեանս, որ ա̃ծ դրաւ միտքս գործելու. և պատրաստ է օգնելու և կատարելու ։ Ո՞ւր թողունք այն. թէ որ զիս մարդու տայիք, չէ՞ր կարնար զիս ձեզմէ որոշելու. ի՞նչ պիտի ընէիք այն ժամանակը. միթէ այն ժամանակը վտանգ չէ՞ր կարնար գալու ։ Ես հիմա սորված եմ այս ցրտերուն. կը դիմանամ հեռու ճամբայ քալելու թե-

թեւութի̃. իմ մանկութենէս կը վախնաք. կարող է ա̃ծ օգնելու անոր, որ իրեն միայն ապաստաներ է և ոչ զօրութեան անձին։ Իրաւի՛ անփորձ եմ. բայց բարեգութ կառավարիչն որ կուզէ օգնել առաջարկուենս, ինձի կը սորվեցնէ. որ եթէ ներէ աղքատ քարոզիչներուն, ահա զանոնք կուտայ ինձի առաջնորդ և պաշտպան։ Ահա կը տեսնեք որ ա̃ծ նախատեսութեամբ կը հոգայ ամէն բանս. չի կայ վտանգ, և ոչ դժվարութի̃. ուրիշ պակասութիւն չունիմ՝ եթէ ոչ ձեր հաւանութի̃ն ու օրհնութի̃ը։

Հայրը սաստիկ վշտանալով աղաղակեց. ո՜վ խոնարհ զաւակ, քու նախնիքդ թագ ունէին լէհաստանու մէջ, և մօրդ նախնիքը մինչև Սիպերիա կը տիրէին. դուն ի՛նչպէս պիտի մուրանալով երթաս մինչև Պէթըրպուրկ։ Պատասխանեց համեստութի̃ Եղիսաբեթ։ Եթէ ես թագաւորական զարմէ եկած եմ, պէտք է որ գործքովս յայտնեմ զիս արժանի անոնց ու ձեզ. և չի պղտիկցընեմ անոնց փառաւոր անունն որ ինձի թողին։ Ինչո՛ւ համար պիտի ամչնայ դուստրն Սէյտոսի և Սօպիէսքիոյ (*) երթալ ողորմութի̃ խնդրելու իրեն նմանիքներէն։ Աշխարհիս ամէն մեծամեծներն ընկան կործա-

(*) Այսպէս կանուանէին ազնուական թաթարներն, որ եկած են նախնի արքայորդիներէն սերելեայ։

նեցան․ անոնք իրենց համար պատիւ ստացան․ ես աւելի երջանիկ ըլլալով հօրս համար պիտի ստանամ։

Այս մանուկ կուսին ազնուական հաստատութ՟իը կը փայլեցնէր աչքին մէջ ա՟ծափայլ գերազանցութ՟ի մը․ և խոնարհ հնազանդութ՟ին ու քաջու՟իը յաղթեցին Սփինձերայ․ մինչև խիղճ եղաւ իրեն թէ ի՞նչպէս արգելու զաւակը այն մեծ առաքինութ՟էն, և պահելու այն անապատին մէջ ողորմելի։ Ան ատենը ասաց, ո՛վ իմ սիրուն Փէոտորա, ի՞նչպէս թողունք Եղիսաբեթն որ հոս մեռնի․ ի՞նչպէս զրկենք զինքը յաջողութ՟իներէն, որ ա՟ծ կուտայ իրեն ազնուութ՟էը համեմատ։ Բա՛յց եղիր սիրելի․ զի ուրիշ միջոցով չենք կարնար մեր առաքինի զաւակը փառաւորելու եթէ ոչ թողունք որ երթայ։

Աղաղակեց Փէոտորա ողորմելի ձայնով․ ո՛չ ո՛չ, ես չեմ թողուր երթալ․ կարնամ դէմ կենալու․ ի՞նչպէս թողում վտանգի մէջ ձգելու կեանքը մէկ հատիկ զաւակիս․ ի՞նչպէս թողում ու լսեմ օր մի թէ կորաւ Եղիսաբեթ․ պաղեցաւ սոսկալի անապատին մէջ․ ո՛վ Ստանիսլաւս, ի՞նչպէս անմեղ դառնուկս զոհ անենք մեզի համար․ մատնենք դժբաղդութ՟եց և մահու։

Երբոր այսպէս կը խօսէր՝ Սփինձէր յուսահատելով կանչեց․ Դո՛ւստր իմ, մինչև որ մայրդ չի հաճի, դուն կարող չես երթա-

լու ։ Եղիսաբեթ դարձուց խօսքը . Մայր իմ, եթէ դուն հրաման չի տաս, ես չեմ երթար . ես հնազանդ եմ քեզ միշտ . բայց կարելի է, թէ ա̃ծ ինքը պիտի կատարէ . խնդրենք մայր իմ միաբան, որ իւր բարեբար կամքը մեզ յայտնէ . և յաջողէ այն որ պարտական ենք անելու . ահա այս է լոյսն որ կառաջնորդէ . ամենայն յաջողութիւն և ճշմարտութիւն միայն անկէ կուգայ, որ աշխարհս կը խնամէ ։ Այս բարեպաշտ խօսակցութիւնը բարեպաշտ դստեր մեղմեցուց Փէօտորային ցաւը . այս առաքինի ձայնը քաջալերեց մայրը և հանդարտեցուց ցաւած սիրտը ։

Հետևեալ օրը անանկ պատահեցաւ որ Սփինձէր ու աղջիկը մինակ գտնըվեցան՝ սկսաւ պատմել աղջկանը՝ գլխէն անցած խեղճութիւնները . և ձախորդ պատերազմերն որ լեհաստան բաժնեցին ։ Այս ասաց . իմ դժբաղդութիւնս հայրենիքս աւելի սիրելուս համար պատահեցաւ . իմ միակ յանցանքս է սիրելս իմ հայրենիքս . և չի դիմանալ անոր գերութեանը . իմ արիւնէս մեծ թագաւորներ նստան, անոր համար պարտաւորեցայ պաշտպանելու մեր տէրութիւնը . ուսկից առեր էի այնչափ պատիւ . գլուխ եղայ ազնուական լեհերուն, և պաշտպանեցի հայրենիքս . որուն պարտական էի ։ Ես էի որ կը կռուէի իրեք մեծամեծ տէրութեանց դէմ . երբոր եկան բազմութե̃ պաշա-

րեցին Վարսավլիա մայրաքաղաքը. մէկ դիէն կրակ, մէկալ դիէն յափշտակութիւն. ես տակաւին դէմ կեցեր էի, որ հայրենիքս չի կործանի. ես էի զօրացնօղն ու զէնք և օգնութիւն խնդրօղը։

Անօգուտ եղաւ իմ ջանքս. իմ երկիրներս անցան ռուսաստանու տէրութեան. ուր կը բնակէի. բայց սաստիկ հայրենասիրութեանս համար կասկածելի եղայ մեծ կայսերութեան աչքին։ Օր մի տնէս դուրս հանեցին ու տարին Պեթրպուրկ բանտը դրին. անատենը դուն չորս տարեկան էիր։ Փէօտօրա մայրդ հետևեցաւ ինծի. որ մեծ խնդիրքներով շնորհեցաւ իրեն այս թոյլտուութիւնը։ Տարի մի մնացի ողորմելի. չէի կարծեր թէ զիս այսպիսի սոսկալի պատժի արժանի կը համարին, որ հայրենիքս ուզեցի պաշտպանելու. թէպէտ խոստացեր էի յետոյ հպատակ մնալ Տէրութեան։ Վերջապէս աքսորվեցայ Սիպերիա. իմ առաքինի Փէօտօրաս չի թողուց զիս մինակ, հետևեցաւ եկաւ. աւելի լաւ եղաւ սրտին քան թէ պարտականութեանը. անանկ որ, եթէ աքսորվէի Պերեզօվայ զարհուրելի խաւարը. և միայնարանը Պայքալ լճին կամ Կամչեաքայ՝ չէր թողուր զիս միայնակ. ահա այսչափ է անոր դիւցազնական առաքինութիւնն ու սէրը. եթէ քաղցրութեան մի տեսնես վրանիս, այն մօրդ է. իսկ եթէ դառնութիւն, այն իմս է։

Այսպէս խօսելով Սփինձէր համեց Սմօ-լֆին թուղթը տվաւ Եղիսաբեթին ասե-լով. Դուստր իմ, ես պարտական եղայ քու սիրոյդ, և քու քաջութեանդ այս թուղթը քեզ կը կոչէ մեր բարերարը. և յիշատակ ըլլայ առաջինի սրտիդ երախտաւորութե̃ը։ Ազնիւ զաւակը խոնարհութ̃ առաւ թուղթն ու լռեց. անկէ ետև այլ չէր խօսէր երթա-լու վրայ. բայց մօրը սիրտը ամենևին հան-գիստ չէր, ու միշտ տրտմութ̃ կը մաշվէր։

## Է. Դիպուած։

Ժամանակ անցաւ. նայիս կիրակի իրիկ-վան Ֆէօտորա մինակ նստած էր տունը, զաւազանով զարկին դուռը՝ բացաւ տեսաւ որ ծեր ճերմակ մօրուք Միսիօնար մի կայ-ներ է. խեղճ Ֆէօտորային սիրտը ճմլելով աղաղակեց. ո՜հ ա̃ծ իմ. չըլլա՞յ թէ այս ըլ-լայ, որ եկաւ զիս զաւակէս զրկելու հա-մար. ուստի ընկաւ երեսի վրայ կուլար։ Բայց Միսիօնարը մտաւ ներս բոլորովին հոգնած. թէպէտ անանկ փորձ և հոգևոր անձն էր որ երեսէն շնորհք կը կաթէր. իւր շարժմունքէն յայտնի կերևնար թէ այր ա̃յ է. և իւր բոլոր աշխատանքը ա̃յ ընծայած էր, և ա̃վ մխիթարված, ուրախ և պայ-ծառ։

Սփինձէր հասաւ և խոնարհութ̃ ընդու-նեց իբր ՚մր ա̃յ. Միսիօնարն սկսաւ այսպէս

խօսիլ. Պարոն մեծ ուրախութիւն կը մտնեմ տունդ. զի կը տեսնեմ աղքատ խրճիթիդ վրայ ա̃ծային օրհնութիւնը. հոս եղած հարստութիւնն է առաքինութիւն, որ ոսկիէն ու մարգրիտէն աւելի յարգոյ է. իսկ ես եկայ հոս, որ մէկ գիշերուան հանգստութիւն խնդրեմ քեզմէ: Եղիսաբեթ վազեց աթոռ դըրաւ, որ նստի՝ յետոյ ըսաց պարկեշտութ̃. Հա՛յր ս̃բ շատ քալեր ես առաքինութե̃ ճամբային մէջ. և առաջին աստիճաննէն շատ հեռուն թողեր ես մեզ. զի երկար միջոց կայ հասնելու քեզ: Միսիօնարը տեսաւ որ Փէօտորա տրտում կուլայ, դարձաւ ըսաց. Մա՛յր բարեպաշտ. ինչո՞ւ կուլաս: Պատասխանեց Փէօտորա. ինչպէս չի լամ. մէկ հատիկ զաւակ, մէկ հատիկ մխիթարութիւն ունիմ աշխարհիս վրան. անկեց ալ կուզեն զատել զիս:

Միսիօնարը հասկընալով բանը մխիթարական խօսքերով ըսաց. Մի՛ տրտմիր տիկին վ̃ զի առաքինութիւնն է միայն որ կորոշէ զաւակդ քեզմէ քիչ մի ժամանակ. ուրիշ մարերն ինչ անեն, որ ախտի պատճառով կորոշին զաւակներէն և յաւիտեան կը կորսընցնեն: Յաւալի ձայնով աղաղակեց Փէօտորա, վախնամ, թէ այլ չի պիտի տեսնեմ զաւակս: Կը տեսնես զաւակդ, ըսաց ծերը, թէ՛ հոս, և թէ երկինքը. իրաւ՛ մեծ է աշխատանքը. բայց ա̃ծ կը զօրացնէ, որ դառներուն բուրդին նայելով հովը կուտայ:

Սրբակաց ծերը այնչափ հոգևոր բան խօսեցաւ, մինչև ամէնուն ալ սիրտը զօրացաւ. կամեցան, որ Եղիսաբեթ երթայ իրենց հետ. սակայն Եղիսաբեթի սիրտն սկսաւ ճմլիլ. կը մտածէր որ ինչպէս պիտի զատուի ծնողացմէն: Որովհետև ժամանակը հասաւ սիրտը շարժեցաւ. վաղը չի պիտի լսեմ կասեր՝ հօրս ձայնը. մինչև տարի մի մօրս գըրկանքը չի պիտի տեսնեմ. այնչափ ժամանակ ինչպէս պիտի զուրկ մնամ այս քաղցր ուրախութենէս: Սիրտը խռոված, աչքը ցաւագին, ամէն բան խաւար կերևնար իրեն. իբր թէ անդունդ մի բացված էր առջին: Կասէր ինքնիրեն. ո՜հ վախկոտ ողորմելի, ահա առջի քայլդ չառած վար կիյնիս. որպէս որթ անյենարան. հապա ինչպէս պիտի անցնիս մէկ մասն աշխարհի:

Ասանկ տրտմալի խորհուրդներով սեղան դրին Միսիօնարին. նստան իրիկուան կերակուր ուտելու. բայց իրենք միայն իրենց արտասուքով կշտացան. թէպէտ դրսէն զիրենք կը բռնէին, որ չի լան: Բարեսիրտ կրօնաւորը կը դիտէր զանոնք գթալի ցաւակցութբ: Այս քահանայն երկար ճամբորդութբ աշխատեր էր ու անհամար բան եկած էր գլուխն. իւր առջի ուսումն էր ամէն վիշտ քաղցրացնել համբերութբ. ամէն մէկ ձախորդութեն գտեր էր մխիթարութեն ճարը. ուստի այն իրիկունը ամէն մէկ խօսակցութեն անոյշ խօսքմը յարմարցընելով

սրտերնին կանուշցընէր․ երբեմն թող կուտար որ լային ։ Պատմելով իւր ճամբորդութիւնները՝ և տեսած խեղճութիւնները՝ դրաւ իրենց առջին մէկ շատ դժբաղդի մի գլխուն եկածը․ և այնչափ ձախորդ դիպւածներ պատմեց, որ ոչ միայն մխիթարեց զանոնք, այլև ցաւակից եղան այն խեղճերուն․ որոնց խեղճութիւնը իրենցէն շատ վեր էր ։

Այս յարգելի անձը 60 տարուընէ ետև 2000․ փարսախ աշխարհիս ծայրն երթալով՝ բարբարոս և մարդակեր մարդկանց հետ երկար կենակցեցաւ զանոնք շահելու համար, և չի լուած հալածանքներ քաշեր էր․ ամէնքը իրեն դահիճն էին ։ Ս՝տեր էր թագաւորական քաղաքը Փէքին, և զարմացեր էր անոնց առաքինութենը վրայ․ իսկ մարդակերներուն աշխարհը՝ շատ մարդդարձուցեր էր․ որոնց սորվեցուցեր էր երկրագործութ̃ի և քաղաքականութ̃ի․ իրենց անբեր դաշտերը, ագարակ և պարտէզ եղան, գեղ և բնակիչ եղան․ ունեցան անուն տոհմի, զաւակի, և փեսայի․ և որ մեծն է, ճանչցեր էին ա̃ծ․ իմացեր էին թէ մարդ են․ ունին տ̃ր և արարիչ ։

Ահա այս ամէն բան այն սրբակաց քահանային աշխատանքովը եղած էր․ կօրհնէին այն մարդիկ միշտ այն քահանային․ գիտէին ս̃բ կրօնին յարգութիւնը․ և շատ դժվարութեամբ զինքը թողուցեր էին որ երթայ․

զի հրաման եղած էր իւր մեծաւորէն, որ երթայ Սպանիա իւր հայրենիքը հանգչի. որովհետև շատ ծերացած էր։ Պէտք էր որ անցնի ռուսիա, գերմանիա, և գաղղիա. որուն անունն էր Հայր Պօղոս։ Բոլոր պատմածներն էին զարմանալի. զարմանալի սովորութիւններ, ահռելի ազգեր, և սոսկալի դիպուածներ, մանաւանդ անապատներուն մէջ. Չինումաչինի պարիսպին կողմերը, ուսկից անցաւ, ու մտաւ մեծ Թաթարաստան, և սահմանը Սիպերիայի։

Այս յարգելի քահանային համար պատրաստեցին փոքր խուցը, հանգիստ տեղ մի պառկելու, արջու մորթերով անկողին շինեցին. և ինքը զանոնք օրհնելով գնաց պառկեցաւ։ Առաւօտուն Եղիսաբեթ կանուխ ելաւ. մօտեցաւ քահանային դրանը. լսեց որ կաղօթէ. և խնդրեց հրաման, որ ներս մտնէ առանձին խօսի հետը. զի ծնողացն առջին չէր համարձակէր խօսելու. ուստի ծունկ չոքած պատմեց իւր բոլոր պատմութին ու խորհուրդը։ Երբոր Հայրն Պօղոս լսեց Եղիսաբեթին ցաւալի պատմութիւնը՝ շատ սիրտը ցաւեցաւ վրան. զի թէպէտ շատ բան տեսեր էր և աշխարհիս մէկ ծայրէն մէկալ ծայրը ժուռ եկեր էր, բայց Եղիսաբեթին սրտին նման գթած ծնողասէր սիրտ չէր տեսած։

Ափինձէր, և Ֆէօտօրա չէին գիտեր Եղիսաբեթի դիտաւորութիւնը թէ միւս օրը

կուզէ Ճամբայ ելլել․ երբոր առաւօտուն զրկեց զիրենք ու սկսաւ լալ ողորմագին՝ իմացան, և խռովեցան, իբր թէ մէկ մեծ փոթորիկ ելաւ իրենց խրճիթին մէջ․ թողուցին իրենց ամէն բանը աղջըկանն երեսը կը նայէին․ ուր նայէր, հոն կը նայէին․ ուր քալէր, հոն կերթային․ իսկ Եղիսաբեթ չգիտեր թէ զինքը հոգայ, թէ զանոնք․ մայրը գրկելով զաւակը կապսպրէր որ տանը բաները նայի․ հրաման կուտար, որ երթայ հօրը հետ մէկտեղ ձուկն որսալու․ իսկ աղջիկը ձայն չէր հաներ․ միայն արտասուք թափելով կուլար։

Հայրը դարձաւ ասաց, թէ Դո՛ւստր իմ հնազանդէ՛ մօրդ, վաղն եկուր հետս երթանք ձուկն որսալու։ Աղջիկը գլուխը խոնարհեց հօրն ու ասաց․ Աղը պէտք է որ մխիթարես մայրս։ Այս խօսքս նորէն այլայլեց հօրը սիրտը, որ զանազան կիրք զինքը կը տանջէին․ կը մտածէր զաւակին սէրն, որ պիտի զատվէր․ կը մտածէր կնոջը կսկիծը, թէ ինչպէս պիտի մխիթարէր․ թէ որ չի թողուր երթալու, գիտէր որ անոր առաքինական գործքը պարապ չէլլէր․ Ա͞ծ կը վարձատրէ․ ու փափաքը կը կատարէ, և հոն մնալով ինչ պիտի ըլլան։

Այն օր շատ ողորմելի տեսարան եղաւ հոն․ որտերնին այլայլած էր ամենուն ալ ներքին շարժմամբ․ գաղտնի զգացողութի մի կիմանային․ կենդանի զգուանք, և խան-

դաղատանք ծնողացն ու զաւակին մէջ։ Քարոզիչ քահանայն կը ջանար որ զօրացնելով մխիթարէ զանոնք. և զանազան պատմութիւններ կը բերէր Ածաշնչէն, թէ ած ինչպէս հատուցում արաւ մեծ զոհին որդիական գթութեան, և հայրական յանձնարարութեան. կարօղ էր նոյն ամենակարող զօրութիւն իրենց ալ օգնելու՝ հանգիստ հասցընելով զաւակը ուզած տեղը, և անկէ երջանկութեամբ դարձընել։ Շատ հոգեշահ խրատներէն ետև իրիկուն որ եղաւ Եղիսաբեթ ծնկան վրա եկաւ ու ողորմելի ձայնով խնդրեց ծնողքէն որ զինքն օրհնեն։ Հայրն իմացաւ որ կեցէք բարով կուզէր անել, արտասուալի աչքով մօտեցաւ զաւակին, գրկեց լացաւ. ապա դրաւ ձեռքը Եղիսաբեթին գլխուն, օրհնեց ու այ յանձնեց։

Իսկ շնորհալի զաւակը դորովական գթով նայեցաւ մօրն ու ասաց. Սիրական մայր իմ, քաղցրիկ մայր իմ դուն ալ չե՞ս ուզեր զաւակդ օրհնելու։ Աղաղակեց խեղճ մայրը. Հոգեսէր զաւակս, մէկ հատիկ զաւակս. վաղվան թող մնայ։ Կրկնեց. ինչու այսօր չես ուզեր։ Կուզեմ ասաց. ամէն օր օրհնելու, ամէն ժամանակ օրհնած ես։ Եղիսաբեթ ծռեց գլուխը ծնողացն առաջին, աչքն երկինքը վերուցած, ձեռք ձեռքի բերած։ Միսիօնարը խաչը ձեռքը օրհնեց զամէնքն ալ, և քաջալերական խօսքով

մխիթարեց, ու հասկըցուց թէ ինչ պէտք է անեն, և ինչպէս զաւակնին տան այ, որ երթայ իրենց ազատութեանը համար աշխատի:

Ժամանակն եղաւ Մայիսի մէջն, ուր հազիւ երկու ժամ գիշեր կըլլար. Եղիսաբեթ սկսաւ անել Ճամբու պատրաստութի, քիչ մի ուտելու պաշար, հագուստ, և այլն. նոյն իրիկունն ամէն բան պատրաստելէն ետև առաւօտուն կանուխ գնաց դուրը Հայր Պօղոս Միսիօնարին ասելով. Ժամանակ է երթալու. ծնօղքս կը քնանան, մենք Ճամբայ ելլենք. որ լալով և կսկըծով չի վնասին: Որովհետև իրիկվընէ հաւանութի ու օրհնութի առեր էր, չէր ուզէր ծնօղացը սիրտը նորէն բորբոքելու, բայց չօքեցաւ ծնօղացը դրանն առջին ու աղաղակեց. Ո՛վ ած իմ, դուն հօգա՛ զասոնք. պահէ՛ ու ամէն փորձանքներէ ազատէ՛. արժանի՛ արա՛ որ նորէն տեսնեմ ծնօղքս և ուրախանամ: Այս միջոցին հայրն ելաւ դուրս: Հայր իմ ասաց ինչո՞ւ ելար: Պատասխանեց, քեզ սիրելու, քեզ տեսնելու, և քեզ օրհնելու ելայ: Ո՛վ ազնիւ սիրական զաւակ, թէ որ մանկութե ժամանակդ ատէն եղած ըլլայ, որ իմ գութս քեզի չեմ ցցուցած, կամ թէ ծանր խօսքով եթէ սիրտդ ցաւցուցեր եմ, ներէ՛ ինձի զաւակս. կարելի է թէ չէ ինձի սահմանած որ երջանկութե նորէն քեզ տեսնեմ, գէթ խաղաղութե մեռնիմ:

Եղիսաբեթի սիրտը ճմլեցաւ․ կանչեց լալագին ։ Մ՛ի ասեր աղաչեմ մի ասեր ասանկ բան․ ես քեզի պարտական եմ, դուն ինծի ներէ ։ Արկնեց հայրը․ երբոր ողորմելի մայրդ ելլէ՝ ինչ ասեմ իրեն․ և ինչ պատասխան տամ․ երբոր հարցընէ սիրական զաւակը․ գայ փնտըռէ անտառին մէջ, և այս լճին քով․ ես ալ իրեն հետ ամէն տեղ խնդրենք փնտըռենք, հարցընենք մեր աղնիւ զաւակը․ ո՛վ մեզի պատասխան պիտի տայ ։ Եղիսաբեթ ասոնք լսելով սաստիկ տրտմութենէն թալկացաւ մնաց պատին կըռթընած ։ Հայրը տեսաւ որ աղջիկը կը մաշղի՝ սիրտը զօրացուց սկսաւ քաջալերական խօսքերով ասել․ Ուժ եղիր դուստր իմ, որ ես ալ քաջալերութիւն ունենամ․ մի հոգար․ ես կը մխիթարեմ մայրդ․ և կը զօրացնեմ որչափ որ տրտմած ըլլայ երթալուդ համար․ նաև կը յուսամ ալ որ ներկայացնեմ քեզ մօրդ երբոր առողջութի̃ դառնաս գաս ։ Իրաւի զաւակս, կարնայ ըլլալ, որ քու բարեպաշտական ճամբորդութիդ պսակի, կամ ոչ, ծնօղքդ չի պիտի մեռնին առանց քեզ տեսնելու ։ Ան ատենը դարձաւ ասաց Միխիօնարին, որ խորին մտածութի̃ կը դիտէր ասոնց ողորմելի կերպը․ Ո՛վ հայր իմ, ահա կը յանձնեմ քեզ իմ բարի զաւակս․ մէկ գանձ, որուն չիկայ հաւասար բան․ զի աւելի է քան իմ արևս, իմ արիւնս, և իմ սիրտս․ կը յանձ-

նեմ քեզ ապահովութիւն , ա՛ռ տար գնա հե-տը : Լուսաւոր հրեշտակներ հետերնիդ ըլ-լան ու ձեզ պաշտպանեն . երկնային զօրքը ձեզի օգնական ըլլան . և ողորմած ձեռք ստեղծողին չի կորսընցընէ իմ Եղիսաբեթս :

Ամբիծ աղջկան այս հօրն օրհնէնքն առնելով մէկ ձեռքն աչքին դրաւ ու սկսաւ լալ . մէկալ ձեռքը տուաւ Ախիօնարին ու դողալով սկսաւ հեռանալ : Արշալոյսն ալ սկսեր էր լուսաւորել լեռներուն ծայրը . ամենևին ոչ հով կար և ոչ ձայն կենդա-նեաց , թուէր թէ բնութիւն ակնածելի լռութիւն մի կը պահէր . որպէս զի Ափինճէրի ձայնն որ կը կանչէր զաւակին ետևէն՝ երթա՛ք բարով լսուի . խեղճ հօրը աղաղակը անտա-ռը կը դողացնէր , և զաւակին լացը քարե-րը կը լացընէր . մինչև այլ ձայնը չի լսուե-ցաւ :

Ցաւալի հօրը բաները քիչ մի կարցանք պատմելու . բայց մօրը բաները անկարելի է գրով պատմել . մանաւանդ երբոր Ափին-ճէրին աղաղակովն արթընցաւ վազեց դուրս . տեսաւ որ զաւակը չի կայ՝ չորս դին մթնեց , կորուց խօսքն ու խելքը . ընկաւ հոգեվար-քի նման : Ափինճէր այսչափ բան արաւ . այսչափ բաներ պատմեց . որ քիչ մի զգաս-տանայ , ճար չեղաւ . քիչ մի միտքը վրան կուգար կաղաղակէր ո՞ւր է զաւակս . մնացի անզաւակ . Նորէն սիրտը կանցնէր . ահա այսպէս ողբով լեցվեցաւ իրենց տունը . մին-

չև ա̄ծ ողորմելով քիչ մի սիրտ տուաւ զօրացուց, որ կարցաւ գէթ կսկիծն իմանալու :

## Է. Պնդուած :

Այս եղաւ յամի տն 1801. մայիսի ամսոյն Եղիսաբեթ Ճամբայ ելաւ սրբակաց ծերոյն հետ. բայց նախ գնացին Թոպոլսքիու իշխանին, որ պէտք եղած բաները հոգայ, և անկէ ելան Ճամբայ մէկ ամիսը հազիւ կարցան անցնիլ թաց անտառը սիպերիայի. որ այս եղանակին մէջ շատ տեղ ջուր կոխած է. ցորեկը շատ անգամ գեղացի Թաթարներուն սայլովը կերթային. ու գիշերը ողորմելի խրճիթներուն մէջ կը պառկէին. որ անանկ հոտած ծխոտ և գարշելի էին՝ որ հազիւ քիչ մի ժամանակ կարնային հանգչելու : Թիւմէնէն 40 վերստ անդին անտառէն անցան, որ Թոպոլսքի կառավարուէ̃ դուրս է. Եղիսաբեթ կը մտածէր թէ իր աքսորանաց երկիրէն դուրս ելաւ. իբր թէ երկրորդ անգամ զատուեցաւ ծնողքէն. ուստի լալով կասէր. Ահա հիմա հեռացայ իմ երկրէս ու իմ ծնողքէս : Այպէս ողբաց նաև երբոր յետոյ կոխեց եւրոպիայի հողը. զի թողուց իր ծնողքը ասիայի մէջն ու անցաւ եւրոպա իրեք ամիսէն ետև : Այս հեռաւորութի̃ աւելի սիրտը կը խորտակէր քան թէ Ճամբուն վիշտը. թէպէտ լսեր էր եւրոպիայի գեղեցկութի̃ը, հարստութի̃ը, և լուսաւորու-

թիը, բայց իրեն աչքին ամէնը ոչինչ կերեւնար. միայն ծնողացն ազատութիը կը մտածէր միշտ։ Թօպօլսքիէն մինչեւ բերմէ 900 վերստ է, ուր դաշտերը պտղաբեր են եւ կը մշակուին. տեղ տեղ ռուսաց գեղեր կան հարուստ. կան բնակարաններ անցաւորներու համար. բնակիչները կը զարմանային եղիսաբեթի պարզութեը վրա։ Այս բերմէ քաղաք ուրիշ տեսած քաղաքներէն մեծ էր, բայց գեղեցկութի չունէր. Ճամբաները նեղ եւ աղտոտ. օդը անշահ, եւ տներն անշուք։ Ասկէց մինչեւ Ղազան՝ մեծ քաղաք չկայ. շատ տեղ անբեր մնացած են. երբեմն կայծակը կը զարնէ հին ծառերուն, եւ մէկէն կերեւնան իբր կրակէ սիւն. շատ անգամ տեսաւ Եղիսաբեթ, որ Ճամբուն երկու կողմն ալ այսպիսի հրդեհ կըլլար, եւ երբեմն խորտակելով ծառերը կիյնէին։ Ասկէց աւելի վտանգաւոր էր գետերէն անցնիլը. սակայն Եղիսաբեթ առանց տրտնջալու համբերութե առաջ կերթար իւր հոգւոր հօրը հետ մէկ տեղ. որուն սրբակաց դէմքը ամենուն սիրտը կը շարժէր. եւ շատ անգամ Ճամբորդները զիրենք կառնէին իրենց սայլին վրա կը տանէին. եւ երբեմն թղթատարներուն սայլով ալ կերթային, մինչեւ հասան հոն, որ 200 վերստ մնացեր էր Ղազանին։

Օգոստոսի ամսոյն հասան Կամայի գետին եզերքը. ուր սկսաւ խեղճ Եղիսաբեթի

ցաւն ու վախը աւելնալ • քանզի կը նայէր որ իւր հոգւոր հայրը քանի կերթայ կը տկարանայ • մէկ ձեռքը դաւազան մէկալ ձեռքը Եղիսաբեթ բռնած հազիւ կարնար առաջ երթալու • այն կողմի սայլերն ալ աւելի ցնցելով չէր կարող սայլով երթալ ։ Երբոր հասան Սարաբուլ քաղաքը՝ նայեցաւ ծերն որ այլ չի պիտի կարնայ առաջ երթալու, միայն ողորմելի խրճիթի մի մէջ, որ ոչ պատուհան ունէր, և ոչ նստարան • քիչ մի խոտ դրին տակը պառկեցուցին ։ Եղիսաբեթի հոգն ու մտածութիւնը զինքը կը տանջէին չարաչար • ուստի բժիշկ խնդրեց, չի գտան • իրմէ 'ի զատ հիւանդը նայող չի կար • կերթար դաշտէն առողջարար արօտներ կը ժողվէր կեփէր կը խմցընէր ծերոյն, ինչպէս որ մօրմէն սորվեր էր • բայց ի՞նչ շահ՝ ծերութիւնը տիրեր էր • հիւանդին ուժը անցեր էր • ողորմելի Եղիսաբեթ կուլար կողբար թէ ի՞նչ պիտի անէ • Ու ծերը լսելով անոր հառաչանքը ինքն ալ կողբար անոր ողբին վրայ • զի 60 տարի աշխատեր էր այս համար՝ ամենևին չունէր վախ մահէն • հապա կը ցաւիր որ քիչ մի ժամանակ ալ ունենայ, ու աւելի բարի գործէ • կաղաղակէր ցած ձայնով, Տէ՛ր իմ, չեմ բնաւ տրտնջար բարերար կամացդ դէմ, սակայն ներէ, ժամանակ տուր մինչև տանիմ տեղը այս ողորմելի որբս, և անկէ ետև հանգիստ մեռնիմ ։

Եղիսաբեթ ոտքի վրա կը ծառայէր, ամանով ջուր տվաւ իրեն. առաւ ջուրը ձեռքը վերուց ասաց. Ո՜վ իմ, կը յանձնեմ այս զաւակս անոր, որ խոստացաւ բաժակ մի ջուր տուողին չի կորսնցնելու վարձքը։ Եղիսաբեթ լսելով աւելի մեծ ցաւ ունեցաւ. զի այրն ա̃յ կիմանար որ պիտի մեռնի. ուստի Եղիսաբեթ ընկաւ հիւանդին առջին կուլար ողորմագին։ Ծերը մեծ ցաւակցութբ̃ ասաց, Ո՜վ իմ ողորմէ ասոր, ասո՛ր ողորմէ տէր իմ։ Վերջապէս տեսաւ որ ցաւը սաստիկ է, ասաց. Դուստր իմ անուամբ ա̃յ և քու հօրդ այլ մի լար։ Եղիսաբեթ մեկէն ելաւ, սրբեց արտասուքն ու խոնարհութբ̃ ծերուն բերանը կը նայէր, թէ ինչ պիտի խօսի։ Ծերը քիչ մի զօրանալով թևին կռթընեցաւ ու ասաց. Օ՜ աւա՛կ իմ Եղիսաբեթ. մեծ եղաւ քու անբաղդութ̃իդ. որ մինակ պիտի մնաս զանազան վտանգի և անբաւ աշխատանաց մէջ. սակայն ա̃ծապաշտ սիրտը, և առաքինի համբերութ̃իը ամենուն ալ կը յաղթէ. եթէ այսպէս մնայ քաջասրտութ̃իդ ապաւինելով ամենակարողին, որ կը հասնի ամէն տեղ, մի վախնար տէր ընդ քեզ է։ Իսկ եթէ անզգամ մարդիկ պատահին քեզ ու ջանան հեռացընել քեզ առաքինութ̃էդ՝ մի հաւատար. թէ և խոստանան քեզ անցողական մեծութ̃ի. զի ա̃յ երկիւղն ու ծնողաց սէրը ամենէն վեր են. միշտ յիշէ թէ մէկ

փոքրիկ պակասութիւն մի մահ կը բերէ ծնողացդ, որ քու կենացդ պատճառ եղած են։

Եղիսաբեթ խօսքին վրա գալով՝ ըսաց. Ո՞հ հայր իմ մի վախնար։ Ես չեմ վախնար ըսաց ծերը. յուսամ թէ ա̃ծ քեզ կը պահէ ամէն փորձանքէ քու բարեպաշտութեանդ և հպատակութեանդ համար։ Հիմա դուստր իմ առ հագուստիս մէջէն քսակն, որ առատասիրտ իշխանը Թէօպօլտքիւ տըվաւ երբոր քեզ ինծի յանձնեց. պահէ այս դրամը ծածուկ, որ կենացդ հարկաւոր է. մինչև Պէթրպուրկ կը տանի քեզ։ Երբոր հոն հասնիս, գնա Մէտրապօլիտին, պատմէ. կարծեմ թէ զիս չէ մոռցած. անտարակոյս կուտայ քեզ տեղ կուսանաց վանքին մէջ, և քու աղերսագիրդ կը ներկայացնէ կայսեր։ Անկարելի է որ քեզ արհամարհեն. զի քու առաքինութիւնդ մեծ է և զարմանալի, աշխարհք պիտի կարեկցի քեզ. վասն զի քիչ պիտի տեսնէ նմանը. առաքինութիւն պէտք է որ առնու փոխարէնը աշխարհիս վրա յառաջ քան առնուլն երկինքը։

Երբոր այսպիսի քաղցր մխիթարութիւն կը խօսէր ՚որ ծերը՝ շնչառութիւնը տկարացաւ, ու պաղ քրտինք մի կը վազէր ճակատէն։ Իսկ Եղիսաբեթ գլուխը ծռած կուլար լռիկ։ Ծերը երկար ժամանակ հանգչելէն ետև առաւ սրտին վրայէն խաչելութիւն՝ որ սև փայտէ շինած էր, մեծ ջերմեռանդութեան կատարելէն ետև՝ տուաւ Եղիսաբեթին

ածելով. Դուստր իմ տե՛ս զայս, որ է իմ մի միայն բարիս՝ որ ժառանգեցի աշխարհիս վրայ. որով բանի մի չի կարօտացայ։ Եղիսաբեթ առաւ համբուրեց կենդանի հաւատքով և մեծ ցաւով. զի կերևնար որ բարի ծերը հոգին պիտի աւանդէ։ Ծերը զօրանալով նորէն ասաց. Անմեղ գառնուկ, ողորմելի անտէր. մի՛ վախնար բանէ մի. ահա բարի հովիւը քեզ կը խնամէ, ու կը հատուցանէ կրկին աւելի, միայն թէ դուն հաւատարիմ մնացի՛ր. այն որ կուտայ կերակուր ձնձղուկներուն, և գիտէ ծովու աւազին թիւը՝ չի մոռնար քեզ։

Երբոր ձեռքը երկնցուց որ օրհնէ, Եղիսաբեթ բռնեց ձեռքն լալագին կանչեց. Ո՜հ հայր իմ, ի՞նչպէս պիտի որոշվիմ քեզմէ. ո՞ւր պիտի դառնամ։ Երկնեց ծերը. բարի՛ զաւակ իմ. ա͞ծ այսպէս հրամայեց, պէտք է որ համակերպելով կամքդ՝ մեղմես ցաւդ. յուսամ ստեղծողիս ողորմութենէն որ յետ սակաւուց պիտի առնու զիս երկինքը, և պիտի ողորմի քեզ ու ծնողացդ։ Խօսքը չի վճարեց. միայն շրթունքը կը շարժէին, բայց խօսքը չէր որոշվէր. գլուխը դրաւ խոտին վրայ. աչքը երկինքը վերուց. կերևնար թէ կաղաչէ ա͞ծ որբ Եղիսաբեթին համար. և այսպէս սրբութ͞բ աւանդեց հոգին երանելի ծերը. որուն հոգին ու սիրտը այնչափ ողորմածութեամբ լեցված էր, որ բոլոր կենացը մէջ ամենևին իւր յատուկ

շահը չէր նայած. այլ միայն ուրիշները կը հօգար 60. տարուան առաքինական աշխատանացը մէջ. ինչպէս այն վերջին սոսկալի կէտն ալ նոյն ողորմութե̃ գործքով ելաւ առաջի երկնաւոր դատաւորին, և նոյն առաքինութեամբ մտաւ յաւիտենական վիճակին մէջ:

Ողորմելի Եղիսաբեթ ինչ խեղճութե̃ մէջ ընկաւ. անանկ կուլար կողբար, որ ամէնքը հոն վազեցին թէ ինչ եղաւ. իսկ Եղիսաբեթ լալով կը ցցնէր անոնց իրեն պաշտպանն որ մեռած էր. ոմանք կը կըսկըծային, ոմանք զարմանալով կը նայէին մանուկ աջըկանը վրան. իսկ տանը տէրերը վազեցին եկան, որ տված կերակուրին փողը առնուն. երբոր կը խառնէին ծերուն հագուստը գըտան քսակն որ ասեր էր Եղիսաբեթին. բայց նա տրտմութե̃ լեցված ըլլալով ոչ նայեր էր, և ոչ առեր էր. անոնք յափշտակեցին առին, պատճառելով թէ թաղմանն ալ պէտք է:

Նայիս ռուս քահանայք եկան իրենց ջահերով, ծածկեցին մարմինին վրա սև չուխայ, ու սկսան երգել մեռելի պաշտօնը: Եղիսաբեթ աղաղակելով տվաւ վերջին բարևը պատուական մարմինին, որ կը ցոլար ա̃ծափայլ լուսով: Նա ընկաւ ծնկան վրա ողբալի դուստրն՝ սենեկին խաւար անկեան կողմը կուլար կողբար, ու արտասուօք գետինը կը թրջէր. գլուխը ծածկեր էր սև

Թաշկինակով, որ զինքը չի տեսնեն . դարձաւ դէպ 'ի մարմինն ու աղաղակեց . ո՛վ երանեալ հոգի մի թողուր աղքատ ողորմելի զաւակդ . ո՛վ հայր իմ, սիրական մայր իմ, արդեօք հիմա ի՞նչ կը մտածէք . ահա ամէն օգնութի̃ վերցաւ ձեր սիրական զաւակէն ։

Իսկ ծերոյն մարմինը երգելով դրին գագաղին վրա որ տանին . Անգլիաբեթ թէպէտ տրտմութ̃էն տկարացեր էր . բայց կամեցաւ երթալ մարմնին ընկերակցիլ մինչև գեր'-զմանը . որ է դաշտ, և քովն է աւերակ հին բերդի . մէջ տեղը փայտաշէն մատուռն, և փայտէ խաչ ։

Շատ բազմութի̃ կերթային մեռելին հետ զանազան ազգերէ խառն 'ի խուռն . իսկ Անգլիաբեթ ծանրաքայլ համեստ սգով գլուխը ծածկած կերթար ետևէն ։ Երբոր մարմինը պիտի դնէին փոսը, Թաղօղ քահանայն ըստ իւրեանց սովորութե̃՝ փոքրիկ դրամ մի դրաւ մեռելին ձեռքն որ Ճամբան տայ անցնի . քիչ մի հող վրան լեցընելէն ետև հեռացաւ անկէ . իսկ այրն ա̃յ հոն Թաղվեցաւ, որն որ օր մի չէր անցուցած առանց անելոյ բարի այլոց . նման էր այն բարերար հողմոց, որ ամէն տեղ կը տանին օգտակար հունտեր, և ամէն տեղ ծլելու և ծաղկելու պատճառ կըլլան ։ Այս որ անձն քալեր էր քարոզութե̃ հողագնտիս կէսէն աւելի, և ամէն տեղ սերմաներ էր իմաստութի̃ և Ճշմարտութի̃, վերջապէս մեռաւ

անծանօթ աշխարհի մէջ, և յաւիտենական մոռացութեամբ մնաց թաղուած օտարութեան մէջ։ Խեղճ Եղիսաբեթ մնաց հոն լի տրտմութ՟բ մինչև իրիկուն. իւր աղօթքն ու թափած արտասուքը քիչ մի զինքը մխիթարեցին. զի շատ լաւ և օգտակար է մըտածել 'ի մէջ երկնից և մահու։ Գերեզմանէն կելլէն առաքինական մտածութ՟իք. իսկ երկինքէն կիջնի մխիթարական յոյս. ուր տեղ որ վախճան կայ՝ դժբաղդութ՟իը շատ վախ չի տար. և ուր որ հատուցմունք կայ՝ դժբաղդութ՟իը կը սիրվի։

Եղիսաբեթ այսպէս բարի մտածմունքներով կուլար առանց տրտնջալու. մանաւանդ միշտ շնորհակալ կըլլար բարերարութ՟եցն ա՟յ, որ առեր էր՝ մինչև հոն հասցընելով. կը տեսնէր զինքն առանց առաջնորդի անօգնական Պերմէի սահմանը. բայց նոյն հաւատքով զինուորած, և նոյն քաջութ՟բ ամրցած, սկսաւ կանչել. Ո՜վ Հայր իմ և մայր իմ սիրական ծնողք իմ. մի՛ վախնաք. ձեր զաւակը չի մնար անյոյս. զի ա՟ծ է իրեն յոյսը, որ ամէն տեղ կը հասնի։ Այսպէս որչափ որ սարսափելի բան պատահէր իրեն, մեկէն կը կանչէր. ո՛ւր էք սիրական ծնողք իմ, և ասով մեկէն սիրտ կառնուր բնական ազդեցութ՟բ։

Երբոր իրիկունը մօտեցաւ՝ ընկաւ Եղիսաբեթ գերեզմանին վրա որ Միսիօնարին, ու երեսը հողին քսելով շնորհակալ եղաւ

որչափ որ հոգացեր էր զինքը. ուստի վեր-ջի բարևը տուաւ գերեզմանին. բայց դառ-նալու ատենը կամեցաւ որ հոն յիշատակ մի թողու՝ փայտէ մեծ խաչին վրա փորելով գրեց Եսայի մարգարէին այս խօսքը. * Ար-դարն կորնչի, և ոչ ոք խորհի զմտանէ || . ԾԷ . 1: Ան ատենը մեծաւ տրտմութե՛ ելաւ գերեզ-մանատնէն գնաց իւր խուցը, որ էր Մարա-բուրայ հիւրանոցը. հետևեալ օրը երբոր Ճամբայ պիտի ելլէր՝ պանդոկապետը տուաւ իրեն 3 ռուբլի՝ հաստատելով թէ այսչափ մնաց քարոզիչին քսակէն. շնորհակալութե՛ առաւ, ու ելաւ անկէ լալագին: Այս քու ողորմութի՛դ է՝ կասէր, ողորմած առաջ-նորդ իմ, պաշտպան իմ. ինչպէս զրկըվե-ցայ քեզմէ, ու՞ր երթամ. ո՞վ զիս խնամէ հայրաբար. գէթ քու սբ. օրհնութի՛դ ինծի հետ ըլլայ, ու զիս պաշտպանէ Ճամբու մէջ:

## Է. Պահպանած:

Եղիսաբէթ բարի հաւատքով, և հաս-տատ յուսով միտքը դրաւ թէ անոր համար Ած առաւ իրմէն իր պաշտպանն, որ ինքը պաշտպանէ և ողորմի անոր, ինչպէս որ ո-ղորմեցաւ անմեղ Շուշանին: Ուստի երբոր Ճամբայ ելաւ Պաղան երթալու՝ հանդի-պեցան իրեն աղքատ գեղացի քրիստոնեայ կանայք, որ պիտի Պաղան երթային. ա-

նոնց հետ ընկերանալով ռուսի գեղերէն կանցնէին և կը մուրային ։ Սակայն սոսկալի հիւսիսային հովը փչելով՝ Եղիսաբեթ սեպտեմբերի առջի օրն հազիւ կրցաւ հասնելու Պազան քաղաքը ․ տեսաւ որ Վօլկայ գետին եզերքը սառեր են այն տարւան սաստիկ ցրտէն ․ շատ դժուար և վտանգաւոր էր անցնիլը ․ գրեթէ կէսը սառած էր ։ Եղիսաբեթ երբոր կը մտածէր թէ ինչպէս անցնի , տեսաւ բարեպաշտ նաւավար մի՝ մօտեցաւ հարցուց թէ ինչպէս կարնամ անցնելու այս սոսկալի գետէս ։ Պատասխանեց թէ մինչև որ բոլորովին չի սառի ջուրը՝ անհնարին է ։ Հարցուց թէ քանի՞ օր պէտք է ։ Անալ ասաց թէ , երկու շաբաթ ։ Եղիսաբեթ հառաչելով ասաց ․ վ̄ս սիրոյն ա̄յ ողորմէ ինձի , ու անցուր զիս գետէն ․ զի ես կուգամ Թօպօլսքիէն ու կերթամ բէթրպուրկ , որ կայսերէն ազատութիւն խնդրեմ աքսորուած հօրս համար ․ այնչափ քիչ է ունեցած ստակս , որ եթէ 15 օր մընամ Պազան՝ բան մի չի մնար որ շարունակեմ ճամբաս ։

Այս խղճալի խօսքը անանկ շարժեց նաւավարին սիրտն որ բռնեց Եղիսաբեթին թևէն , արի՛ , ասաց , ես մէկ ճար մի անեմ․ դուն բարի զաւակ ես՝ երկիւղած յա̄յ , և սիրող հօրդ ․ Ա̄ծ քեզի կը պահէ ։ Առաւ սառուցին վրայէն մտցուց նաւը , և որովհետև գետին կէսը չէր սառած , մինչև կէ-

սէն անդին տարաւ ․ բայց հոն սառուց ըլլալով զգուշութիւն հանեց նաւէն մէկալ կողմի սառուցին վրայ ․ ինքն ալ ելաւ՝ առաւ կռնակը Եղիսաբեթն ու սառուցներուն վըրայէն ցաթկելով անցուց վօլկային միւս կողմը առանց վտանգի, որ շատ մարդ չէր համարձակեր անցնելու ։

Եղիսաբեթ մեծաւ շնորհակալութեամբ հանեց քսակն որ ունեցած իրեք ռուբլին տայ իրեն ․ նաւավարն ասաց ․ Խեղճ աղջիկ այս է ունեցած հարստութիւնդ որ քեզ պիտի տանի բեթրպուրկ ․ մի կարծեր թէ Նիկողոս Միխայլովիչ քեզմէ բան կառնու ․ աւելի կուզեմ քեզ օգնելու ․ որպէս զի ա̃ծ տայ ինձի և իմ վեց զաւակացս յաջողութիւն ։ Ա՛ն ատենը հանեց դրամ մի տվաւ Եղիսաբեթին ու դարձաւ իւր նաւակն ասելով ․ Պռուստր իմ, ա̃ծ հանգչեցնէ սիրտդ ։ Եղիսաբեթ շնորհակալ ըլլալով աղօթք արաւ նաւապետին, ու դրամը պահեց ասելով ․ Աս զայս կը պահեմ, որ հօրս ցցընեմ ․ որպէս զի վըկայէ իրեն, թէ իւր աղօթքը լսեց ա̃ծ, և իւր հոգին չի ձգեց զիս, ամէն տեղ հասուց ինձի պաշտպան, որոնք հայրական գթով կը խնամեն զիս ։

Եղիսաբեթ նորէն ընկեր եղաւ ուրիշ ճամբորդներու, և սկսաւ շարունակել ճամբան, մինչև չորս ժամ գնաց առանց հանգչելու, տեսաւ որ շատ հոգներ է՝ նստաւ ժայռին տակը, որ զինքը հովէն պաշտպա-

նէ. զի թէպէտ պարզ էր օդը, բայց հիւսիսային հովը սաստիկ պաղ կը փչէր: Ասկէց կըսկըսէր մեծ անտառ մի և կը տարածէր Վօլկայի եզերքը: Հոն տեսաւ նոր տեսակ ծառի որ չէր ճանչնար, զի էր Եւրոպայի ծառ գեղեցիկ կաղնի. միտքն ընկան Սիպերիայի եղևին անզարդ ծառերը. որոնք էին իրեն ծանօթ ծառ աքսորանաց. որոնք իւր մանկութիւնը պաշտպանեցին. որոնց տակը կը հանգչէին սիրական ծնողքն, որ այնչափ իրմէն հեռու մնացեր էին: Այս մըտմըտուքով սկսաւ լալ և աղաղակել. Ո՜հ երբ պիտի ձեզ տեսնեմ, ու ձեր ձայնը լսեմ. երբ պիտի դառնամ ձեր գիրկն իյնիմ: Այսպէս լալով դարձուց աչքը դէպ 'ի Կազան. տեսաւ քաղաքէն վեր երևելի հին բերդը, որ առջի թաթար խաները շիներ էին ժայռերուն վրայ:

Եղիսաբեթ այս ճամբորդութեա մէջ միշտ աքսորված մարդիկներուն ողորմելութիւնը տեսնելով՝ սիրտը կտոր կտոր կըլլար. ոմանք երկու երկու շղթայով կապած Ներչինսքի մետաղները կը ղրկէին, որ մինչև 'ի մահ աշխատին. ոմանք Իրքուցքիին դաշտերը և Անկարայի անմարդաբնակ տեղերը կերթային, որ հոն բազմանան: Երբեմն կերթային հատուածներ չինումաչինի սահմանը՝ ոմանք կառօք և իրենց բաներով, ոմանք ալ ոտքով կերթային: Կը նայէր ոմանց ազնուական ձևն, որ յանցանքով մի Սիպե-

րիա կերթային՝ հայրը միտքը կիյնէր՝ որ ա-
նոնց նման անանկ փորձանքի եկած էր ·
սիրտը ցաւելով աչքերն արտասուալից կը
մօտենար խեղճերուն ու կը մխիթարէր գը-
թութբ՟ · զի մխիթարութ՟է 'ի զատ ուրիշ
բան չունէր որ տար խեղճերուն · որչափ
աւելի առաջ կերթար , այնչափ աւելի կը
տեսնէր անոնցմէ ։

Ահա այսպէս հասաւ Ալաթիմէր քաղաքը ·
և ունէր մէկ ռուբլի , զի երկու ռուբլի ծա-
խեր էր Սարաբուլէն մինչև հոն · իսկ Սի-
պերիայէն իրեք ամսըվան ճանապարհ քա-
լեր էր , բայց ռուս գեղացիներուն մարդա-
վարութի՟ը շատ եղաւ Եղիսաբեթին , որ ա-
մէն տեղ զինքը հոգալով մինչև հոն հասու-
ցին · ուստի իւր խեղճ ստակը դեռ չէր լը-
մընցած ։ Սակայն կօշիկները և հագուստնե-
րը մաշած էին · և չէին կարնար զինքը ցըր-
տէն պաշտպանելու · որ արդէն 30 աստի-
ճանէն աւելի էր , ու օր աւուր վրա կաւել-
նար · ձիւնը երկու ոտնաչափէն աւելի ծած-
կած էր գետինը · երբեմն ձիւնը վար գա-
լով կը սառէր · և երբեմն սաստիկ անձրև
գալով ճամբաներ կը բանար · երբեմն ա-
նանկ սոսկալի քամի կելլէր որ Եղիսաբեթ
ձիւնը կը բանար ու գլուխը մէջը կը խօ-
թէր , որ պահպանուի ։

Երբոր Ալաթիմէրէն ճամբայ ելաւ՝ օր
մի հանդիպեցաւ անանկ սաստիկ փոթորի-
կի , որ ձիւնը երկինքը բարձրացնելով կը

խաւարէր օդը. մինչզի՝ Անգիսաբեթ կորուս Ճամբան. հարկադրեցաւ որ մեծ ժայռին տակը մտնէ կենայ անշարժ. բայց հովը լեռները կը դողացնէր. այն միջոցը ձայն մի եկաւ իրեն. ելաւ անկէ դժուարութե̃ մէկալ կողմն անցաւ տեսաւ որ գեղացու խրճիթ մի կայ. վազեց գնաց դուռը զարկաւ. Նայիս պառաւ կին մի դուռը բացաւ, ու զարմանալով ասաց. խե՛ղճ աղջիկ ուսկի՞ց կուգաս այս մատղաշ հասակովդ մինակ՝ և ձիւնով ծածկած: Պատասխանեց Անգիսաբեթ. Ես կուգամ Թօպօլսքիէն ու կերթամ բէթրպուրկ՝ հայրս ազատելու համար: Երբոր մարդ մի կար՝ գլուխը ծռած մտիկ կանէր, երբոր լսեց՝ զարմանալով կանչեց. ի՞նչ կը խօսիս. հիմա դուն Սիպերիայէ՞ն կուգաս այս հասակով ասանկ Թըշուառ անօգնական, այսպէս մրրիկներով: Ա՞հ իմ ողբալի զաւակս ալ քեզի պէս պիտի անէր. բայց բաժնեցին զիս անկէ՝ առանց գիտնալու թէ զիս ո՛ւր պիտի տանին. ուստի չգիտէ թէ ո՛ւր եմ, որ կարենար զիս հագալու. ո՞հ չի պիտի տեսնեմ զինքը, և այսպէս պիտի մեռնիմ. զի սիրական զաւակէս հեռու չեմ կրնար ապրելու:

Անգիսաբեթին սիրտը խռովելով ասաց. Պա՛րոն մի՛ յուսահատիր, ա̃ծ քեզ ալ կը համնի, զաւակիդ ալ կը համնի, որուն ձեռքին մէջն է բոլոր աշխարհ աւազի մի նըման: Պատասխանեց աքսորված մարդը.

Իրաւի է խօսքդ . բայց կուզեմ որ իմ վի-
ճակս զաւակիս իմացնեմ, ճարը չեմ գըտ-
ներ . ահա թուղթ մի գրեր եմ իրեն, որ է
Սիկիա . թղթատարը ներսն է հիմա պիտի
երթայ . ես ստակ չունիմ որ տամ . զի ա-
ռանց ստըկի չի տանիր : Եղիսաբեթ հա-
նեց տըւաւ իրեն մէկ ռուբլին , որ մնացեր
էր , ներում խնդրելով . զի աւելի չունէր
որ տայ : Աքսորվածը առաւ ձեռքէն , վա-
զեց տարաւ թղթատարին տըւաւ . անալ ա-
ռաւ թուղթը : Եղիսաբեթ ունեցածը տա-
լով շատ առատասիրտ երևցաւ . մանաւանդ
պատճառ եղաւ որ այն աքսորվածին զա-
ւակն օգնէ խեղճ հօրն : Երբոր հանդար-
տեցաւ քամին՝ Եղիսաբեթ ուզեց ճամբայ
ելլելու , շնորհակալութ̃ գրկեց այն պա-
ռաւն որ զինքը հանդուցեր էր . բան մի
չունիմ, կասէր , որ քեզի հատուցանեմ .
ուրիշ բան չունիմ, եթէ ոչ՝ ծնողացս օրհ-
նութ̃իը , որ է իմ մի միայն հարստութ̃իս :
Ողորմելի աղջիկ՝ ասաց պառաւը . հապա
ինչո՞ւ բոլոր ունեցածդ տվիր : Եղիսաբեթ
ամըչնալոյն կարմըրեցաւ : Իսկ աքսորված
մարդն ելաւ թևերը վերցուց օրհնեց Եղի-
սաբեթն ասելով . Պահապան հրեշտակն ա-
ռաջնորդ ըլլայ քեզ ու պահէ ամէն փոր-
ձանքներէն , որ հասար ինծի . Եղիսաբեթ
ան ատենը առաւ մկրատն ու մազէն կտրեց
փունջ մի տըւաւ անոր ասելով . Որովհետև
սիպերիա կերթաս տար այս մազս տուր Մօ-

պօլսքիու կառավարիչ իշխանին. և ասաւ թէ Նշխաբեթ զրկեց իրեն ծնողքին. աղաչեմ տար այս յիշատակս, որ պիտի ծանուցանէ իրենց, թէ դեռ զաւակը ողջ է։ Առաւ աքսորվածն ասելով. Երդում ըրայ քեզի, որ ամբողջ կը տանիմ. նաև պիտի գտնեմ ծնողքիդ խորշիթն ու պիտի պատմեմ ինչ որ ըրիր ինծի։ Նշխաբեթին սիրտը մեծապէս մխիթարվեցաւ ծնողացն համար, որ պիտի ուրախանային իր առողջութենը համար. և իր տված մէկ դրամը այնչափ բարութե պատճառ եղաւ. զի անով թէ աքսորվածին զաւակը լուր առնելով ուրախացաւ, և թէ իր ծնօղքը։

Վլատիմէրէն մինչև ցՓօքրօղ քաղաքը անտառային է ճանապարհը. ամառը ծառերն տերևալից զարդարվելով գողերու բնակարան է. բայց ձմեռն այնչափ չեն կարնար պատսպարվելու։ Թէպէտ Նշխաբեթի վախ տվօղներ եղան, սակայն իր աղքատութին ու յոյսը մեծապէս զինքը քաջալերեցին. որ ելաւ ճամբայ, ու քանի մի վերստ առաջ գնաց հանդիպեցաւ մեծ ճամբային մէջ բազմութի ճամբորդներու, որոնք մոսկով կերթային՝ լծին մէկալ կողմն անցնելով որ շատ հաստատ սառած էր։ Նշխաբեթ այս ճամբայով սկսաւ սառուցին վրայէն առաջ երթալ. բայց որովհետև ճամբան չէր երևնար՝ սխալեցաւ գնաց ընկաւ տղմալից տեղ մի. որ շատ դժվարութե հազիւ կար-

ցաւ ելլելու. բոլորովին շաղախած ըլլալով հանեց կօշիկները և վրայի լաթը դրաւ արեգակն որ չորնայ, ինքը նստաւ քարին վրայ։

Այս տեղս վայրի անբնակ ըլլալով՝ բան մի չէր երևնար. ոչ ձայն կը լսվէր, և ոչ մարդ կանցնէր. իմացաւ որ մեծ ճամբայէն շատ հեռացեր է, ետևն էր լիճը. առաջն էր մեծ անտառը. օրն ալ սկսաւ իրիկուն ըլլալ. ելաւ քաջասրտութեամբ զօրացաւ, ասդին անդին կերթար մոլորելով՝ ճամբայ մի կամ մարդ մի գտնէ։ Երբոր կը փափաքէր մարդու ձայն մի լսելու. նայիս շատ մարդու ձայն լսեց անտառին կողմէն. շատ չանցաւ իրենք ալ երևցան, որ դէպ ինքը կուգային։ Տեսաւ որ դէմքերնին սոսկալի, ձայներնին վայրենի՝ վախցաւ որ աւազակներն էին. և լսեր էր որ շատ կան այն կողմը։ Կը մտածէր որ չըլլայ թէ ա՟ծ զինքը պատժէ յանդգնութ՟են համար, որ բանէ մի չէր վախնար. ուստի խոնարհելով առաջի ա՟յ ծնկան վրայ եկաւ ա՟ծային օգնականութ՟իը խնդրեց։

Իսկ այն բազմութ՟ին յառաջելով եկաւ մօտեցաւ Եղիսաբեթին. հարցուցին իրեն թէ ուսկից կուգաս, և ինչ կը պտըտիս հոս։ Արի աղջիկը աչքը խոնարհած ցած ձայնով ասաց, թէ կուգամ Փոպոլաքիու կողմանէ, ու կերթամ կայսերէն շնորհք խնդրելու հօրս ազատութ՟ենը համար։ Խիստ շատ զարմացան. հարցուցին թէ ո՞րչափ դըրա-

մով Ճամբայ ելար ։ Ան ալ հանեց նաւավարին տուած փոքրիկ դրամը ։ Կրկին աւելի զարմանալով իրարու երես նայեցան ու անանկ երևեցաւ իրենց թէ այս մատաղ կոյսը գերբնական և աներևոյթ զօրութ̃ե մը կը պահվի ։ Այնչափ ակնածութ̃ի ունեցան որ չի համարձակեցան երեսը նայելու ։ Երթանք երթանք , ասին , զի անտարակոյս ա̃ծ իրեն հետն է ։

Անոնք անցան անկէ , Եղիսաբեթ ելաւ փութով մտաւ անտառը . քիչ մը առաջ գընաց տեսաւ մեծ Ճամբայ մը խաչաձև . մէկ կողմը կար փոքրիկ մատուռ մը ա̃ծածնայ . Եղիսաբեթ ընկաւ մատուռին առաջն ու շնորհակալ եղաւ ա̃յ , որ զինքն ազատեց աւազակներէն ։ Այս մատուռին դիրքը կը յայտնէր թէ ամէն մէկ Ճամբայ ո՛ր քաղաք կը հանէ ։ Ուստի աւելի զօրանալով սկսաւ թեթևութ̃ե երթալ Փօքրօվին Ճամբան , և առաջ երթալով տեսաւ աղքատ կուսանաց վանքին պատը ։ Հասաւ վանքն ու դուռը զարկաւ մտաւ ներս , պատմելով քաշածները՝ խնդրեց իրեն բնակարան մը . ինչ որ ուզեց՝ տուին կուսանքն ու քրոջ պէս զինքն ընդունեցին , և չորս դին շարուած երբոր կը պատուէին զինքը՝ կարծէր թէ մայրը տեսաւ ։

Եղիսաբեթ պարզ և համառօտ պատմեց իւր պատմութիւնը . որ մեծ շնութ̃ի տուաւ բոլոր Միաբանութ̃ե ։ Այս սրբասէր կու-

սանք զարմացած մնացեր էին զարմանալի
առաքինութեանը վրայ մանուկ կուսին. որ
այնչափ աշխատանքի դիմացեր էր, և այն-
չափ նեղութի քաշեր էր առանց տրտնջա-
լու: Եւ մեծապէս կը վշտանային որ ինչ
որ իրեն պէտք է անել, և ինչ պաշար պէտք
է տալ՝ չէին կարնար, զի շատ աղքատ էր
իրենց վանքը. միայն ողորմութի կապրէին:
Սակայն կամեցան որ իրենք զիրենք մեր-
կացնեն ու զայն ծածկեն, հանեցին պատ-
ռած հագուստն ու կօշիկները, իրենց ըղ-
գեստը հագուցին: Եղիսաբեթ կուզեր հրա-
ժարիլ որ չառնու անոնց հարկաւոր զգես-
տը. իսկ գթած կուսանք ցցուցին վանքին
պատոն ասելով. Մենք ունինք այս պատրս-
պարանը, դուն աս ալ չունիս. մեր քիչը
քուկինն է, դուն մեզմէ աւելի աղքատ ես:

Եղիսաբեթ ելաւ Մոսկովու Ճամբուն
վրայ, տեսաւ բազմութի սայլերու. մար-
դիկներու, և կնիկներու, որ մեծ մայրա-
քաղաքը կերթային. շատ զարմացաւ, և
որչափ աւելի առաջ գնաց, այնչափ բազ-
մութիը շատ տեսաւ: Երբոր ելաւ վանքէն
հասաւ գիւղը՝ տեսաւ որ մարդով լեցուն
էր, իջևանները կնիկմարդ աղջիկներ և ա-
մէն տեսակ Ճամբորդներ կային. կը զար-
մանար երբոր կը տեսնէր որ փոքրիկ խուցի
մի համար վարձք կուտային շատ դրամ. և
շատ կը ցաւէր անհնարին տառապանօք.
զի աղքատ կոյսն չունէր դրամ որ տալ ու

հանգիստ տեղ ունենար․ այլ շատ անգամ անձրևի և ձեան տակ կը մնար․ սակայն սիրով կը համբերէր ամէն նեղութեանց վասն սիրոյ ծնողացն, որ կերթար ազատելու։

Երբոր մօտեցաւ Մոսկովու ամէն տեղ զանգակներու ձայն կը հնչէր, և ամէն տեղ կայսեր անունը կը լսէր։ Աւելի մօտենալով մեծ մայրաքաղաքին լսեց թնդանօթի ձայներ, որ Մոսկովէն կուգար․ որովհետև Եղիսաբեթ այնպիսի ձայն չէր լսած՝ շատ զարհուրեցաւ։ Նայիս բազմութի̅ կառաց կանցնէին և խուռն մարդիկ դիզվեր էին մեծ ճամբային վրայ․ Եղիսաբեթ զարհուրելով հարցուց պատճառը։ Ասին որ Կայսր կուգայ Մոսկով երթալու։ Ինչպէս, ասաց միթէ կայսր բէթրպուրկ չէ՞ որ։ Խեղճ աղքատ աղջիկ ասին, չե՞ս լսած որ Աղէքսանդր կայսր կուգայ որ թագադրութեան հանդէսը կատարէ Մոսկով։ Եղիսաբեթ ձեռքը ձեռքին բերելով աչքն երկինքը վերուց, հաստատեց յոյսը և զարմացաւ աստուածային ողորմութեն վրան, որ կը զրկէր ինքնակալն իրեն առջին․ որուն ձեռքն էր ծնողաց վիճակը․ և այն անանկ ժամանակ որ ազգային և ընդհանուր ուրախութի̅ կար ամենուն սրտին մէջ, և առաւել կայսեր, որ գթութ̅ լեցված էր։ Եղիսաբեթի սիրտը շարժելով դարձուց գլուխը դէպ ՚ի սիպերիա ասաց․ Ո՞ւր էք ծնօղք իմ․ յուսամ թէ իմ աշխատանքս պարապ չին ել-

լեր․ շուտով կիմանաք ձեր զաւակին երջանկութի՜ն, թէպէտ հիմի իմ ձայնս ձեզի չի հասնիր։

## Ը․ Դիպուած։

Յամի տն 1801․ Սեպտեմբերի 13․ Եղիսաբեթ մտաւ Մոսկով մայրաքաղաքը․ երբոր կը տեսնէր մեծամեծ պալատներ, թագաւորական ապարաններ, և այնչափ զարդարանք և մեծութիւն՝ զարմանար կը մնար։ Բայց միտքը դրաւ թէ իրեն վիշտը և նեղութիւնը լմընցաւ․ մտքէն չէր անցնիր որ նոր վիշտ պիտի ունենայ։ Տեսաւ որ ճամբաները և հրապարակները անանկ լեցուն էին մարդով, որ հազիւ կարնար քալելու բազմութեան մէջէն․ որ զինքը մէկ կողմէն մէկալը կը հրէին։ Վերջապէս ելաւ փողոցէն տեսաւ զուարճալի ծառնոց մէկ կողմը քաղաքին․ հոն հանգչեցաւ։

Այս զուարճալի զբօսարանին մէջ անհամար մարդիկ կը պտըտէին․ և ամէնքն ալ կը խօսէին կայսեր թագադրութեան հանդէսին վրայ։ Շատ կառքեր վեր վար կը պտըտէին։ Նաև մեծամեծ զանգակները մայր եկեղեցիներուն անդադար կը չալէին։ Երբեմն երբեմն թընդանօթներ կը նետվէին․ ուստի բոլոր քաղաքը կը սարսէր։

Եղիսաբեթ ելաւ անկէ գնաց դէպ 'ի հրապարակը Կրեմլեան․ զի հոն կերթար

խուռն բազմութիւնը . ուր կրակներ վառեցին հանդէսի համար , Եղիսաբեթ վախով նստաւ մէկ կողմը , զի չի տեսած բաները կը տեսնէր ։ Նոյն գիշերն անցուց այնպէս . բայց միւս օրն սկսաւ մտմըտալ տրտմութեամբ . զի այնչափ քալեց , տեղ մի չի գտաւ բնակարանի համար , որ քիչ մի հանգչի . տեսաւ շատ մեծամեծ պալատներ , բայց ի՞նչ շահ , որ չի գտաւ իրեն համար խուց մի . տեսաւ անչափ բազմութիւն , բայց չի գտաւ իրեն պաշտպան բարեկամ մի ։

Երբոր գիշերը մտեցաւ՝ ցուրտը սաստկացաւ . խեղճը բան ալ չէր կերած նոյն օրը ։ Կը նայէր անցնողներուն երեսն որ գըթութիւն մի գտնէ . բայց ամէնքը զբաղած ըլլալով մարդ երեսը չէր նայէր . նաև իրեն երեսը չէր բռնէր որ երթայ մէկին դուռը ։ Վերջապէս համարձակեցաւ գնաց մէկ աղքատի դուռ զարկաւ . չի բացին , ու երեսն ալ չի նայեցան . զի ամէն մարդ աւելի վատակ անելու կը ջանային այն մեծ հանդէսին առենը . ուստի ամենուն դուռը փակված էր , օտարական աղքատը նայող չի կար ։

Մանուկ կոյսն Կրէմլեան հրապարակին մէջ մտեցաւ կրակին ու նստաւ կուլար . տրտմութենէն սիրտ չունէր որ պատառ մի հաց ուտէ , որ տվեր էր իրեն պառաւ կին մի ։ Նոյն գիշերն այնչափ սաստիկ ցուրտ եղաւ , որ Եղիսաբեթ մտածեց՝ թէ որ

դուրսը մնայ պէտք՝ է որ վտանգի. ուստի արխացաւ ելաւ. տեսաւ որ մարդիկ կանգնին, մօտեցաւ առջի անցնողին ասաց. վասն անուան հօրդ որ քեզ կը սիրէ, և վասն սիրոյ մօրդ՝ ուսկից առեր ես կեանք, քիչ մի ողորմութիւն արա ինձի, որ գիշերս տեղ մի վարձեմ նստիմ։ Մարդը կրակին լուսոյն երեսը նայեցաւ ասաց. Մանուկ աղջիկ, ամօթ չէ՞ որ չես աշխատիր ու կը մուրաս. ա̃ծ տայ. ես մուրացկան չեմ սիրեր. այսպէս խօսելով անցաւ գնաց։ Ողորմելի Եղիսաբեթը գետինն անցաւ ամօթոյն. աչքն ու սիրտը երկինքը վերցուց, խնդրեց ստեղծողէն որ հասնի իրեն օգնութիւն. զի ընդունայն է փրկութիւն մարդկան։

Վերջապէս գիշերն աւելի անցաւ, բազմութիւնը պակսեցաւ, կրակն ալ կը մարէր. բայց Եղիսաբեթ մնաց անօգնական խեղճ։ Այս միջոցս հրապարակին պահապան զօրքն ելան պտըտեցան. երբոր մօտեցան Եղիսաբեթին, զարմանալով կանչեցին, թէ ինչ բան ունիս հոս։ Անոնց սոսկալի ձայնն ու խստութիւնը անանկ դողացուց սիրտը մատաղ կուսին, որ փոխանակ պատասխանելու սկըսաւ լալ. կարծէր թէ լացով կարնայ անոնց սիրտը շարժելու. բայց անոնք աւելի խըստանալով նորէն կանչեցին, ով ես դուն։ Կոյսը դողալով պատասխանեց. Ես կուգամ Թոպօլսքիու կողմանէ, որ կայսերէն շնորհք խնդրեմ հօրս համար. ողորմեցէք

խեղճութենս . բոլոր այսչափ ճամբան քալելով եկեր եմ . փող չունէի որ տեղ մի վարձէի . անոր համար հոս մնացի ։

Այս խօսքս որ լսեցին՝ աւելի կատղեցան, կարծելով թէ սանկ անյարմար սուտերով զիրենք կը խաբէ ։ Սիամիտ զաւակը զինքը սիպերիա կարծելով ուզեց փախչելով ազատիլ՝ պահապանները հասան ետեւէն բռնեցին զինքն որ բանտը տանին ։ Ան ատենը ողորմագին ձայնով աղաղակեց Եղիսաբեթ . Ո՜վ Աստուած իմ, հայր իմ, ստեղծօղ տէր իմ . ո՞ւր են ողորմութիւնք քո առաջին . արդեօք երբեք ձգեցի՞ր ողորմելի Եղիսաբեթը . ահա՛ ժամանակ՝ հասի՛ր տառապեալ աղախնոյդ ։

Այս ողորմագին ձայնը շատ մարդ հոն հաւաքեց . երբոր տեսան անմեղ զաւակին խեղճութիւնը սկսան պահապաններուն սաստել թէ ինչո՞ւ կը չարչարէք ողորմելի աղջիկը ։ Իսկ խեղճը թեւերը տարածեալ կաղաղակէր . Երդում ըլլայ առաջի Աստուծոյ, որ սուտ չեմ խօսիր . քալելով եկեր եմ Սիպերիայէն հոս . որ հօրս համար ազատութիւն խնդրեմ . ազատեցէ՛ք զիս Աստուծոյ համար ըլլայ՝ ազատեցէ՛ք զիս, որ չի մեռնիմ . գէթ հայրս ազատելէն ետեւ մեռնիմ ։ Այս խօսքով ամենուն սիրտը գութ շարժեցաւ . հոն գտնըվօղներուն մէջէն մէկ բարեպաշտ մարդ մի առաջ անցաւ . ասաց թէ այս խեղճ աղջիկն այս իրիկուն իմ հիւրս է . և իմ հիւ-

բանտոյս է որ բարսղի հրապարակին վրա, հոն կը բնակեցնեմ. թէ որ պակասութիւն մը եղած ըլլայ, վաղը ինձ գիտցիք: Սայիսի հասուն խօսքերով առաւ անոնց ձեռքէն. սկսան անկէ հեռանալ:

Եղիսաբեթ շնորհակալ ըլլալով մեծային ողորմութեանը՝ կերթար իւր պաշտպանին ետեւէն. մինչեւ հասան տունը. բայց որովհետեւ նոյն ժամանակն ամէն տուն լեցուն օտարական էր. ասաց, թէ ես աւելի խուց չունիմ որ քեզի տամ. ահա ամէնը լեցուն է. հապա մէկ գիշերվան համար կնոջս քով կեցիր. թող քիչ մի անհանգիստ ըլլայ քեզ ընդունելու համար: Եղիսաբեթ ձայն չի հանեց. մտան փոքրիկ գաւիթը. տեսաւ որ կինն մանկամարդ էր եւ ունէր գիրկը տղայ: Այս բարեսիրտ կինը տեսածին պէս Եղիսաբեթին խեղճութիւնը ելաւ գնաց քովը: Այրը պատմեց կնկանը, թէ ինչ վտանգէ ազատեց խեղճն, ու իր անուամբը խոստացաւ զինքն ընդունելու: Կինը ուրախութիւն ցրցնելով բռնեց Եղիսաբեթին ձեռքէն, ու ծիծաղ երեսով ասաց. հազար բարով եկար. խեղճ աղջիկ ինչպէս դեղներ ու խռովեր ես. բայց մի վախնար մենք քեզ զաւակի պէս կը սիրենք գթալով. ուրիշ անգամ չըլլայ թէ ուշ ատեն հրապարակին մէջ նստիս. խօսքիս հաւատա. զի մեծ քաղաքներուն մէջ կարելի չէ. որ քեզի պէս աղջիկ հրապարակներուն մէջ մնայ այս ժամանակս:

Եղիսաբէթ պատասխանեց լալագին, թէ ի՞նչ կարող էի անել, ես տէր չունիմ, ճար չունիմ. հեռու աշխարհէ եկայ, բոլոր օրս խնդրեցի տեղ մի չի գտայ. զի ամէն դուռ ինձի փակվեցան: Սկսաւ պատմել բոլոր ճամբորդութիւնը, և քաշած նեղութիւնները: Բարեսիրտ կինը լսելով խեղճ զաւակին քաշածներն սկսաւ լալ. նոյնպէս այրը շատ զարմանալով սիրտը լեցվաւ. զի յայտնի կերևնար, թէ ինչ որ կը պատմէ ճշմարիտ է. ո՛չ սուտ էր և ո՛չ երազ էր լսածնին: Ծայրէ 'ի ծայր պատմութիւնը լմընցուց, և ճշմարտութիւնը հաստատելով հաւանեցուց լսողներուն:

Այս պարոնին անունն էր Յակոբ ռօսսի պանդոկապետ. երբոր Եղիսաբէթ խօսքը լմընցուց. մխիթարելով ասաց, թէ իրաւի ես այս քաղաքին մէջ շատ անուանի մարդ չեմ, բայց ունիմ շատ բարեկամ. որչափ ձեռքէս կուգայ քեզի համար կաշխատիմ. և որչափ իմ աղէկութիս կուզեմ, այնչափ ալ քու աղէկութիդ: Կինն ալ հաստատելով այս խօսքս՝ հարցուց թէ մարդ մի չե՞ս ճանչնար հոս, որ քեզ թագաւորին տանի: Եղիսաբէթ չէ ասաց. զի յոյս չունէր թէ պատանին Սմօլօֆ այն կողմերը գտնըվի: Կրկնեց կինը, թէ այդ խնդիրքդ մեծ բան մի չէ մեր մեծահոգի գթած կայսեր համար. տ̃վ քեզ ալ կուրախացնէ: Յակոբ հաստատելով ասաց. այո՛ այո՛ Աղէքսանդր

կայսր կարող է ամէն բանի . որ վաղը պիտի պսակվի կայսր և թագաւոր վերափոխման եկեղեցնայ մէջ . պէտք է որ դուն գտնըվիս Ճամբուն վրա , ու ոտքն իյնիս խնդրես շնորհք հօրդ ազատութեն համար . մի հոգար ես ալ հետդ կուգամ . ա̃ծ կօրհնէ քեզ ողորմութ̃ը :

Նախշարեթի սիրտն եղաւ . կանչեց լալագին . Ո՜հ իմ առատասիրտ հիւրընկալներ . ա̃ծ լսէ ձեզ . և օրհնէ ձեզ ծնողացս օրհնութ̃ը . դուք ինձի ընկեր եղէք , հաստատեցէք ողորմելիս ու տարէք կայսեր ոտքը . ա̃վ դուք պիտի ըլլաք վկայ իմ երջանկութ̃ես . քան զայս մեծ երջանկութ̃ի չի կայ ինձի համար , որ կարնայ վայելել մէկ ստեղծված մի : Արդեօք պիտի ըլլա՞յ ինձ այս շնորհքը . արդեօք պիտի տանի՞մ զայն հօրս , և պիտի տեսնե՞մ մօրս ուրախութ̃իը : Նորէն սիրտը շարժեցաւ խեղճին . չի կարցաւ խօսքն առաջ տանելու . զի անանկ եկաւ իրեն , թէ արժանի չէր այն երջանկութեան , ուստի կուլար անձայն :

Բարեպաշտ հիւրընկալները քաջալերեցին յոյսը . սիրտ տվին իրեն մեծ գովեստներով այս մեծ առաքինութ̃եը համար , որ կը մաշվէր վասն սիրոյ ծնողացն . նաև անոր հասկըցուցին Աղէքսանդր կայսեր գութը թէ որչափ կը խղճայ ասանկ անմեղ խեղճերուն վրա . զի ով որ ինչ խնդիրք արեր էր՝ պարապ չէր եղած . և ս առաւել

այն առաքինի աշխատանքը պէտք էր պա-
րապ չէլլէլ ու պառկիլ։ Եղիսաբեթ կո-
րուս քունն ու հանգիստը, շարունակ մտիկ
կանէր անոնց քաջալերական խօսքերն ու
կը զօրանար։ Սակայն տանուտէրքը կամե-
ցան որ Եղիսաբեթ հանգչի, որ միւս օր-
ւան աշխատանքին պատրաստ գտնուի. Թէ-
պէտ ժամանակը շատ ուշ էր։ Ուստի Յա-
կոբ ռօսսի քաշուեցաւ գնաց վերի փոքրիկ
խուցը պառկելու. իսկ կինը առաւ Եղի-
սաբեթն իրեն անկողինը։ Սակայն խեղճին
սիրտը սաստիկ խռոված ըլլալով երկար ժա-
մանակ չի կրցաւ քնանալու։ Շարունակ
շնորհակալ կ'ըլլար այ̃, որ ողորմութ̃ն ա-
մէն տեղ կը հասցընէր. և այն նեղ ժամա-
նակը առատասիրտ հիւրընկալներն իրեն
հանդիպեցան ու օգնական եղան։ Թէև որ
հրապարակին մէջ այն մեծ նեղութե̃ մէջ
չըլլայի, կասէր Եղիսաբեթ, Յակոբ ռօս-
սին ինծի չպիտի ողորմէր ու տուն բերէր.
ուրեմն այն քաշած խաչս աւ̃ծ ղրկեց, որ
համբերեմ, ու աւելի յաջողութի̃ գտնեմ.
փա՛ռք ստեղծողիս հազա՛ր փառք, յուսամ
հաստատութե̃, թէ չի՛ թողուր զիս։ Այս-
պիսի երախտագիտութե̃ և բարի յուսով
քնացաւ. բայց երևակայութի̃ը սաստիկ
շարժած ըլլալով քաղցր երազներ կը տես-
նէր. երբեմն հայրը կը տեսնէր, որ սիրտ
կուտար իրեն. երբեմն գորովալի տեսլեամբ
մայրը կը տեսնէր ուրախութե̃ փայլած. եր-

բեմն կուգար իրեն թէ կայսեր ձայնը կը լսէ . և երբեմն զանազան առարկաներ կը տեսնէր . և այսպէս անոյշ քնով մինչև 'ի լոյս հանգստացաւ ։ Հետևեալ օրն սկսաւ հրատարակուիլ ամէն տեղ քաղաքին մէջ տօն ցնծութե՟ . զանգակները մէկ դիէն կը չալվէին . հրացանները մէկալ դիէն . ամէն դի ուրախութի՟ , երգ , և նուագարան կը լսէր ։ Փողոցները զարդարուեցան , և ժողովուրդն սկսան դէպ 'ի եկեղեցին երթալ ։ Առատենը բարեսիրտ կինը Յակոբին՝ հագուց Եղիսաբեթին իւր համեստ զգեստը . որուն ներքին ազնուութիւնը դրսէն ալ փայլեցաւ , և իւր գեղեցիկ տեսքն ու պարկեշտ շարժւածքը յայտնի կը քարոզէին հոգւոյն մեծութիւնը ։

## Ժ. Պսակուած ։

Եղիսաբեթ Յակոբ ռօսսին թևէն բռնած ելաւ դուրս խառնուեցաւ բազմութե՟ մէջ, նազելի գնացքով հասան եկեղեցին վերափոխման , ուր որ կայսրը պիտի պսակուէր թագադրութե՟ ։

Այս 'որ տաճարը պայծառ կը փայլէր . հազար ջահէն աւելի կը վառէին , և անթիւ զարդարանքներով գեղեցիկ զարդարած էր . մէկ կողմը շինած էր փառաւոր գահը կայսերական՝ վրան մեծագործ ամպհովանի . մեծապանծ կայսր բազմեր էր փառաւորապէս,

կայսրուհին ալ քովը մեծագին զարդարանքներով և հագուստներով. անանկ պայծառ և ահեղ կը փայլէին որ տեսնողներուն արեգական նման կերևնային: Նայիս կայսրուհին ելաւ չոքեցաւ կայսեր առջին, և առաւ փառաւոր փեսայէն կայսերական թագը. դրաւ համեստ գլուխը իբր գերազանց կապ իրենց յաւիտենական միութե: Նոյնց դիմացն էր մեծապատիւ Պղատոն Արքեպիսկոպոսն մոսկովու. որ ծանր ոճով և ճոռոմ խօսքով կը յիշեցնէր կայսեր և կայսրուհւոյն կայսերական պարտքը, թէ ինչպէս մեծ պարտաւորութե, և սարսափելի երաշխաւորութե տակն ընկան առաջի այ. որչափ աւելի պայծառացան մեծութբ, այնչափ աւելի պատասխան պիտի տան ստեղծողին, որ չի խաբուիր: Կը ցցընէր բազմութե մէջ զանազան ազգերն, որոնց պիտի տիրէր. կը ցցընէր գամչեաքցիներն որ Արխանկելէն եկեր էին. ևս և բնակիչները սև ծովուն, կասպից ծովուն, և մեծ թաթարստանու. նաև կէս մասն աշխարհի մինչև բևեռն իրեն պիտի ըլլար:

Վերջապէս այսպէս լմնցուց խօսքը. Ինքնակալ տէր, ահա աւելի մեծ ինքնակալութին աշխարհիս առիր. այսօր եկար հոս երդում ընելու առաջի երկնաւոր թագաւորին, որպէս զի տիրես ամէն նահանգներուն, որ է հինգերորդ մասն տիեզերքիս. մի մոռնար բնաւ որ պիտի երթաս պատասխան

տալու նոյ այս ամենայն բիւրաւոր մարդկանց համար․ չըլլայ թէ ամենափոքր անիրաւութիւն մի ընես ասոնց մէջէն մէկ փոքրին․ այլ բարերար եղիր ամենուն, որ բարի գտնես վերջի օրն ։

Այս բանով շատ սաստիկ շարժեցաւ գըթած սիրտը երիտասարդ կայսեր․ նոյնպէս շատ շարժեցաւ Եղիսաբեթի սիրտն որ գընաց հօրն ազատութեան համար շնորհք խընդրելու ։ Այն ատենը Աղեքսանդր կայսրն սկսաւ ընել իւր երդումն հրապարակական, որով զինքը պարտաւորեց առաջի նոյ, որ իւր կեանքն ու ժամանակը զոհէ վասն երջանկութեան ժողովրդեան ։ Այս բանէն ետև Եղիսաբեթ լսեց ողորմութեան ձայն մի․ իբր թէ կայսր հրամայեց որ ամէն աքսորված անբաղդներն ազատին․ այլ սիրտը չի դիմացաւ քաջ աղջըկանը, զօրացաւ գերբնական զօրութեամբ՝ ճեղքեց այնչափ բազմութիւն՝ ու անցաւ զօրքերուն շրջապատէն մէկալ կողմը ցատկեց գահին առաջն աղաղակելով․ Շնորհք, շնորհք ։ Այս անսովոր ձայնը խափանեց հանդէսը, ու շշնջիւն ելաւ եկեղեցնայ մէջ․ մինչև պահապանները բռնեցին դուրս վարեցին խեղճը մեծ նախատանօք․ թէպէտ շատ լալագին պաղատեց․ բայց մըտիկ ընող չեղաւ ամենևին ։

Ողորմած կայսեր բարի սիրտը չի դիմացաւ երբոր տեսաւ որ խեղճ աղջիկը լալագին դուրս հանեցին․ հրամայեց որ այն մեծ

հանդիսաւոր օրը մարդու սիրտ ցաւի. ուս-
տի հրամայեց մօտն եղած հազարապետին,
որ երթայ հասկընայ թէ ինչ շնորհք կը
խնդրեր աղջիկը։ Այս հազարապետը տղա-
մարդ ըլլալով վազեց անցաւ բազմութենէն
դուրս ելաւ. տեսաւ որ խեղճ Եղիսաբեթը
պահապաններուն կաղաչէ կըստիպէ, որ
թող տան երթայ իյնի կայսեր ոտքը։

Երիտասարդ հազարապետն երբոր տե-
սաւ Ճանչցաւ կոյսը շուարեցաւ մնաց. ուս-
տի սկսաւ կանչել. Այս է այն աղնիւ Ե-
ղիսաբեթ։ Իսկ ցաւալից կոյսը չէր կարծեր
թէ նոյն կէտին մէջ ալ մեծ երջանկութե
պիտի հանդիպի, ու Սմոլօֆ պատանին պի-
տի գտնէ հոն որ զինքն ու հայրը ազատէ
խեղճութենէ։ Կը նայէր որ ձայնը Սմոլօ-
ֆինն է, թէպէտ փառաւոր հագուստնե-
րով փոխուած էր. պաղած կը նայէր իրեն
բաղկատարած ողորմագին տեսքով ու չէր
կրնար խօսելու, անանկ կուգար իրեն թէ
երկնից դուռն իրեն համար բացուած էր
նոյն օրը։ Սակայն պատանի հազարապետը
զինքը Ճանչնալով որ էր Սմոլօֆ, վազեց
մօտն ու բռնեց ձեռքէն վերցուց ասելով.
Դո՞ւն ես արդեօք Եղիսաբեթ. ուսկի՞ց
կուգաս հրեշտակի նման։ Ես կուգամ ա-
սաց Թոպոլսքիէն։ Թոպոլսքիէ՞ն, ասաց,
մինա՞կ ու քալելո՞վ եկար։ Այո՛ ասաց. մի-
նակ ու քալելով եկայ, որ ողորմած կայսե-
րէն ազատութիւն խնդրեմ հօրս համար.

բայց աւա՛ղ ահա՛ հեռացուցին զիս կայսեր առջեւէն ։ Կրկնեց Սմօլօֆ մի վախնար, արի հետս երթանք ․ ոչ միայն ես քեզ կայսեր կը ներկայացնեմ, հապա խնդիրքդ ալ կատարել կուտամ ․ զի գթած է չի կարնար քեզ չողորմելու ։

Սմօլօֆ մէկ դի անելով պահապան զօրքը՝ բռնեց Եղիսաբեթին թեւէն մտաւ ներս ։ Այս միջոցս կայսերական մարդիկ մեծ դրանը կողմն կը շարժէին ։ Սմօլօֆ ընկաւ կայսեր առաջն ասելով ․ Ա՛րքայ լսէ ձայնի դժբաղդիս, որ է դուստր Ստանիսլաւս Փոթօվքիին ․ և կուգայ Սիպիրիայ անապատէն, ուր տասներկու տարի է, որ իւր ծնողքը կը տանջին աքսորանաց մէջ ․ սա կուգայ անկէց միայնակ անօգնական, և ոտքով, որ խնդրէ ողորմութի՛ ծնողացն համար ։ Եղիսաբեթ բաղկատարած չոքած կաղաղակէր ․ շնո՛րհէք հօր իմոյ ։

Մեծ զարմացում և շշնջիւն եղաւ բազմութե՛ն մէջ ․ կայսեր սիրտն ալ շարժեցաւ ․ զի գիտէր որ ինչ մարդու զաւակ է ։ Հայրդ ազատ է, ասաց ․ կը շնորհեմ իրեն ողորմութի՛ ։ Այս բանն որ լսեց ողորմած կայսերէն՝ սիրտն անցաւ մարեցաւ ընկաւ Եղիսաբեթ ․ բռնեցին դուրս տարին ․ անհամար մարդիկ վրան թափեցան, ոմանք կը զարմանային ․ ոմանք կը գովէին դիւցազնական առաքինութի՛ն որ այնչափ Ճամբայէն եկեր էր հայրն ազատելու համար ․ ոմանք ալ

կայսեր ողորմութիւնը կը գովէին. որ հանդեսէն ետև այս մեծ և առջի կայսերական ողորմութիւնը արաւ խեղճին, ու ելաւ հանդէսով գնաց պալատը։

Իսկ եղիսաբեթ մտածած տարին Յակոբ ռուսիին տունը. Սմօլօֆ հանդեսէն ետև հոն հասաւ. Ճարերով հազիւ կրցան սիրտը զօրացնելու. խելքը վրան եկաւ աչքը բացաւ տեսաւ որ Սմօլօֆ մօտն է. և առջի խօսքն ասաց իրեն. Եղիսաբեթ, հայրըդ ազատեցաւ. զի կայսրը շնորհք արաւ իրեն։ Սակայն եղիսաբեթ չէր կրնար խօսելու. միայն նայվածքը կերևցնէր սրտին ուրախութիւնը. նաև երախտագիտութիւնը։ Վերջապէս հազիւ կրցաւ հօրն ու մօրը անունը տալու, թէ պիտի տեսնեմ զանոնք, և պիտի ուրախանամ անոնց երջանկութենը վրա։

Սմօլօֆ պատանին այս սքանչելի աղջըկան բաները տեսնելով և իմաստուն խօսքերը լսելով աւելի սիրտը վառեցաւ անոր վրան սիրով. միտքը դրաւ որ այսպիսի զաւակ քիչ կը գտնի աշխարհիս վրա. և այսպիսի առաքինի կոյսը յաւիտենական սիրով սիրելու և պատուելու արժանի է։ Սրտի օրչափ կարելի էր կը հօգար զինքը բարեպաշտ Յակոբին ձեռքովը, որուն կնօջը հետ մնաց, մինչև որ ամէն խնդիրքը կատարվեցաւ։ Բայց շատ օր անցաւ մինչև որ ազատութեան շնորհքն եղաւ. զի ամէն արար-

մունքը Ստանիսլաւսին քննեցին ․ Աղեքսանդր կայսրն այսպէս որոշեց , թէ արդարութիւնը անոր համար հրամայեր էր անոր աքսորանքն , որ խորտակէ ուժը ազնուական իշխանաւորին , չէ թէ կորսնցընէ ․ ապա պէտք եղաւ շնորհք անել և ազատել ։

Սմօլօֆ առաւօտ մի կանուխ եկաւ Յակոբ ռօսսին դուռը զարկաւ ներս մտաւ ․ որ հանդէսի օրէն ետև դեռ չէր համարձակած հոն երթալու ․ կանչեց Եղիսաբէթ ցցուց մագաղաթ հրովարտակը կայսերական կնքով կնքած ։ Ահա այս է ասաց հրամանագիրը կայսեր , որ կը ղրկէ հօրս՝ի Թօպօլսքի , հօրդ ազատութենը համար ։ Ազնիւ կոյսը խլեց ձեռքէն հրովարտակն ու քսեց աչքերին լացաւ ողորմագին ։ Կրկնեց Սմօլօֆ ․ Այսչափս բաւական չէ ․ զի մեր մեծահոգի ողորմած կայսրն ոչ միայն պիտի ազատէ հայրդ , այլև պիտի տայ իրեն հարստութիւնը , պատիւը , և մեծութիւնը ։

Այս խօսքերն որ շատ մարդու հպարտութիւն կը բերեն՝ ամենևին Եղիսաբէթի սիրտը չի մեծցուցին ․ այլ խոնարհելով առաջի տ̃յ , շնորհակալ եղաւ ․ յետոյ խնդրեց գիտնալ թէ երբ կերթայ թղթատարը ։ Պատասխանեց Սմօլօֆ , թէ վաղը առաւօտ պէտք է ճամբայ ելլել ․ ես ալ հրաման առի կայսերէն որ հետն երթամ ։ Եղիսաբէթ աղաղակեց ․ հապա ես ինչ անեմ ․ չերթամ ծնողացս ։ Ասաց պատանին

թէ պէտք է որ դուն ալ երթաս անտարակոյս. զի քու բերնէդ 'ի զատ որո՞ւն բերանը ունի իրաւունք աւետիս տալու ծնողացդ այս շնորհքին համար ։ Եւս այս խորհրդով ծանուցի կայսեր. գթացաւ վրադ, ու զիս պարտաւորեց, որ ծանուցանեմ քեզ անոր հրամանն որ վաղը ճամբայ պիտի ելլես. ահա կը շնորհէ քեզ կառք մի, երկու ծառայօղ կին, և քսակ մի ոսկի. որպէս զի անաշխատ երթաս հանգիստ ։

Եղիսաբեթ հիանալով նայեցաւ երեսն ու ասաց. Առաջին օրէն 'ի վեր է, որ քեզ տեսայ ինչ բարիք որ ա̃ծ ինձի տուաւ, քու ձեռքովդ տուաւ. չկիտեմ ինչ խորհուրդ ունին ա̃ծային գաղտնիքն. զի առանց քեզ ո՛չ ես կարնայի այս շնորհքն ունենալու, և ոչ ծնօղքս կարնային հայրենիքը տեսնելու ։

Ուրեմ̃ քեզի կը վայլէ, որ հօրս ծանուցանես ազատութե̃ շնորհքը, չէ ինձի. և այս բարեյաջողութի̃ պիտի ըլլայ միայն արժանաւոր վարձք քու բարերարութեանդ ։ Ոչ Եղիսաբեթ, ասաց պատանին, այս բարեյաջողութի̃ թո՛ղ ըլլայ քեզի վարձք, յուսամ թէ ինձի աւելի գերագոյն վարձք կըլլայ ։ Կանչեց կոյսը. աւելի մեծ վա՞րձք. ո՞վ տէր իմ. քան զայս աւելի մեծ բան կարնա՞յ ըլլալ աշխարհիս վրան ։ Սմոլօֆ կուզէր այլ ևս խօսել. լուռ եղաւ սկսաւ վար նայելով մտածելու. յետոյ ասաց, թէ ես քեզի կասեմ զայն երբոր երթանք ա̃մ հօրդ քով ։

## ԺԷ. Դիպուած ։

Ամօլօֆ պատանի հազարապետը նոյն օրն ամէն պատրաստութիւնը տեսաւ թէ՛ իրեն, և թէ Եղիսաբեթին. իսկ առաւօտուն եկաւ հոն թագաւորական կառքը երկու ծառայօղ կնիկով, և ամէն պատրաստութեամբ ։ Ելաւ Եղիսաբեթ իբր թագաւորազուն դշխոյ, հագաւ նոր շինած ճամբու հագուստը, հանեց քսակէն հիւրընկալներուն շատ պարգև տուաւ և մեծ շնորհակալութեամբ բարևեց. ելաւ նստաւ կառքը ուրախութեամբ. սկսաւ երթալ երկու աղախինով. նոյնպէս Ամօլօֆ ալ ընկերացաւ իրեն, մեկնեցան Մոսկովէն մտան մեծ ճամբան սիպերիայի. բայց անանկ կարճ կերևնար իրենց քաղաքներուն միջոցը և անանկ հանգիստ, իբր թէ այն տեղերը չէին, որ անհնարին տառապանօք անցաւ Եղիսաբեթ ։ Ամօլօֆ ամէն տեղ քոյր կանուանէր Եղիսաբեթ, և եղբայրական 'որ սիրով կը սիրէր անանկ որ քանի առաջ կերթային աւելի իրենց սէրն ու խընդութիւնը կը շատնար ։

Ահա այսպիսի ցնծութեամբ հասան Կազան քաղաքը. Եղիսաբեթ յիշեց բարերար Նիկողոս նաւավարը, հարցուց փնտըռեց, թէ ո՞ւր է, որ բարերարութիւնը դէմ հատունէ ։ Պատասխանեցին թէ մեծ դժբաղթէ պատահեցաւ. ղի վեց ղաւակով հիւանդ

պառկած է . ու հաց չունին ուտելու ։ Ե-
ղիսաբեթ խնդրեց, որ տունը տանին զին-
քը . գնաց գտաւ աղքատ ողորմելի . բայց
նա չի ճանչցաւ Եղիսաբեթն որ առաջ ան-
շուք աղքատ տեսեր էր, հիմա կը տեսնէր
պայծառ և փառաւոր . ուստի Եղիսաբեթ
հանեց քսակէն անոր տուած փոքրիկ դրամը
ցցուց իրեն . ու յիշեցուց, թէ իրեն ինչ
աղէկութի՟ արեր էր ջրէն անցընելու ատե-
նը ։ Ապա հանեց հարիւր ռուբլի դրաւ ան-
կողինին վրայ . Ու ասաց այս . զի ողորմու-
թիը պարապ տեղը չի ցանվիր . ահա այն ո-
ղորմութ՟ին է, որ ինձի տվիր անուամբ ա՟յ .
ահա այն է, որ ա՟ծ դարձուց քեզի ։ Կա-
զանէն ելան երկար ճանապարհաւ՝ որչափ
աւելի առաջ կերթային՝ այնչափ շատ կը
շարժէր սիրտը Եղիսաբեթին, որ շուտով
հասնի ծնողացը . ուստի գիշեր ցորեկ կեր-
թային անհնարին արագութեամբ թռչու-
նի նման . մինչև հասան Սարաբուլ քաղա-
քը, ուր թաղված էր սրբակաց Սիխիոնա-
ըը ։ Եղիսաբեթ չուզեց առաջ երթալու
մինչև որ չերթայ անոր գերեզմանին այցե-
լութի . որ էր իրեն որդիական պարտքը ։
Ելաւ շիտակ գնաց գերեզմաննոցը մեծ
ջերմեռանդութե՟ . Նախ տեսաւ մեծ փայ-
տէ խաչն, որուն քով այնչափ ողորմելի դառն
արտասուք թափեր էր . սկսաւ քաղցր ար-
տասուօք լալ, ու շնորհակալ ըլլալ ստեղ-
ծողին ողորմութեը ։ Գնաց ընկաւ գերեզ-

մանին վրա կաղօթէր ։ Ո՞րանկ կերևնար իրեն թէ որ ծերը երկինքը կուրախանայ անոր երջանկութենը վրա · և ողորմած սիրտը այլոց յաջողութեան աւելի կը պայծառանայ երկնային փառքերուն մէջ , մանաւանդ իրեն երջանկութեանը ։

Այլաւ գերեզմաննոցէն մեծ ջերմեռանդութիւն սկսան երթալ Թօպօլսքի · բայց բոլոր Ճամբան միայն ծնողացը վրան կը խօսէր · թէ ինչպէս պիտի տեսնէ զիրենք և ինչպէս պիտի գտնէ ։ Երբեմն կը մտածէր Սմօլօֆին երախտեացը վրան , որ պիտի պատմէր ծնողացն անոր եղբայրական գութն ու սէրը ։ Իսկ Սմօլօֆ կը ջանար որ ժամ մի առաջ տանի Եղիսաբեթ ծնողացն յանձնէ ։ Ահա այսպիսի բարի խորհրդով հասան Թօպօլսքի , և ներկայացան մեծ իշխանին հօրն Սմօլօֆին , որ շատ ուրախանալով առաւ թագաւորին թուղթը · և սկսաւ շուտով գործքի դնել ինչ հրաման որ եղած էր Սփինձերին ազատութենը համար ։

Եղիսաբեթ չուզեց երկար մնալու Թօպօլսքի · խնդրեց հրաման իշխանէն , որ շուտով հասնի ծնողացը · իշխանը հրաման արաւ որդւոյն , որ մեծ պատուով տանի ծնողացը յանձնէ ։ Մեծ ուրախութիւն եղան անկէ հասան Սարիմքայ · Եղիսաբեթ Ճանչնալով քալած տեղերը՝ չգիտէր թէ ինչպէս շնորհակալ ըլլայ Աստուծոյ ։ Միայն կը հոգար որ չըլլայ թէ ծնօղքը կսկիծով հիւանդ ըլլան ·

զի գիտէր որ իրեն համար մեծ ցաւի մէջ էն անոնք ։ Ապա երբոր Սայիմքայ մտան, Եղիսաբեթ ուզեց որ հարցընէ իմանայ ծնողացը որպիսութիւնը ․ բայց Սմոլօֆ թող չի տուաւ ․ սկսաւ շարունակել ճամբան ու երթալ անտառէն ։

Երբոր մտան մեծ անտառը՝ Եղիսաբեթին սիրտն ելաւ, արիւնը կայլայլէր ․ մանաւանդ երբոր հասաւ լճին քով․ կը ճանչնար ամէն մէկ ծառը և ժայռերը ․ միտքը կուգար թէ ինչ հոգեր քաշեր է հոն, և որչափ արտասուք թափեր է ծնողացն ազատութեան համար ․ ու ինչ երջանկութիւն կը գտնայ ծնողացը քով ։ Բռնացան կիրքը, զօրացաւ սրտին այլայլութիւնը չէր գիտեր թէ ո՛ր դին նայի ․ և ինչպէս շնորհակալ ըլլայ ա̃յ ․ նորէն կը դառնար չորս դին կը նայէր ․ հաւատալիքը չէր գար որ ծնողքը պիտի առողջ տեսնէ ։

Առաջ երթալով տեսաւ ծնողացը խրճիթը, տեսաւ իւր հայրենիքը հեռուէն, սիրտը թալկացաւ, այլ չէր կարնար զինքը բռնելու, ուրախութենէն կուլար ։ Սմոլօֆ բռնեց զինքը քաղցր խօսքերով կը մխիթարէր սիրտ կուտար ։ Վախնամ թէ հիւանդ են՝ կասէր ծնողքս, վախնամ ցաւի մի հանդիպեցան իմ պատճառովս ․ ո՞ւր են, մարդ մի չերևնար ․ վախնամ կորուսի երջանկութիւս ։ Ծնողասէր սիրտը այլ չի դիմացաւ ․ թողուց կառքը ելաւ վազեց մինակ ․ կիրքը

բռնանալով ծնկլըները կը դողացնէին չէր կրնար առաջ երթալու. որչափ աւելի մօտեցաւ խրճիթին այնչափ թուլցաւ սիրտը բեկբեկելով ձայնը։

Քուսկ յետոյ հասաւ Եղիսաբեթ խրճիթին դուռը. երբոր ծնողաց ձայնը լսեց ճանչցաւ. նորէն սիրտը փակվեցաւ. խելքը գնաց չէր կրնար ներս մտնելու. դողալով կանչեց ծնողացը, բացաւ դուռը ներս ընկաւ. տեսաւ հայրն որ աղաղակեց. մայրը հասաւ քովը, փաթթըվեցան իրարու լալով. Եղիսաբեթ ընկաւ ծնողաց գիրկը մընաց անխօս։ Սմօլօֆ հասաւ վրանին սիրտ տալով. Ահա ձեր մէկ հատիկ առաքինի զաւակն որ բերաւ ձեզի կայսերական պարգեւը. յաղթեց ամէն բանի ու ամէնն ալ շահեցաւ։

Այս խօսքերն ամենեւին անոնց ականջը չի մտաւ, եւ ոչ իսկ կրնային մտածել թէ ինչ շնորհք է. եւ ինչ աղէկութի. զի հարբածի նման իրարու երես կը նայէին անձայն ու միայն ազնիւ զաւակին փաթթըված կըզմայլէին։ Այնչափ միայն խելքերնին կը բերէր թէ եկաւ Եղիսաբեթ, ու իրենց գրկին մէջն է. գտան ու այլ չի պիտի թող տան. բոլորովին մոռցեր էին թէ ուրիշ բարի կրնայ ըլլալ աշխարհիս մէջ քան զայն, որ ունէին։

Երկար ժամանակ մնացին այսպէս իբր խելագար. երբեմն երբեմն բան մի կը խօ-

տեղին՝ որ ոչ կապ ունէր, և ոչ հետևանք ։ Կուզէին խօսելու հարցընելու, չէին կարնար բան բանի հետ կապելու. ապա սկսան լալ, նորէն սրտերնին փակվեցաւ կորուսին մտքերնին. զի գերազանց գութն ու ուրախութիւնը կապեց լեզունին ալ սրտերնին ալ. մինչ զի և ոչ կը տեսնէին Սմօլօֆ, որ զարմանալով կը նայէր երեսնին. ու չէր գիտէր թէ այս ինչպիսի բան է, և ինչ զօրաւոր կիրք է ։ Վերջապէս Սմօլօֆ վախցաւ թէ բանի մի չի գան սաստիկ ուրախութենէն, վազեց քովերնին ընկաւ ոտքերնին սկսաւ սիրտ տալ, որ արթըննան, ու շնորհակալ ըլլան ստեղծողին, որ այսչափ մեծամեծ շնորհքներով ողորմեցաւ իրենց, ու սիրական զաւակնին բերաւ հասուց իրենց գիրկը, պէտք է կասէր ուրախանալ, և մխիթարվիլ Աստուծով, չէ թէ կապվիլ մնալ չափազանց կիրքով և չի ճանչնալ երջանկութիւնը որ Աստուած տվաւ ձեզի ։

## ԾԷ. Պարգևուած ։

Երբոր քիչ մի իրենց կիրքը չափաւորեցաւ տեսան Սմօլօֆ պատանին, բարևեցին շնորհակալութիւնը ։ Ան ատենը համարձակեցաւ բարեսիրտ պատանին այսպէս խօսելու. Գիտնաք որ հիմա դուք ունիք մէկ զաւակէն աւելի. զի մինչև ցայժմ Եղիսաբեթ զիս իւր եղբայրը անուանեց ։ Սակայն երբոր եկաւ ձեր գիրկը հասաւ՝ ներեցէք ինձի որ ուրիշ անուն ալ արտաբե-

րեմ։ Եղիսաբեթ մեծ երախտագիտութ̃ բռնեց ծնողաց ձեռքն ասաց. Առանց այս եղբօրս բան մի կարող չէի անելու. կարելի է թէ հոս ալ չէի. զի սա տարաւ զիս կայսեր ոտքը. խօսեցաւ ինձի համար, և ձեր ազատութ̃ն առաւ. սա է որ բերաւ ձեր զաւակը ձեզի ամենայն քաղաքավարութ̃։ Ո՛վ մայր իմ ասա՛ ինձի ինչպէս պիտի յայտնեմ իմ երախտագիտութիւնս. ո՛վ հայր իմ սորվեցո՛ւր ինձի ինչպէս պիտի ազատիմ պարտքէս։ Փէօտօրա գգուելով սիրական դուստրը ասաց. Քու երախտագիտութ̃դ պիտի ըլլայ սէրը, անանկ՝ ինչպէս ես ունիմ հօրդ հետ։ Սփինձէր աղաղակեց. Պարգևը ազնիւ սրտիդ շատ վեր է քան զիմ բարերարութ̃ս քան որ կարենաս ըլլալ աւելի առատաձեռն։ Պարկեշտ կոյսը կարմըրելով չգիտէր ինչ պատասխանէ. զի այնպիսի բան երևակայութ̃ն չէր անցած, որ մնած էր քաջ առաքինութ̃ անապատի մէջ. մինչև այն ժամանակը պարզմտութ̃ ամէն բան կը հասկընար, ինչպէս որ ողջախոհ սորված էր։ Սակայն կը վախնար անհնազանդ երևնալու ծնողացն որ կը ջանային հաւանեցնել զաւակն որ Սմօլօֆին հաւանութ̃ տայ։ Ուստի Եղիսաբեթ համեստ նշան մի տվաւ թէ իւր կամքն համակերպած է նոյ̃ բարի կամացը. նոյ̃ կամքն ըլլայ։ Այս բանն որ լսեց ազնուական պատանին շնորհակալ եղաւ նոյ̃, և անոնց ե-

բախտագիտութեն որ խնդիրքը կատարեցին, ու հաւանեցան իրենց փեսայ անելու երախտաւոր Սմոլոֆը. ուստի անան կկարծեր, թէ այն կետին քան զինքն աւելի երջանիկ մարդ չի կայ աշխարհիս վրան. ուր չորսն ալ այս մոքով կուրախանային. ամենն ալ երջանկութեն կը փայլէին: Զարմանալի տեսարան եղաւ հոն. վսեմութի հօրն որ պարտական կը խոստովանէր ազատութենը համար. գորովական սեր մորը, համեստ առաքինութիւն դստերն, և սքանչելի սերը Սմոլոֆին:

Այն օրը և բոլոր գիշերը սիրալրական խօսքերով անցուցին. երբեմն պատմել կուտային Եղիսաբեթի գլխուն եկածները. երբեմն կուլային. և երբեմն ծնկան վրա գալով շնորհակալ կըլլային ով բարերարութենցը: Հետևեալ օրն առաւօտանց եկան պատրաստվեցան Տոպոլսքի երթալու մեծ իշխանին. բայց ամեն կողմ նայելով կը բարևէին այն տխրալի անապատին տեղերը. ուր տասներկու տարի մնացեր էին ողորմելի աքսորանաց մէջ: Սակայն միշտ Եղիսաբեթն իրենց աչքի առջևէն չէին հեռացներ՝ գորովական սիրով կը գգուէին. մինչև հասան Սամարա. ծնողքը կը ցցընէին զաւակին ուր տեղեր որ արտասուք թափեր էին, և որչափ ողբացեր էին իրեն համար. մանաւանդ մորը թափած արտասուքն եկեղեցւոյ մէջ:

Ասոնց տրտմութիւնը աւելի սաստիկ եղած էր մազերն առնելէն ետև, որ զրկեր էր Ճամբայէն. միշտ կուլային ու երեսնին քսելով կաղաղակէին թէ երբ պիտի տեսնենք։ Ահա այս ամէն կսկիծները նորոգեցան այն տրտմալի տեղերէն զատուելու ժամանակնին։ Այսպիսի տրտմախառն ուրախութեամբ հասան Կ.օպօլսի՝ մեծ իշխանը շատ մեծ պատուով զիրենք մեծարեց. մանաւանդ մեծ համարում ցցընելով կը պատուէր Եղիսաբեթն որ ծնողացը սիրուն համար այնչափ չարչարանք քաշեց Ճամբաներն ու զանոնք ազատեց։

Իսկ մեծն Սփինճէր կամ Ստանիսլաւս իւր քաղցր ամուսնոյն և զաւակին հետ միատեղ շնորհակալ եղան իշխանին բարեսիրութեանը, և զաւակին՝ Սմօլօֆ պատանոյն, որ այնչափ բարի սրտով հոգացեր էր Եղիսաբեթ, ու պատճառ եղեր էր իրենց ազատութեանը։ Այս բարեկամական խօսակցութիւնները դառնալով զարմանալի բերկրութեան վերջը կայացուցին, որ միան ոչ միայն անքակ բարեկամ, այլև խնամութեամբ ազգական ըլլան, ու անմահ սիրով կապվին իրարու հետ. ուստի Եղիսաբեթին ու Սմօլօֆին նշանին հանդէսը կատարեցին շատ մեծ ցնծութեամբ։ Թէպէտ Եղիսաբեթին աստիճանը, և ցեղին պատիւը շատ գերազանց էր, քան Սմօլօֆին. սակայն այս բարեսիրտ կորիճին առաքինի գործքը զինքն արժանի

տուաւ այս երջանկութեան, և այս մեծ պատուին. ինչպէս որ Եղիսաբեթ ալ կը մտածէր որ քան զայն արժանաւոր մարդ չի կար աշխարհիս վրայ իրեն համար ։

Ահա այսպիսի մեծապանծ ցնծութիւն բարով մնայ արին ոչ միայն մեծ իշխանին, որ իրենց ամենայն բանը հոգաց ըստ կայսերական հրամանին, այլև այն տրտմալի անապատներուն Սիպերիայի. ուսկից ելան հեռացան աքսորանաց խղճալի տեղերէն. փայլեցան պայծառացան մտնելով եւրոպական բարեշէն քաղաքներուն մէջ, և մօտենալով իրենց քաղցր հայրենեացն, նման արեգական ճառագայթներուն, որ երբ ամպերէն դուրս կելլեն աւելի պայծառ կը փայլին ։ Ո՜ արմանալի էր իրենց ջերմեռանդութիւնը. ամէն խօսքէն ետև թևերնին վեր վերցընելով շնորհակալ կըլլային ա̃յ. և ուր տեղ որ եկեղեցի և խաչ կը տեսնէին ճամբուն մէջ, վար կիջնէին երկրպագութիւն կանէին. մանաւանդ Եղիսաբեթ, որ հրեշտակի նման հոգևոր խօսքերով կը զուարճանար իւր սիրական ծնողաց, և բարեսէր Սմօլօֆին հետ մինչև հասան Պէթրպուրկ ։ Ուր երբոր ներկայացան կայսեր, բարեսիրտ կայսրը նայելով վրանին, որ 12 տարի այնչափ տառապանք քաշեր էին դառն աքսորանաց մէջ, շատ մեծ գութ ցցուց իրենց ու ամենայն պատուով պատուեց, և ամէն իրենց մեծութիւնը տուաւ, որ երջանկութեամբ ապրին աշխարհիս վրայ

Բարեպաշտ Ստանիսլաւս մեծաւ շնոր-
հակալութբ խոնարհեցաւ Աղեքսանդր կայ-
սեր աղօթք արաւ. նոյնպէս Փէօտօրա և
Եղիսաբեթ. ապա ելան իրենց համար պատ-
րաստուած պալատը գնացին նստան. ուր ա-
մէն մեծամեծք կերթային զիրենք պատուե-
լու: Բաւական հանգստանալէն ետև Ե-
ղիսաբեթին հարմնեց հանդէսը կատարե-
ցին: Որոնք ինչպէս որ կերևնայ՝ ինչվան հի-
մայ այսպիսի երջանկութբ իրենց մնացած օրը
կանցընեն բարի օրինակ ըլլալով աշխարհի՝
առաքինի քաղաքավարութեամբ, եղբայր-
սիրութբ, երախտագիտութբ և ածպաշ-
տութեամբ:

Տես ծնունդ մնաց քաջ հայրասիրին,
 տես գործ հիասքանչ սրտի դիւցազնին.
 չէ այս գիւտ հանճար ստեղծաբանին,
 այլ նոյն իսկ բնութե գործ խանդաղատին:
Ո՛չ գիտաց երբէք գիւտ բանաստեղծին,
 յիւր արուեստ յեղուլ զայսգործ բնածին.
 այլ այն եռանդուն սէր բնականին,
 խօսի նուագէ գործ մեծագործին:
Սէր որդիական խանդաղանք սրտին,
 գիտաց յայս ձգել զվեհ դիւցազնուհին.
 զի առաքինեայ չիք անհնարին,
 թէև անհնար կարծեսցի վատին:
Այսպէս կենդանի է բան Ճշմարտին,
 այսպէս սուր ազդու ձայն գործնականին.
 քաջաձայն խօսի այս վէպ չքնաղին,
 ձգէ սիրտ ոգի առ սէր սիրունին:

Դու պայծառ կուսան փառք Թագաւորմին,
յաղթող ախոյեան զամէն դժուարին.
զի՞րդ անվեհեր արկեր կեանս անգին,
'ի զոհ ծնողաց, որո՛ջ դեռածին:
Այդ անդամանդեայ սիրտ քո կաթոգին,
զի՞րդ ոչ բեկաւ 'ի ծանրագունին.
այն քնքուշ երակք այն ջիղք ջերմ ոգին,
ո՞րպէս ո՛չ լուծան յերկար վտանգին:
Մտեր յասպարէզ անբաւ արկածին,
մատնեցեր վշտաց սիրտ և թարմ մարմին.
Թողեր քաղցր հոգիդ 'ի ծոց ծնողին,
առեր հեռացար զհոգի, սիրտ նոցին:
Առաքինութ̃ին եցոյց քեզ դիւրին,
յոր մնեալ գտար 'ի ծայր հիւսիսին.
ծանրութ̃ի վշտաց ծանրոց բոլորին,
տանելի եղեն գթած քո սրտին:
Սառեալ սլացար սիրով ծնողին,
եդար 'ի կշիռ անկշիռ վշտին.
'ի ծագաց երկրի մինչ 'ի ծագ վերջին,
կոխեցեր անցեր տիօք դալարին:
Ո՛չ որք օգնական քոյդ ազնիւ սրտին,
ո՛չ որք ուղեկից յանկոխ ամային.
դու ընկեր օգնիչ ցաւած քո անձին,
նաև գութ ծնողաց օրհնութ̃ի վերին:
Զուարթուն ոգի քոյդ տիրականին,
բնաւ ոչ շիջաւ յանցից ցաւագին.
նազելի գնացք յաւերժահարսիդ,
զամէն վշտաբեր կոտորէր յոտին:
Ամբիծ աղաւնի թեւօք թեթեւին,
յառաքինութ̃եց բարձրացար լերին.

գտեր զհաշտութեան ազնիւ ձիթենին ,
բերեր զայն ծնողացդ 'ի փրկանս անձին :
Դու միակ տիպար չքնաղագունին ,
մեծապանծ քարոզ յաղթս յաւիտենին .
Թո՛ղ 'ի քէն ուսցին ազգք կանանցածին ,
յառաքինութեանց ճոխանալ պատուին :
Ի՝է կրթականօք բերցին առ բարին ,
անշարժ անսաղաղ ձգեալ 'ի կետին .
ուսմամբ և սիրով կրկնակի թեւօք ,
անդ 'ի ծայր լերին փառօք վերբերին :
Յայնժամ աջ հզօր ամենակալին ,
լինի ուղեցոյց ընթացից նոցին .
վերբերեալ 'ի ծագ հոգեշարժ տենչին ,
յանծայր բերկրանաց հրճուիլ 'ի բարին :

## ՎԱԽՃԱՆ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Биб...
7/[illegible] 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ՑԱՆԿ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

---

Ա. Գլուխ.

Վարժութիւն գրոց, և հեգելոյ։ 5

Բ. Գլուխ.

Վարժութիւն խօսք կապելոյ։ 15

Գ. Գլուխ։

Վարժութիւն բարոյական գործոյ։ 26

Դ. Գլուխ.

Վարժութիւն հայոց պատմութեան։ 37

Ե. Գլուխ.

Վարժութիւն աստուածաշունչ պատմութեան։ 59

Զ. Գլուխ.

Վարժութիւն եկեղեցական պատմութեան։ 87

Է. Գլուխ.

Վարժութիւն ուսումնական գիտելեաց։ 114

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԻՆԻ ՕՐԻՆԱԿԱՑ


| | | |
|---|---|---|
| Ա. | Իմաստութիւն. | 142 |
| Բ. | Աշխատասիրութիւն. | 144 |
| Գ. | Հնարագիտութիւն. | 145 |
| Դ. | Խորատեսութիւն. | 147 |
| Ե. | Աղքատութիւն. | 150 |
| Զ. | Հիւրասիրութիւն. | 152 |
| Է. | Ջանասիրութիւն. | 154 |
| Ը. | Ամաչկոտութիւն. | 156 |
| Թ. | Արդարութիւն. | 157 |
| Ժ. | Հնազանդութիւն. | 159 |
| ԺԱ. | Անյիշաչարութիւն. | 162 |
| ԺԲ. | Աղքատասիրութիւն. | 165 |
| ԺԳ. | Մարդասիրութիւն. | 169 |
| ԺԴ. | Օնաշական կերպ. | 172 |
| ԺԵ. | Հայրասիրութիւն Ելիսաբեթի. | 178 |